Լուսաբեր

1985

Ե

ԽԲ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վաղարշապատ

1985

ԱՅԴԱՐԱՆ
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՔԱՌԱՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՍՍՀՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Մոսկվա

Ձերդ Սրբություն,

Հույժ հաճելի է Մեզ սույն գրով եղբայրական սիրով ողջունել Ձերդ Սրբությունը և ներկայացնել Մեր խոհերը Հայրենական պատերազմի հաղթական ավարտի քառասնամյակի առթիվ:

Հայրենական պատերազմի հաղթանակը, Մեր կարծիքով, պատմության արձանագրած մեծագույն հաղթանակն է հանուն ազատության և արդարության, հաղթանակ, որի համար ռուս ժողովուրդը և սովետական եղբայրական ազգությունները վոհեցին ավելի քան քսան միլիոն իրենց վավակներից:

Նրանց անմոռաց հիշատակը վստահ ենք, թե խոր հարգանքով ու երախտագիտությամբ պիտի ոգեկոչեն հառաջիկա տարի, Սովետական պետությունն ու սովետական հասարակությունը, ինչպես և մեր եկեղեցիները:

Ձեն մոռացվելու երբեք վոհված հերոսները:

Ձեն մոռացվելու ոճրագործները:

Հայրենական Մեծ հաղթանակի քառասնամյակի տոնակատարումը կխորհինք, թե մասնավոր այժմեականություն ունի մեր օրերում: Մարդկությունը

պարտի հիշել երկրորդ համաշխարհային պատերազմը սանձազերծող հիտլերյան ֆաշիզմը, պարտի հիշել նրա կատարած ահավոր ոճիրներն ու ավերումները, նրա պատճառած մարդկային սահմռկեցուցիչ տառապանքները:

Այո՛, մարդկությունը այսօր պարտի հիշել այս բոլորը, որպեսզի պատերազմ կոչվող հրեշը այլևս երբեք չկարողանա իր աշխարհակործան մեքենան լարել խաղաղասեր ազգությունների դեմ:

Ահա այս մտորումներով, Մենք կդիմենք Ձերդ Սրբության, առաջարկելով, որ Ձեր հարմար դատած ձևով հառաջիկա տարի Ձեր բարձր հեղինակությամբ հրավեր ուղղեք մեր քույր եկեղեցիներին և կրոնական կազմակերպություններին, որ հարմար մի թվականի միատեղ աղոթենք հայրենիքի փրկության համար զոհված մարտիրոսների հոգիների համար ու նաև մի հանդիսավոր նիստ գումարենք՝ բարձր հնչեցնելու համար մեր բոլորիս խոսքը հանուն աշխարհի խաղաղության ամրապնդման, հանուն ժողովուրդների համերաշխ գործակցության:

Մեր սիրտը բացեցինք Ձեզ, սիրեցյալ Եղբայր Մեր, վստահ լինելով, որ Ձերդ Սրբությունը ևս այս օրերին նույն խոհերով և ապրումներով տոգորված է:

Թող Բարին Աստված Ձեզ մնա միշտ օգնական ու մարտակից:

Եղբայրական սիրո ողջագուրումով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 սեպտեմբեր 1984 թ.

ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԻՆ՝ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՔԱՌԱՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Մենք գտնվում ենք Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ Մեծ հաղթանակի 40-ամյակի նշանավոր տարեդարձի շեմին:

Հայտնի է, որ Սովետական Միությունը դարձավ այն հիմնական ուժը, որը կասեցրեց գերմանական ֆաշիզմի երթը դեպի համաշխարհային տիրապետություն և որոշիչ դեր ունեցավ հիտլերյան Գերմանիայի ջախջախման գործում: Սովետական Միությունը իր ուսերի վրա կրեց այս պատերազմի հիմնական ծանրությունը:

Անսահման էր զոհաբերությունը, որ մատուցեց սովետական ժողովուրդը այդ ծանր տարիներին՝ իր Հայրենիքը փրկելու համար: Մեր վիշտը խորն է մարտերում ընկած մեր հայրենակիցների և մեծ հայրենականում Սովետական Միության բոլոր զոհվածների համար: Պատերազմը մեր երկրի որդիների ու դուստրերի ավելի քան 20 միլիոն կյանք խլեց: Մենք հավատում ենք, որ ջնորհակալ սերունդների սրտերում միշտ կենդանի կլինի բոլոր զոհվածների հավերժական հիշատակն ու աղոթքը՝ նրանց հոգիների հանգստի համար:

Ձերդ Սրբություն, կրոնական և հայրենասիրական պարտքը թելադրում է մեզ՝ մեր նպաստը բերել Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 40-ամյա տարեդարձը արժանավայել դիմավորելու գործին: Ճիշտ այդպիսի բարձր հայրենասիրական զգացումներով լի էր Ձերդ Սրբության ուղերձը, որով դուք առաջարկում եք կազմակերպել Սովետական Միության կրոնական

գործիչների մի հանդիպում, որպեսզի համատեղ աղոթք կատարենք պատերազմում զոհված բոլոր մարտիկների հոգու հանգստյան համար և կրկին ձայն բարձրացնենք հոգուտ խաղաղության և խաղաղասեր ուժերի համագործակցության ամրապնդման:

Լիովին համամիտ լինելով այդ վեհանձն գաղափարին, ես առաջարկում եմ իրագործել ՍՍՀՄ-ի Եկեղեցիների և կրոնական համայնքների պետերի ու ներկայացուցիչների մի հանդիպում, նվիրված Մեծ հաղթանակի 40-ամյակին՝ գալիք հոբելյանի նախօրեին:

Այդ հանդիպումը կարելի է կազմակերպել ս. թ. ապրիլի 17—19-ը:

Ապրիլի 17-ին, չորեքշաբթի օրը, մենք՝ մասնակիցներս, կհարգենք հայրենիքի փրկության համար ընկած մեր եղբայրների ու քույրերի հիշատակը՝ ծաղկեպսակ դնելով Մոսկովյան Կրեմլի պարիսպների տակ գտնվող անհայտ զինվորի հուշարձանին:

Ապրիլի 18-ին, հինգշաբթի օրը, մենք կարող ենք եղբայրական բանակցություններ ունենալ Մոսկվայի մոտ Զագորսկի Ս. Տրոյից—Սերգիևյան վանքում: Այնտեղ մենք կարող ենք մտքեր փոխանակել Մեծ հաղթանակի, նրա դասերի ու մեր երկրի բոլոր հավատացյալների, ինչպես նաև մեր բոլոր քաղաքացիների առջև ծառացած խնդիրների մասին՝ սրբազան պարգևը՝ կյանքը փրկելու համար ատոմային աղետից:

Մեր հանդիպման ավարտին մենք կարող ենք դիմում ուղղել աշխարհի բոլոր հոգևոր գործիչներին և ուղերձ՝ մեր կառավարության ղեկավարությանը, որոնցում կարտահայտենք խաղաղության մեր սպասումները, մեր մտածումները՝ աշխարհի բոլոր ժողովուրդների ու պետությունների միջև կայուն և արդար խաղաղության հասնելու ուղիների և միջոցների մասին:

Ես ուրախ կլինեի ժողովից հետո մեր հանդիպման մասնակիցներին հրավիրել եղբայրական ճաշկերույթի Ս. Տրոյից-Սերգիևյան վանքի պատրիարքական սեղանատանը:

Այս բարի նպատակի համար սիրով հրավիրում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, Ձեր Եկեղեցու մեկ կամ երկու ներկայացուցիչների հետ ժամանել Մոսկվա և մասնակցել Սովետական Միության եկեղեցիների և կրոնական համայնքների պետերի ու ներկայացուցիչների հիշարժան հանդիպմանը: Մոսկվայում և Զագորսկում եղած ժամանակ Դուք և Ձեր ներկայացուցիչները կլինեք մեր թանկագին հյուրերը:

Ես շատ գոհ կլինեմ, Ձերդ Սրբություն, այս հրավերի առթիվ ստանալ Ձեր պատասխանը Ձեր ուղեկիցների ու գործակիցների անուններով:

Թող օրհնյալ լինի մեր եղբայրական համագործակցությունը, որով օժտում ենք մեր գործերը՝ մեր մեծ հայրենիքի բարօրության, խաղաղության ամրապնդման և բոլոր ժողովուրդների միասնության համար:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՊԻՄԵՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ
ՌՈՒՍԻՈ

Մոսկվա,
19 մարտ 1985 թ.
№ 733



ՍՍՀՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 40-ԱՄՅԱԿԻՆ

1985 թվականի ապրիլի 17—19-ը Մոսկվայում և Զագորսկում տեղի ունեցավ ՍՍՀՄ քրիստոնեական եկեղեցիների և կրոնական այլ հարանվանությունների պետերի ու ներկայացուցիչների համաժողով՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովուրդների՝ գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 40-ամյակին: Համաժողովը տեղի ունեցավ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի առաջարկով և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հրավերով: Համաժողովին մասնակցեցին Ռուս և Վրաց Պրավոսլավ, Հայաստանյայց Առաքելական, Ռուս Հնածեսյան, կաթոլիկ, բողոքական և ռեֆորմիստական եկեղեցիների, ինչպես նաև մահմեդական, բուդդայական և հրեական կրոնական կազմակերպությունների շուրջ 90 ներկայացուցիչներ:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համաժողովին իր մասնակցությունը բերեց Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի և Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի ուղեկցությամբ:

Ապրիլի 16

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Մոսկվայի **«Դոմոդեդովո»** օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը, Կրուտիցկու և Կոլոմենսկու միտրոպոլիտ Յուվենալին և Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջ-

նորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը: Վեհափառ Հայրապետին դիմավորողների մեջ էր նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի ներկայացուցիչ Է Ս. Գալստյանը:

Ապրիլի 17-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի և Տ. Անանիա եպիսկոպոսի ուղեկցությամբ այցելեց Ս. Դանիել իշխանի անվան վանքը, որը սովետական կառավարության բարեհաճ կարգադրությամբ վերջերս վերադարձվել է Ռուս Եկեղեցուն: Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի նախաձեռնությամբ իրականացվում են հսկայական վերանորոգման աշխատանքներ ԺԳ դարի այս նշանավոր վանքի յոթ եկեղեցիներում: Վանքի պատմության մասին ընդարձակ տեղեկություններ տվեց վանքի տնտես Եվլոբի վարդապետը: Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը վանքի նորակառույց սեղանատանը նախաճաշ տվեց Վեհափառ Հայրապետի պատվին: Նախաճաշին ներկա էր նաև Վրաց Իլիա Բ կաթողիկոս-Պատրիարքը: Նախաճաշի ընթացքում երեք Հայրապետների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

Ժամը 16.00-ին համաժողովի 90 մասնակիցները բազմաթիվ հյուրերի և թղթակիցների ուղեկցությամբ հարգանքի ծաղկեպսակ դրեցին Կրեմլի պատի տակ գտնվող Անհայտ Զինվորի գերեզմանին:

Երեկոյան ժամը 7-ին «Սովետսկայա» հյուրանոցի դահլիճում տեղի ունեցավ եղբայրական ընթրիք: Ընթրիքի սեղանն օրհնեց Վեհափառ Հայրապետը և առաջարկեց բաժակ բարձրացնել հյուրընկալ՝ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի առողջության և արևշատության համար: Ընթրիքն անցավ եղբայրական ջերմ մթնոլորտում: Համաժողովի մի շարք մասնակիցներ հանդես եկան խաղաղասիրական բարի մաղթանքներով:

Ապրիլի 18-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9-ին, համաժողովի մասնակիցները Մոսկվայից մեկնեցին Զագորսկ, որտեղ և Տրոյից-Սերգիևյան վանքում տեղի պիտի ունենար Մեծ Հայրենականի 40-ամյակի հանդիսությունը:

Հոգևոր ակադեմիայի հանդիսության դահլիճում համաժողովը բացվեց Մոսկվայի և համայն Ռուսիո Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի վեկուցումով: Ն. Սրբությունը նախ և առաջ շնորհակալություն հայտնեց Ազգիս Վեհափառ Հայրապետին սույն հավաքի կազմակերպման առաջարկը ներկայացնելու համար և ապա հրավիրեց հոտնկայս աղոթել Սովետական Միության ժողովուրդների 20 միլիոն զոհերի հիշատակին, որոնք ընկան Հայրենական մեծ պատերազմում: Հետո բանախոսն անդրադարձավ Եկեղեցիների պատերազմի օրերի գործունեությանը, որով նրանք իրենց լուման ներդրեցին մեծ հաղթանակի ապահովման համար: Խոսելով Սովետական Միությունում գործող Եկեղեցիների համագործակցության մասին, Սրբազան Պատրիարքը հատուկ կարևորությամբ ընդգծեց այն փաստը, որ 1952 թվականին, առաջին անգամ, երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի առաջարկությամբ տեղի ունեցավ Սովետական Միության մեջ գործող Եկեղեցիների և կրոնական հարանվանությունների ներկայացուցիչների ընդհանուր հանդիպում-համաժողովը:

Ապա բանախոսը կանգ առավ ներկա ժամանակների քաղաքական լարված կացության վրա և խորը համոզում հայտնեց, որ ամբողջ աշխարհի կրոնական գործիչները իրենց արդյունավետ գործունեությամբ կարող են թուլաց-

նել միջազգային լարվածությունը: Բոլոր եկեղեցական և կրոնական կազմակերպությունները պետք է միահամուռ գործակցությամբ քաջալերեն ընդհանուր վինաթափման ձգտումներն ու խաղաղության հաստատման աշխատանքները:

Ն. Սրբություն Պիմեն Պատրիարքից հետո խոսքը տրվում է Ամենայն Հայոց Հայրապետին:

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայրներ Մեր,

Այս օրերին մենք հավաքվել ենք այստեղ հրավերովը ռուսաց Մեծ Եկեղեցու հովվապետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի, իբրև սգակիրներ, աղոթելու սովետական ազգությունների ավելի քան քսան միլիոն զոհերի համար, որոնք իրենց կյանքը քաջությամբ նվիրաբերեցին հանուս հայրենիքի փրկության, հանուն իրենց կյանքի ապատության:

Մենք երախտապարտ ենք Մեր հարգարժան եղբորը՝ Պիմեն Սրբազան Պատրիարքին, որ մեզ բոլորիս ընծայում է մխիթարական այս սուրբ պահը:

Թող Աստված հավետ լուսավոր պահպանի հիշատակը անմեղ նահատակների և քաջարի հերոսների, ու նրանց հոգիները արժանացնի երկնային հավերժական կյանքի անթառամ պսակին:

Առաջին համաշխարհային պատերազմից հավիվ քսան տարի հետո, ի՞նչպես եղավ, որ սկիզբ առավ մի նոր պատերազմ՝ բազմապատիկ ահարկու:

Ես հիշում եմ պատերազմը և նրան նախորդող տարիները, այն ժամանակ ես Ռումինիայում էի: Մանավանդ 1933 թ. սկսած ողջամիտ և խաղաղասեր շատ մարդիկ զգում էին մոտեցող վտանգը, տեսնում էին կուտակվող փոթորիկի նախանշանները: Բազմաթիվ պատասխանատու անձինք թե՛ Սովետական Միության մեջ և թե՛ Արևմուտքում, նաև հենց Գերմանիայում, կանխագուշակում էին փոթորիկը և իրենց ձայնն էին բարձրացնում ընդդեմ մութ ուժերի: Ավաղ, սակայն, կային նաև լայն շրջանակներ և պետական ղեկավարներ՝ Արևմուտքում, որոնք արբեցած թունավոր գաղափարախոսությանց օպյումով կամ անխոստովանելի շահերով, ուղղակի կամ անուղղակի կերպով քաջալերում էին հիտլերյան նացիզմը:

Ես հիշում եմ կարդացած լինել գնդապետ Ա. Գ. Մայերսի հրատարակած մի հոդվածը 1933 թ. սեպտեմբերի 18-ին «Թայմզ» լոնդոնյան թերթում, որի մեջ հատկանշական էր հետևյալ պարբերությունը՝

«Կասկած չկա այլևս, որ Եվրոպայում կա մի կատաղած շուն: Պետք է խոստովանել, որ մենք՝ անգլիացիներս ու առավել ևս Ֆրանսիան, միգուցե որոշ չափով մասնակից ենք եղել այն հանցանքին, որ այդ շունը կատաղել է: Սակայն եթե այժմ նրա առաջը չառնվի, և այն էլ արագ կերպով, կարճ ժամանակ անց կատաղած շունը կվերածվի գազանացած վտանգավոր վագրի»:

Ինչքա՜ն զգայացունց է հնչում այսօր էլ, անգլիացի գնդապետի այդ ողբերգական մարգարեությունը:

Եվ այսպիսով, կատաղած շունը իր գործը կատարեց: Զոհվեցին հիսուն միլիոն մարդիկ, ավերվեցին երկրներ, քաղաքներ, հրկիզվեցին վանքեր ու եկեղեցիներ, անթիվ ու անհամար: Կորստի մատնվեցին սրբազան գանձեր, քա-

ղաքակրթության հուշարձաններ և մշակութային արժեքներ: Պատմության մեջ չտեսնված գազանությամբ, հիտլերյան «ասպետներ»-ը հապարավոր երեխաների, կանանց ու ծերունիների մարմինները ողջ-ողջ հրկիզեցին հատուկ պատրաստված փոռերի մեջ:

Այսօր, սարսուռով ենք հիշում այս վարհուրելի արարքները և կրկին անգամ հարց ենք տալիս, թե ինչպե՞ս է, որ փնարավոր դարձան այդ բոլոր բարբարոսությունները: Այդ օրերին գուցե միայն մենք՝ հայերս հիշեցինք 1915-ի սև տարին, երբ Օսմանյան կայսրության ձեռամբ կատարվեց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանի մոտ երկու միլիոն հայ խաղաղ ազգաբնակչության, ցեղասպանություն, որ մի տեսակ նախաբանը հանդիսացավ հիտլերյան ցեղասպան բազմապատիկ ոճիրների:

Սակայն ինչքան կատաղի ու անխիղճ եղավ հիտլերյան արյունարբու ֆաշիզմը և ինչքան վոհեր լափեց ու ավերումներ գործեց, այնքան հզոր եղավ հակահարվածը, այնքան ուժգին դարձավ մարդկային խղճի զարթոնքը, այնքան հաղթական հնչեց արդարության շեփորը:

Եվ ի վերջո, հիտլերյան հրեշի յոթ գլուխները ջախջախվեցին միասնական հերոսական մարտերովը ազատատենչ ժողովուրդների և մանավանդ ռուս մեծ ազգի ու խորհրդային հանրապետությանց ազգությունների:

Հայ ժողովուրդը ևս, խորհրդային եղբայր ազգությունների կողքին նույն անձնվիրությամբ, նույն ոգեշնչումով իր որդիների արյունը վոհաբերեց անսակարկ կերպով՝ ի խնդիր հայրենական մեծ հաղթանակի:

Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսը, 1941 թ. հուլիսի 30-ի իր պատմական կոչով դիմել էր ողջ հայությանը՝ ահազանգելով, թե՝ «Հանդես է եկել մի նոր բիրտ ուժ, գերմանական ֆաշիզմը, որ հակառակ է ազատության, թշնամի է քրիստոնեության, կրողն է բռնապետության, ավերողը ժողովուրդների ստեղծած նյութական ու մշակութային արժեքների: Հենց այդ բիրտ ուժն է, որ նենգաբար ներխուժել է մեր երկիրը, ավեր ու մահ բերելով իր հետ»:

Հայ մարտիկները մասնակցեցին գրեթե բոլոր ահեղ մարտերին՝ Կերչից մինչև Վոլգայի և Բալթյան ծովի ափերը ու մինչև Բեռլին, տալով ավելի քան երկու հարյուր հիսուն հազար զոհեր: Նաև Արևմտյան Եվրոպայի ռազմաճակատներում, դաշնակից պետությանց զինվորների շարքերում և հակաֆաշիստ դիմադրական շարժումներում, մանավանդ Ֆրանսիայում, Հունաստանում և Բուլղարիայում մեր Եկեղեցու հազարավոր զավակներ իրենց կյանքը նվիրաբերեցին ի խնդիր փրկարար հաղթանակի: Իսկ արտասահմանյան երկրներում ապրող Հայ Եկեղեցու զավակները պատասխանելով Սուրբ Էջմիածնից Գևորգ արքեպիսկոպոսի կոչերին, մի մարդու նման կանգնեցին մայր հայրենիքի կողքին ու իրենց պարտքը կատարեցին խորհրդային ռազմական ուժին նվիրելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուները:

«Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին» (Մատթ. Ե 4). այո՛, իրապես մեր Եկեղեցիներն ու ժողովուրդները մխիթարվեցին մեծ հաղթանակի պտուղներով: «Մահը խափանվեց հաղթանակով» (Ա Կորնթ. Ե 55): Ինչքան տառապալից եղան պատերազմի տարիները, այնքան ցնծալի եղավ աշխարհասասան հաղթանակը:

Այսօր արժան է երկյուղած երախտագիտությամբ ոգեկոչել հիշատակը հայրենական պատերազմի բոլոր ծանոթ ու անծանոթ հերոսների և աղոթել նրանց արիացյալ հոգիների լուսավորման համար, որոնք իրենց կյանքը զո-

հաբերեցին հանուն հայրենիքի, հանուն ազատության և հանուն ապագա խաղաղ ու անվտանգ կյանքի արշալույսների:

Այո՛, այդ էր վերապրողների համոզումը քառասուն տարի առաջ, թե այլևս ո՛չ մի պատերազմ չի մթագնելու մեր երկրագնդի երկինքը, թե այլևս ո՛չ մի ազգություն սուր չի բարձրացնելու ուրիշ ազգի վրա, թե այլևս ո՛չ մի մայր չի ողբալու իր զավակի կորուստը: Այդ երդմանքով, ա՛յդ հավատքով էլ կնքվեց Միացյալ Ազգերի Կազմակերպության մեծ ուխտը:

Հայրենական Մեծ հաղթանակի քառասնամյակի ոգեկոչման այս օրերին կարծում եմ, թե հրամայական պարտականությունն է բոլոր Եկեղեցիների, աշխարհի բոլոր մեծ ու փոքր ազգերի, օրենքից դուրս հռչակել պատերազմը և խորտակել նրա բոլոր գործիքները մահվան, որպեսզի չլինի թե կարողանա կրկին բարձրացնել իր գլուխը աշխարհակործան հրեշը մարդակեր, և որպեսզի բոլոր ռազմամոլները հիշեն Հիսուսի պատգամը՝ «Դարձո սուր քո ի տեղի իւր, զի ամենեքեան որ սուր առնուցուն, սրով անկանիցին» (Մատթ. ԻՁ 52):

Սիրեցյալ եղբայրներ Մեր, ահա թե ինչու այսօր ես այստեղ եմ գտնվում: Ես կամենում եմ իմ Եկեղեցու ձայնը միացնել ձեր խոսքին, մաղթանքով, որ մեր օրերում պետությունների ղեկավարները վերջ տան ուժի դիրքերից սպառնալիքներին ու մոտենան իրար իբրև խաղաղության ճարտարապետներ:

Վստահ եմ, ձեզանից ամեն մեկը, ով ունի իր Եկեղեցին, իր ժողովուրդը և իր հայրենի հողը, չի կարող ծանրորեն չմտահոգվել մեր օրերում ստեղծված միջազգային գերլարված կացության առաջ, իբրև հետևանք անսանձ սպառազինումների և տեղադրման ատոմական զենքերի ու հրթիռների, որոնք ուղղված են մեր բոլորիս դեմ, մեր Եկեղեցիների դեմ, մեր ժողովուրդների կյանքի դեմ և որոնք նույնիսկ սպառնում են կոսմոսը վերածելու քաոսի:

Նաև Հայ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի սրբազան աղոթքն է ու խղճի հրամայականը՝ ընդհանուր զինաթափումը և ամրապնդումը աշխարհի խաղաղության, համերաշխ գործակցությամբը բոլոր պետությունների, արդարության և խաղաղության ավետարանական սկզբունքների լույսի ներքո, սկզբունքներ, որով ոգեշնչված են մեր երկրի բոլոր ժողովուրդները, բոլոր սովետական մարդիկ:

Ո՛չ մի պետական շահ, ո՛չ մի գաղափարախոսություն, ո՛չ մի դասակարգային մրցակցություն, ո՛չ մի կրոնական հավատամք չեն կարող արդարացնել սպառազինումների վազքը և պատերազմների սպառնալիքները:

Ով իր հոգու մեջ կրում է Քրիստոսին, թող հրապարակ իջնի ազատ ու համարձակ, ի պաշտպանություն «խաղաղության Ավետարանի», ի պաշտպանություն աստվածապարգև կյանքի: «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»: Ամեն:

Վեհափառ Հայրապետից հետո ելույթ ունեցան համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը, Միջին Ասիայի և Ղազախստանի հոգևոր վարչության նախագահ Բաբախանովը և Էստոնիայի լութերական Եկեղեցու պետ դոկտոր Էդգար Հարքը:

Երկրորդ նիստում խոսքով հանդես եկան Լատվիայի Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս Վալենտին Զոնդերսը, Բուդդայական Կենտրոնական Խորհրդի, Համամիութենական Ավետարանական Եկեղեցու, Կովկասի Շեյխուլիսլամի ներկայացուցիչը, Հնածեսների կենտրոնական կոմիտեի և Ռեֆորմիստների ներկայացուցիչները, որոնք ընդգծեցին Մեծ հաղթանակի կարևորությունը ոչ

միայն իրենց ժողովուրդների կյանքում, այլև համայն մարդկության խաղաղ ապագայի համար:

Վերջում համաժողովի մասնակիցների անունից կոչեր հղվեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանն ու աշխարհի կրոնական բոլոր գործիչներին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանն ուղղված ուղերձում ի միջի այլոց ասվում է. «Մենք՝ ՍՍՀՄ Եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների պետերն ու ներկայացուցիչները, որոնք Տրոյից-Սերգիևյան վանք են եկել Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի հրավերով՝ մասնակցելու Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 40-ամյակին նվիրված համաժողովին, ողջույնի ջերմագին խոսքով դիմում ենք Գերագույն սովետի նախագահությանը մեր հայրենիքի և ողջ մարդկության համար նշանավոր այս իրադարձության առիթով:

Մենք՝ հավատացյալներս, սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին խնդությամբ ենք խորհում Մեծ հաղթանակի մասին, որն աշխարհը փրկեց ֆաշիզմից:

...Սիրով և անսպառ երախտագիտությամբ ենք մտածում մեր հայրենակիցների մասին, որոնց մարտիրոսական սխրանքներով ձեռք բերվեց այդ հաղթանակը: Մեկ համար միշտ սուրբ է լինելու հիշատակը քսան միլիոն սովետական մարդկանց, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին մեր հայրենիքի և ողջ մարդկության փրկության համար: Սուրբ պահելով զոհերի հիշատակը, մենք գիտակցում ենք մեր պարտքը նրանց առաջ. պահել և պահպանել խաղաղությունը Եվրոպայում և ամբողջ աշխարհում:

...Մենք՝ Սովետական Միության կրոնական գործիչներս, աշխատում ենք տարբեր երկրների պետական, հասարակական և կրոնական ղեկավարների գիտակցության մեջ ամրապնդել այն գաղափարը, որ ապգությանց քաղաքական և ընկերային հայացքների տարբերությունը պետք չէ արգելք հանդիսանա ժողովուրդների խաղաղ կյանքին ու արդյունավետ համագործակցությանը, որպեսզի միասնական ճիգերով պահպանվի ամենանվիրական պարգևը՝ կյանքը:

Աշխարհի կրոնական գործիչներին ուղղված ուղերձում հատկապես ասվում է. «... Քառասուն տարի է անցել այն ժամանակից, երբ վերջացավ մարդկության պատմության ամենասարսափելի, ամենաարյունահեղ պատերազմը: Մենք սրտի դողով ենք հիշում այն ողբերգությունը, որ ապրեցին աշխարհի շատ ժողովուրդներ: Խոր վշտով և անսպառ երախտագիտությամբ ենք մտածում այն մեծ մարտիրոսության մասին, որ ունեցավ սովետական ժողովուրդը: Քսան միլիոն մարդկային կյանք, կաղերի, այրիների և որբերի բազմաթիվ միլիոններ, հարյուրավոր քանդված քաղաքներ, տասնյակ հազարավոր այրված գյուղեր, կործանված պատմական և մշակութային հուշարձաններ: Հնարավո՞ր է արդյոք թվել բոլոր կորուստներն ու չափել տառապանքների խորությունը, որ մեր ժողովուրդը կրեց պատերազմի ժամանակ:

...Կրոնական գործիչներիս պարտքն է՝ բոլոր բարի կամեցող մարդկանց հետ պայքարել մեր Երկիր մոլորակը ատոմային ամբողջական այրման վտանգից ազատելու համար:

Մարդկությունը ատոմային աղետից փրկելու և պետությունների միջև հարաբերությունների բարելավման առաջին քայլերը կարող էին լինել՝ ա. Բոլոր ատոմային զենք ունեցող պետությունները պարտավորություն վերցնեն, որ իրենք առաջինը չեն գործածի այդ զենքը, բ. Բոլոր երկրները համաձայ-

նագիր ստորագրեն, որ չեն տարածելու ատոմային զենքը, գ. Ընդունվի միջազգային համաձայնագիր, որով արգելվի տիեզերական տարածության օգտագործումը ռազմական նպատակների համար, դ. Ատոմային զենքերի ներկա մակարդակի ամբողջական սառեցում, որպես նախաքայլ՝ դրանք կրճատելու, ապա և ոչնչացնելու, ե. Աշխարհի բոլոր մասերում, որտեղ դա հնարավոր է, հայտարարել ապաատոմայնացված ջրջաններ:

Փաստաթղթերը ստորագրեցին Եկեղեցիների և համայնքների բոլոր պետերն ու ներկայացուցիչները:

Համաժողովը փակվեց միատեղ աղոթքով:

Հավարտ համաժողովի Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Պիմենը Տրոյից-Սերգիևյան վանքի սեղանատանը պաշտոնական ճաշկերույթ տվեց ի պատիվ համաժողովի մասնակիցների՝ նախագահությամբ Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էր նաև ՍՍՀՄ կրոնական գործերի խորհրդի նախագահ Կ. Մ. Խարչևը:

Ապրիլի 20

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Մոսկվայից մեկնեց Երևան: Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, Կրուտիցկու և Կոլոմենսկու միտրոպոլիտ Յուվենալին, ուրիշ հոգևորականներ և պաշտոնական անձինք:

ԹՂԹԱԿԻՑ



Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ ՈՒՂՂԵԱԼ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
(2 մայիս 1985 թ.)

Ինչպէս ամէն տարի, նաև այսօր ուրախ ենք Մեր հայրապետական ողջոյնը առաքելու ձեզ բոլորիդ, որ հրաւէրովը Ձեր բարեջան առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի հաւաքուած էք մասնակցելու ձեր տարեկան Համագումարին, առաջադրանքով որ ամփոփէք արդիւնքները անցնող տարեշրջանի ձեր կրօնական, դաստիարակչական ու կազմակերպչական գործունէութեան և վերանորոգուած եռանդով կազմէք Ձեր յառաջիկայ աշխատանքներու ծրագիրը յառաւել հոգևոր շինութիւն ձեր հաւատացեալ ժողովուրդի:

Այս երջանիկ առթիւ Մենք կը մաղթենք ձեզ մշտատև ներշնչանքներ ու աշխատանքի կորով, որպէսզի միախորհուրդ ու միակամ, շարունակէք Ձեր աստուածահաճոյ առաքելութիւնը ի մխիթարութիւն մեր հաւատաւոր ժողովուրդին:

Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն և Մեր հայրական սրտէն բոլորիդ Մեր օրհնութիւնները, Մեր քաջալերանքը, Մեր բարի մաղթանքները:

Թող նախախնամողն Աստուած իր կենարար հովանին միշտ տարածեալ պահէ Ձեր և ձեր եկեղեցեաց վրայ, պահպանելով վանոնք միշտ լուսառատ, միշտ շնորհաբաշխ:

«Զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ, որ սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն. և որ սերմանէ ի Հոգին, ի Հոգւոյ անտի հնձեսցէ զկեանս յաւիտենականս» (Գաղատ. Զ 8): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ ՈՒՂՂԵԱԼ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ (2 մայիս 1985 թ.)

Հայրական սիրով կ'ողջունենք Ձեր թեմական պատգամաւորական ժողովը ու կը բերենք Ձեզի ամենուդ Մեր ջերմագին գնահատանքը Ձեր ծաւալած հոգեշէն գործունէութեան համար, յառաւել պայծառութիւն Ձեր եկեղեցական-թեմական տիրախնամ կազմակերպութեան, հոգեշունչ առաջնորդութեանը ներքոյ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի:

Մեզի համար հոգեկան մխիթարութիւն է հաստատել կրօնական, կրթական և մշակութային մակարդակներու վրայ տարածուող Ձեր աշխատանքները եկեղեցական կեանքին մէջ, սերտ գործակցութեամբը Ձեր թեմական սրբազան առաջնորդի, ժրաջան հոգևոր հովիւներու և թեմական ու համայնքային վարչական բարեխնամ մարմիններու:

Մեր իղձն ու յորդորն է որ անցնող տարիներու ձեր փորձառութեանց լոյսի տակ, միախորհուրդ ու համերաշխ նախագծէք Ձեր գործունէութեան ծրագիրը յառաջիկայ տարիներու համար, յառաւել կօրացում ձեր եկեղեցական կազմակերպութեան, յառաւել ընդլայնում ձեր կրթական դաստիարակչական գործունէութեան, յառաւել ամրապնդում նոր սերունդներու կրօնական ու ազգային գիտակցութեան:

Մենք ջերմապէս կը գնահատենք ջինարար արդիւնքները ցարդ Ձեր կատարած իրագործումներուն, մաղթելով որ Տէրը Ձեզի պարգևէ մշտանորոգ եռանդ ու ներշնչանք, շարունակելու Ձեր առաքելութիւնը ի պայծառութիւն ձեր եկեղեցիներու և յառաւել ջինութիւն մեր ժողովուրդի հոգևոր կեանքի քրիստոսասէր ամերիկեան երկրի մէջ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն օրհնութիւն Ձեր վաստակին, Ձեր կեանքին ու Ձեր առաքելութեան:

«Պինդ կալցուք վխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն: Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց» (Եբր. Ժ 23—25): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խմբագրական

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԲԵՐԿՐԱՆՔԸ

1945 թվականի գարնանը հայ վինվորը տուն դարձավ հաղթանակի դափնեպսակով. հայրեր, ամուսիններ, կավակներ և դուստրեր շտապում էին տուն՝ հայրերին, կանանց, կավակներին և դուստրերին հաղթական գարնան ավետիսը տալու և վերակառուցելու իրենց հայրենի տունը՝ Հայրենիքը: Անցավ և այս փորձությունը:

Դեռ լրիվ չէին սպիացել Առաջին աշխարհամարտի խորունկ վերքերը, չէին խունացել 1915 թվականի եղեռնի արհավիրքի հիշողությունները, երբ հայ մարդը ստիպվեց թողնել իր խաղաղ, ստեղծարար աշխատանքը և գնալ, մասնակցել իրեն պարտադրված պատերազմին:

Բայց այս պատերազմը տարբեր էր հայ վինվորի ու մարտիկի մղած բոլոր պատերազմներից՝ իր դարավոր և հաճախ արյունալի պատմության ընթացքում: Ո՛չ այն պատճառով, որ թշնամին նախահարձակ էր եղել. թշնամին միշտ է ուխտադրուժ: Ո՛չ այն պատճառով, որ ահեղ էր թշնամին. նախահարձակ թշնամին միշտ է գայլանային՝ վերջին ցատկին սպասող վագրի նման: Ո՛չ այն պատճառով, որ այն համաշխարհային էր և աշխարհասասան. պատերազմները միշտ լինում են արհավրալից ու վճռորոշ: Այլ այն պատճառով, որ հայ վինվորը՝ իր պատմության մեջ առաջին անգամ կռվում էր ոչ մենակ, այլ հզորացած բազմամիլիոն ժողովուրդների եղբայրակցությամբ: 451 թվականին Ավարայրի ճակատագրական ճակատամարտի նախօրեին ի դերև ելան հայերի բազմակողմանի փորձերը՝ ձեռք բերել հարևան Բյուզանդիայի և այլ ժողովուրդների օգնությունը, և հայ ժողովուրդը մենակ մնաց ահարկու Պարսկաստանի դեմ: Ավելին, եղան դարեր, երբ հայը ստիպված էր կռիվ մղել միաժամանակ մի քանի ճակատի վրա, բյուզանդական-պարսկական, բյուզանդական-արաբական, բյուզանդական-արաբական-սելջուկյան, և 1918 թվականին՝ Սարդարապատում՝ արյունաքամ եղած: Հետո, իր պատմության մեջ առաջին անգամ հայը պատերազմ էր մղում ոչ Հայաստանի հողի վրա, բայց նաև Հայաստանի փրկության համար: Դարեր շարունակ հայը կռվել էր Հայաստանից դուրս, բայց ոչ իբրև վինակից, այլ հարկատու երկրի ռազմական պարտավորություն՝ հոների ու քուշանների, պարսից կամ բյուզանդացիների դեմ: Իսկ այս անգամ մղում էր ի՛ր պատերազմը՝ Մեծ Հայրենիքի և Փոքրիկ Հայաստանի պատերազմը: Անշուշտ պատերազմ էր նաև թիկունքում և ամենուր, այդ օրերին ամեն ինչ սովետական բանակի համար էր՝ ցորենի ծիլը, հաստոցի դղրդյունը ու անգամ դասարանի դասը: Բայց Հայաստանը նաև սպառնալիքի տակ էր՝ դառնալու նոր ռազմաճակատ: Դարավոր թշնամին դարանակալ սպասում էր Ստալինգրադի անկման ակդանջանին, բայց այդ ակդանջանը տագնապ դարձավ բարոյալքված թշնամու ուժերի համար և նախասկիզբ՝ Բեռլին տանող հաղթական ճանապարհի: Գայլանը չկատարեց իր ցատկը, չհամարձակվեց ցատկել, սակայն ցատկի մոլուցքը կարիճի խայթ դարձավ սեփական պատմության վրա, որովհետև դարավոր թշնամին որոշակիորեն ցգաց պահպանիչ ուժի ու եղբայրակցության ցասումը, որ նախահարձակ հրեշին արյունաքամ արեց իր իսկ որջում՝ բազմաթիվ ժողովուրդներ ապատելով ֆաշիստական

լծից, ճանապարհ հարթելով ժողովուրդների խաղաղ գոյակցության համար:

Եթե Առաջին համաշխարհային պատերազմը մեր ժողովրդին բերեց ամենամեծ աղետը՝ երկու միլիոն անմեղ հայերի սպանդը, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմը դարձավ Հայրենական, որովհետև հայն զգաց, որ ինքը մենակ չէ այլևս՝ ինչքան էլ ամպը կարկտաբեր լինի և կայծակը՝ մահաբեր: Սա պատմության մեծագույն դասը էր մեր ժողովրդին: Այս գիտակցությամբ էր, որ, ինչպես հայ ժողովրդի քրիստոնեական պատմության ողջ ընթացքում, այս անգամ ևս Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր նյութական և բարոյական աջակցությունը բերեց հաղթանակի գործին, պատմական կոչ արեց, և Սփյուռքը իր եղբայրական ձեռքը կարկառեց «լինել չլինելու» օրհասի մեջ գտնվող հայ վինվորին և երախտապարտությամբ հատուցեց սովետական բանակի եղբայրական օգնությունը:

Հետպատերազմյան տարիներին հայ ժողովուրդը վերագտավ իր հոգեկան խաղաղությունն ու լծվեց ստեղծարար աշխատանքի: Հետևհետե բուժեց պատերազմի նյութական և բարոյական վերքերը և նոր վճռականությամբ ու եռանդով ձեռնամուխ եղավ կերտելու իր նոր կյանքը՝ մշակութային նվաճումներով՝ արվեստի բոլոր բնագավառներում, գիտական մտքի և կրթության աննախընթաց վերելքով: Այդ բոլորը հնարավոր դարձավ տնտեսական և արդյունաբերական առաջընթացով՝ սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում և խաղաղության նպաստավոր պայմաններում:

Բարգավաճեց և Հայ Եկեղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծաղկումով՝ դառնալով հայ ժողովրդի հոգևոր կյանքի և քրիստոնեական մտածողության կենսատու երակը:

Խաղաղությունը դարի հրամայականն է: Խաղաղությունը պետք է բոլորին: Բայց խաղաղությունը պետք է հատկապես մեզ, որպեսզի նոր պատերազմի հրդեհի մեջ չչորանան հպիվ արմատակալած ընձյուղները և հայ նոր բեկորներ չսփռվեն աշխարհով մեկ, թող թե՝ կարող են ճռաքաղ լինել ու արմատախիլ:

Սա է բերկրանքը և հաղթանակի մշտանորոգ խորհուրդը:



ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941—1945 թթ.)

Ի լրացումն «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի մայիսի համարում լույս ընծայված փաստաթղթերի, հրապարակում ենք որոշ փաստաթղթեր և նյութեր, որոնք անմիջականորեն կապ ունեն Հայրենական պատերազմի օրերին Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի մտահոգությունների հետ: Նրանց մի մասը ցույց է տալիս հայ ժողովրդի եռանդն ու ճիգը՝ ամենադույնն օգնությամբ արագացնելու փառապանծ Հաղթանակը: Այդ օրերին հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, մեկ սիրտ և մեկ հոգի դարձած, իրենց արյունն ու ունեցվածքը ի սպաս դրեցին Մեծ Հաղթանակի գործին:

Կարծում ենք այս հրապարակումները կօգնեն այդ շրջանի պատմության առավել լուսաբանմանը և հայ ժողովրդի մասնակցության ճիշտ գնահատմանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՈՒԱ, ԿՐԵՄԼ
ԵՕՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Այս յիշատակաց արժանի օրերին, երբ փառապանծ Կարմիր Բանակը ցուցաբերելով քաջութեան անօրինակ հրաշքներ, վտարում է թշնամուն մեր սրբազան երկրի սահմաններից, ես բաղդաւոր եմ հաղորդելու այն արտաքոյ կարգի յաջողութեան մասին, որ ունեցել է Մեր տեղակալական Կոնդակը ուղղուած Արտասահմանի եւ մեր երկրի ամբողջ Հայութեան, նուիրուած ազգերի ազատութեան մեծ գործին:

Հայ ժողովրդի հազարաւոր զաւակներ Միութեան միւս եղբայր ժողովուրդների որդիների հետ, ազնուօրէն կատարում են իրենց պարտքը հանդէպ

Հայրենիքի, չխնայելով իրենց կեանքը, քաջաբար կռուում են բոլոր ճակատներում անօրէն թշնամու դէմ: Արտասահմանի Հայութիւնն էլ, հետեւելով իր սիրած Էջմիածնի օրինակին եւ լսելով նորա հրաւէրը, բերում է իր սրտաբուղխ եւ առատ նուէրները ապատութեան Ս. սեղանին, Դաւիթ Սասունցու անուամբ կառուցանելու համար տանկային շարասիւններ:

Տանկային առաջին շարասիւնը, գեներալ-լէյտենանտ Կորոպկովի հաղորդագրութեան համաձայն, արդէն իսկ յաջողութեամբ կռվում է ճակատում: Դաւիթ Սասունցու անուան նուիրուած տանկային երկրորդ շարասեան կառուցման համար էլ անընդհատ գալիս են դրամական նուիրատուութիւններ նախկին յաջողութեամբ, որի գումարն այսօր 40000 Ամդոլլարից եւ 10000 անգղիական ֆունտ ստերլինգից անցնում է: Վերջին օրերս Թեհրանի Հայութիւնից ստացել ենք հեռագրական հաղորդագրութիւն, որով յայտնում են թէ յօգուտ տանկային շարասեան կառուցման համար հանգանակուած դրամը հասել է 1.745.000 Ռիալի: Ստացում են նաեւ գումարներ ճակատում կռող մարտիկների ընտանիքներին օգնելու նպատակով:

Ընդունեցէք, թանկագին ԵՕՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ, Մեր օրհնութիւնը եւ հաւատացեալ հայ ժողովրդի ողջոյնը:

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԷՈՐԵՔՉԵԱՆ
Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 720, էջ 12:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ

Պ. Այրէս, 5 Յունիս, 1943 թ.

Ամենապատիւ
Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս Չէօրէքճեան
Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

Ս. Էջմիածին, Հայաստան.

Երեկ Նիւ Եորք, Առաջնորդ Գեր. Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանի անունին հեռագրով ուղարկեցինք 2000—երկու հազար—տոլար՝ Ձեր Ամենապատուութեան փութացնելու խնդրանքով:

Այդ գումարը հանգանակուած է ի նպաստ Հայաստանի պատերազմական աղէտեալներուն: Ձեր բարեհաճութեան կը թողունք, սակայն, գործածել զայն Ձեր յարմար դատած եղանակով եւ օրուան պահանջին ընդառաջելով:

Հանգանակութիւնը կը շարունակուի:

Կը ցաւինք որ մեր նամակները կը մնան անպատասխանի:

Եղբայրական սիրոյ եւ յարգանաց ողջունիւ

Մնամք աղօթակից

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ԽԱՉԱՏՐԵԱՆ
Կաթ. Պատուիրակ Հարաւ. Ամերիկահայոց

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 3753, էջ 3:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ

5 Օգոստոս 1943, Պուէնոս Այրէս

Ամենապատիւ
Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս Չէօրէքճեան
Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

Ս. Էջմիածին, Հայաստան.

Ձեր Յուլիս 23 թ. հեռագիրը ստացած ենք ժամանակին, բայց ոչ ակնարկուած պատասխանները մեր նամակներուն:

Ամսոյս 2-ին յանուն Ամենապատուութեանդ եւ Հիւս. Ամերիկահայոց Առաջնորդ՝ Գեր. Տ. Գարեգին Սրբազանի միջոցով ուղարկեցինք 1,499.50 (հազար չորսհարիւր իննսունինն եւ կէս) տոլար: Այս գումարին հարիւր տոլարը Լուսաւորչի Լումայ է, մնացածը հանգանակուած է յանուն Հայաստանի պատերազմական աղէտեալներուն:

Եղբայրական յարգանաց ողջունիւ
Մնամք աղօթակից

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ԽԱՉԱՏՐԵԱՆ
Կաթ. Պատուիրակ Հարաւ. Ամերիկահայոց

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 3753, էջ 4:

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՉԷՕՐԵՔՉԵԱՆ,

Յայտնում ենք հայ ժողովրդի ամենասրտագին գնահատանքը հայրենական պատերազմի առթիւ և մեր անձնուիրութիւնը հանդէպ Մայր Աթոռի, հաստատուն յուսով ապատութեան և արդարութեան: Հայոց ռազմանպաստ Միութիւնը արդէն իսկ յատկացրեց 47,000 տոլլար՝ Կարմիր Բանակի Բժշկական օգնութեան համար: Այլ և ունինք գումարներ, յատկացուած Հայաստանի ժողովրդի օգնութեան համար: Ուստի խնդրում ենք հաղորդել թէ ինչ նիւթեր կարող ենք ուղարկել:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱՉԱՐԵԱՆ
ՀԱՅ ՌԱԶՄԱՆՊԱՍՏ ՄԻՈՒԹԻՒՆ

1943 թ.

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 3578, էջ 5:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

16.06.1944 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ընդունված է Տեղակալ ամենայն հայոց Հայրապետության Գևորգ Արքեպիսկոպոս Չորեքչյանի կողմից Հայրենական պատերազմի օգտին Օրջոնիկիձեի հայ հավատացյալ Համայնքից հանգանակած (8000) ութը հազար ռուբլի դրամը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

(Բ. Պետրոսյան)

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 727, էջ 13:



ԿՈՉ
ՀԱՅ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Գերմանական ագրեսիայի դեմ մղուող հայրենական մեծ պատերազմի օրերին՝ ամբողջ սովետական ժողովուրդը, մարտական աւիւնով ներշնչուած, միասնօրէն համախմբուել է իր Կառավարութեան շուրջը՝ իր Հայրենիքը, իր ազատութիւնը եւ իր պատիւը պաշտպանելու համար:

Սովետական բոլոր ժողովուրդներն էլ տոգորուած են մի ցանկութեամբ՝ ամէն միջոցներով օգնել Կարմիր Բանակին ապահովելու համար հայրենական պատերազմի յաղթական վախճանը: Սովետական ժողովուրդների համերաշխութիւնն ու դէպի Հայրենիքն ու նորա փառապանծ Կարմիր Բանակը տածած սէրն արտայայտուում է համաժողովրդական այն շարժման մէջ, որով իրենց հալալ աշխատանքի խնայողութիւնները տրամադրում են Պետութեան՝ Կարմիր Բանակի մարտական ոգին բարձրացնելու եւ նորա մարտական ոյժը զօրացնելու համար:

Ճակատի եւ թիկունքի համերաշխ գործունէութեան, Բանակի Գերագոյն Հրամանատարութեան, նորա իմաստուն եւ խիստ մտածուած ծրագրի եւ Սովետական բոլոր ժողովուրդների անձնուիրութեան ու անձնազոհութեան հետեւանքով է, որ այսօր Կարմիր Բանակը հարուած հարուածի ետեւից հասցընում է գերմանական հրոսակային բանակին, ջախջախելով եւ հետզհետէ վանելով մեր երկրից:

Հայ հաւատացեալ ժողովուրդը հայրենական մեծ պատերազմի հէնց առաջին օրերից՝ անձնուիրաբար լծուել է մեծ պատերազմին, չխնայելով ոչ իր անձը, ոչ իր զաւակներին եւ ոչ էլ իր դրամական միջոցները, որի համար եւ ըստ արժանւոյն գնահատուել է նա Սովետական Կառավարութեան կողմից:

Անշուշտ նաեւ այսօր նա յետ չի մնայ իր եղբայր ժողովուրդներից եւ իր առատ դրամական օգնութեամբ կու գայ աջակցելու ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍԻՆ-

ՆԵՐԻ ԵՒ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ արտադրութիւնը կօրացնելու, թշնամուն վախճանական հարուած հասցնելու համար, որպէս զի ահռելի պատերազմը վերջանայ մեր յաղթութեամբ՝ ու մեր Հայրենիքը ազատուի, մեր պատիւը պաշտպանուի եւ՝ ապագայ տեւողական խաղաղութեան ընթացքում՝ վերաշինենք մեր աւերը, վերակառուցենք մեր կուլտուրական կորուստները, եւս առաւել բարելաւենք մեր տնտեսական դրոյթը եւ աշխարհի բոլոր ազգերի հետ համերաշխ ապրենք, վայելելով ազատութիւն, խաղաղութիւն և բարօր կեանք:

Հայ հաւատացեալ ժողովուրդը, որ միշտ հետեւել է Ս. Էջմիածնին, կատարելապէս համոզուած ենք, որ նա այսօր էլ կը հետեւի նրան եւ նորա առատ նուիրատուութեան օրինակով, որ արգասիք է հայ ժողովրդի կամքի ու բուռն ցանկութեան, չի խնայի իր լուման առատօրէն տալու, հայրենական պատերազմի յաղթական վախճանը ապահովելու համար:

Ս. Էջմիածինը այս նպատակով որոշել է հայ եկեղեցիներում կազմակերպել Յանձնաժողովներ թուահամարուած եւ կնքուած մատեաններով կամաւոր նուէրներ գանձելու համար, եւ կրկնապատկել է մոմի արժէքն ու կնունքների կամաւոր տուրքը, կէսը յատկացնելով պատերազմի օգտին:

Օրհնում եմ հայ ժողովուրդը, մաղթում եմ Բարձրեալին, որ պատերազմի դաշտի մեր զաւակների կեանքը խնայէ եւ պահպանէ, ձեր սիրտը մխիթարէ եւ մեր ձեռնարկը յաջողութեամբ պսակէ. ամէն:

ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 281, էջ 1:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԻՆ

Հարգելի եղբայրներ ու քոյրեր.

Գերմանական ֆաշիզմը՝ մարդկության անարգ թշնամին, երկրորդ իմպերիալիստական պատերազմի հանցագործը, հրի և սրի մատնելով Եվրոպայի կուլտուրական ժողովուրդներին, ճորտացրեց նրանց և ենթարկեց իր արյունոտ ռեժիմին:

Հոլանդիայի, Բելգիայի, Դանիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի և ուրիշ երկրների ազատասեր ժողովուրդները վերածվում են իրավազուրկ ստրուկների, նրանց երկրները կործանվում են, նրանց կուլտուրան ոչնչանում է, ոտնակոխ է արվում այդ ժողովուրդների լավագույն կամակները:

Արյան և ցեխի մեջ թաթախված, սվաստիկայի ճիրաններում հյուծվում է ինքը գերմանական ժողովուրդը:

Նվաճված և օկուպացիայի ենթարկված երկրներում արյունախում Հիտլերը վերականգնել է կանոնիբալիզմը, միջնադարյան խավարը և ինկվիզիցիան:

Ամբողջ աշխարհին, ողջ առաջադեմ մարդկությանը հայտնի դարձավ քաղաքակիրթ աշխարհի պատմության մեջ չլսված այն ոխտադրժությունը, որ հանդես բերին ֆաշիստական Գերմանիայի կառավարիչները՝ արյունկպակ Հիտլերը և նրա ոհմակը:

Ճիվաղ Հիտլերը կատարեց իր նոր, ամենանողկալի չարագործությունը— նա հարձակվեց Սովետական Միության վրա, երկուհարյուր միլիոնանոց ժողովրդի վրա, նրա հայրենիքի վրա: Սովետական Միությունը պատերազմ չէր

ուզում, նա խստորեն պահպանում էր միջազգային պայմանագրերի հանդեպ ունեցած իր հավատարմությունը:

Սովետական բազմազգի պետության ժողովուրդները, որ ձեռք են բերել խաղաղության, ազատության և երջանկության իսկական հայրենիք, մի քառորդ դարի իրենց ակնիվ աշխատանքով իրենց երկիրը վերածեցին հարուստ, կուլտուրական, հզոր մի պետության, ուր բոլոր ազգերն ու ժողովուրդները հավասար են:

Ժողովուրդների այս մեծ ընտանիքում, ինչպես հեքիաթական փյունիկ, մոխրից և բոցերից վերածնվեց մեր ազատասեր հայ ժողովուրդը: Սովետական իշխանությունը փրկեց մեր ժողովուրդը կործանումից և ֆիզիկական բնաջնջումից: Մեր անձնազոհ աշխատանքով, ռուս մեծագործ ժողովրդի օգնությամբ, Սովետական Հայաստանը վերածվեց մի ծաղկած երկրի: Մեր հայրենիքը ծածկվեց բազմաթիվ առաջնակարգ ֆաբրիկաների և գործարանների, էլեկտրոկայանների և ոռոգման ջրանցքների խիտ ցանցով: Չտեսնված զարգացման հասավ մեր գյուղատնտեսությունը, տասնյակ հազար հեկտարներով փարթամ այգիներ և պարտեզներ, բամբակի և ծխախոտի պլանտացիաներ, հարյուր հազարավոր հեկտարներով ոսկեշող արտեր մեր հայրենիքը դարձրին զարգացած, կուլտուրական գյուղատնտեսության երկիր—անապատները վերածվել են երփներանգ այգիների:

Իրականացավ մեր ժողովրդի դարավոր երազը, կատարվեցին նրա լավագույն զավակների՝ Աբովյանի, Նալբանդյանի, Թումանյանի և ուրիշների բաղձանքներն ազատ հայրենիքի մասին:

Վերածնվեց և աննկարագրելի զարգացման հասավ մեր հազարամյակների կուլտուրան—տասնյակներով բարձրագույն դպրոցներ և գիտական հիմնարկներ, հարյուրավոր թանգարաններ և աշխատանոցներ, հազարից ավելի միջնակարգ և տարրական դպրոցներ են բացված Հայաստանում սովետական իշխանության տարիներին: Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը, երբեմնի պարսկական հողաշեն այդ Երևանը, որ դաշնակների տիրապետության օրով կիսով չափ կործանվել էր, հիմնովին նոր է կառուցված: Մատենադարանը՝ մեր դարավոր կուլտուրայի այդ գանձարանը, հարուստ ու բովանդակալից պատկերասրահը, Գիտությունների Ակադեմիայի ֆիլիալը, համալսարանը, կոնսերվատորիան, պետական թատրոնները, օպերան, թանգարանները, գրադարանները, հիվանդանոցները, հոյակապ շենքերը, ասֆալտապատ պողոտաները, ստվերախիտ պարկերը, բազմաթիվ ճարտարապետական հուշարձանները մեր մայրաքաղաքը դարձրել են Սովետական Միության ամենագեղեցիկ ոստաններից մեկը:

Մարդկության և կուլտուրայի ոխերիմ թշնամին՝ սադիստ և խավարամոլ Հիտլերն իր արյունոտ թաթը մեկնել է դեպի սովետական ժողովուրդների ազատությունը: Նա ուզում է հափշտակել մեր հողերը, մեր քաղաքներն ու գյուղերը, նա ուզում է տիրանալ մեր հարստություններին, ոչնչացնել մեր հոյակապ կուլտուրան:

Բայց հիտլերյան կայծակնային հարվածի ծրագիրը Սովետական Միության նկատմամբ՝ տապալվեց պատերազմի առաջին իսկ շաբաթում: Կարմիր Բանակը ոչնչացրեց ֆաշիստական լավագույն դիվիզիաները և շարունակում է հետևողականորեն ջախջախել և արյունաքամ անել Հիտլերի ռազմական մեքենան: Միլիոնից ավելի գերմանական զինվորներ իրենց գերեզմանը գտան սովետական հողում:

Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հետ միասին արյունարբու ֆաշիզմի դեմ ահավոր ուժով բարձրացավ նաև հայ ժողովուրդը:

Մեր ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում առաջին անգամը չէ, որ դուրս է եկել օտարերկրյա ասպատակողների և հափշտակիչների դեմ, բայց նա երբևիցե չի եղել այնքան միաձույլ, ինչպես հիմա: Մեր ժողովրդի հոգում վերակենդանացել են Սասնա դյուցազունների հերոսական տրադիցիաները: Հայաստանի հավարավոր խիզախ կավակները Կարմիր Բանակի շարքերում հերոսաբար մարտնչում են հանուն սովետական հայրենիքի և ջախջախում հիտլերյան հորդաները: Մեր ժողովրդի ծոցից ելած անվեհեր մարտիկների՝ օդաչու Գալալյանի, մայոր Ապրեսյանի, լեյտենանտ Մելքումյանի անունները նշված են սովետական կառավարության կողմից և փառաբանվում են ամբողջ Սովետական Միության մեջ: Այդ հերոսների սխրագործությունները մեզ հիշեցնում են հայ ժողովրդի անմահ զորավարներ, ժողովրդական հերոսներ՝ Վարդան Մամիկոնյանին, Գևորգ Մարզպետունուն, Դավիթ բեկին և մյուսներին, որոնք անձնուրացաբար մարտնչել են հանուն իրենց հայրենիքի, ազատության և պատվի:

Թող բոհեմյան եֆրեյտոր Հիտլերը և նրա ոհմակը ոռնան այն մասին, թե նրանք իրենց հետ ազատություն են բերում: Մենք լավ ենք ճանաչում նրանց «ազատությունը»:

Ազատությունն ըստ ֆաշիզմի—դա Հիտլերի արնածարավ ոհմակի ազատությունն է՝ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներին գերմանական կալվածատերերի հավիտենական ճորտերը դարձնելու, ազատություն ըստ ֆաշիզմի —դա ծաղր է ժողովուրդների հանդեպ, անվերջ պատերազմի և սովի սարսափներ են, դա մահն է մեր մանուկների:

Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում տեսել և ապրել է օտարերկրյա հորդաների բազմաթիվ ասպատակություններ, նա գիտե, թե ինչ է նշանակում կոտորած, ջարդ, սով, բռնություն, նա շատ անգամ է փորձել դրանց սարսափները: Մեր հիշողության մեջ դեռ թարմ է հայ ժողովրդի՝ մեր եղբայրների և քույրերի գազանային կոտորածների պատկերը, կոտորածներ, որ կազմակերպեց և ներշնչեց Հիտլերի արյունռուշտ նախահայր Վիլհելմ կայզերն առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Մենք չենք մոռացել այն ստոր դավաճանական դերը, որ խաղացին գերմանական իմպերիալիզմի գործակալները—դաշնակ շեֆերը մեր ժողովրդի բնաջնջման գործում:

Հիմա էլ, ճակատագրական այս օրերին գտնվում են դաշնակցական պարագլուխներ, որոնք անամոթաբար լիզում են Հիտլերի արյունոտ կրունկները և պատրաստ են ամեն կարգի դավաճանության:

Մեր ազատաբաղձ ժողովուրդը մեծագույն զրկանքների միջով, որ պատճառում էին նրան սանձարձակ հափշտակիչները, միլիոնավոր զոհերի գնով բարձր պահեց ազատության և ինքնուրույն գոյության դրոշը: Այսօր նա սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում ապրում է ազատ և երջանիկ կյանքով: Մենք կառուցում ենք, ստեղծագործում և մեր լուման ենք մտցնում համաշխարհային կուլտուրայի գանձարանը:

Հարազատ եղբայրներ և քույրեր, Մենք լավ գիտենք, որ յուրաքանչյուր հայ երկրագնդի որ մասում էլ նա գտնվելիս լինի, սիրում է իր իսկական մայր հայրենիքը—ազատագրված Սովետական Հայաստանը: Ամեն մի հայ երազում և ձգտում է վերադառնալ իր հայրենի օջախը:

Վերջերս ուղարկած իր հեռագրում «Լրաբեր» թերթի խմբագիր Մարտենցն ասում է. «Ամերիկայի հայ առաջադիմական լիգայի օրգան «Լրաբեր»-ը վրդովմունքով նշավակում է ոչնչով չհրահրված այն հարձակումը, որ կատարեցին նացիստները Սովետական Միության վրա: Ամերիկյան բոլոր ժողովուրդների

և ամերիկահայերի համակրանքը սովետական ժողովուրդների և հերոսական Կարմիր Բանակի կողմն է: Ձեր գործն արդար է: Ամերիկահայերը նորից հավատացած են, որ մեր մայր հայրենիքը Սովետական Միության ընտանիքում հաղթանակով դուրս կգա: Ցանկանում ենք ձեզ նորանոր հաջողություններ ձեր պաշտպանական գործում»:

Մենք լավ գիտենք, որ Սովետական Միության կողմն է ամբողջ առաջավոր մարդկության համակրանքը: Սովետական Միության և Մեծ Բրիտանիայի միջև կնքված համաձայնագիրը՝ հիտլերյան Գերմանիայի դեմ համատեղ գործողություններ վարելու մասին, հանդիսանում է ամբողջ առաջավոր մարդկության ուժերի միավորման սկիզբը—ընդդեմ ֆաշիստական բարբարոսների:

Հայկական ժողովրդական առածն ասում է «Երբ օձի գլուխը ցավում է, նա պառկում է ճանապարհի վրա»: Եկել է ֆաշիզմի վերջին օրը, ֆաշիստական իժը պառկել է մեր ճանապարհի վրա: Նա մահացու կերպով կճզմվի սովետական բազմամիլիոն ժողովուրդների հաղթական ոտքերի տակ:

Թանկագին բարեկամներ, այս պահին, երբ մեր երկրի և ամբողջ մարդկության վրա կախվել է ահեղ վտանգը, մենք դիմում ենք համայն աշխարհի հայերին, մենք դիմում ենք բոլոր նրանց, ում համար թանկ է հայրենիքի կուլտուրական ժառանգությունը, ում համար սուրբ են ազատության և մարդասիրության գաղափարները, բոլոր նրանց, ովքեր սիրում են իրենց իսկական հայրենիքը, մենք դիմում ենք և կոչ անում, համախմբել բոլոր ուժերը՝ կանխելու համար համաշխարհային կուլտուրայի ոչնչացումը, որ բերում է իր հետ գազանացած ֆաշիզմը, մարդկության, գիտության և կուլտուրայի ամենաոխերիմ թշնամին:

Մենք դիմում ենք ձեզ և կոչ ենք անում—համախմբել ձեր բոլոր ուժերը՝ հանուն Սովետական Միության պաշտպանության, հանուն մարդկության խարդախ ու վտանգավոր թշնամու—ֆաշիզմի ոչնչացման:

Մենք համոզված ենք, որ հաղթանակը մերը կլինի, որովհետև մենք պայքարում ենք արդար գործի համար, մենք անպայման կհաղթանակենք, որովհետև ֆաշիզմի դեմ կռվում է աշխարհի ամենաուժեղ և ամենագաղափարական բանակը՝ Կարմիր Բանակը, որն իր թիկունքում ունի երկու հարյուր միլիոնանոց սովետական ժողովուրդը, որի կողմն է ամբողջ առաջավոր մարդկության համակրանքը: Մենք կհաղթանակենք, որովհետև մեզ առաջնորդում է մեր դարաշրջանի մեծագույն զորավարը և ռազմագետը, մարդկության լավագույն բարեկամ, հայ ժողովրդի ազատարար Իոսիֆ Ստալինը:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ—Ժողովրդական նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ: ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ—Բանաստեղծ: ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇՅԱՆ—Ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ: ԻՈՍԻՖ ՕՐԲԵԼԻ—Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահ, գիտության վաստակավոր գործիչ: ՀԱՅԿԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼՅԱՆ—ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, օպերայի երգչուհի: ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ—Պրոֆեսոր-դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ: ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ—Գրող-դրամատուրգ, արվեստի վաստակավոր գործիչ: ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ—Գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկ: ՍԻՄԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ—Վաստակավոր ուսուցիչ: ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ—Բանաստեղծ: ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ—Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր: ՌՈՒԲԵՆ ԳՅԱՆՋԵՑՅԱՆ—Գիտության վաստակավոր գործիչ, բժշկական ինստիտուտի պրոֆեսոր: ՀԱՐՈ ՍՏԵՓԱՆՅԱՆ—Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր: ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ—պրոֆեսոր-դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ: ՆԱՏԱԼԻԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—ճարտարապետ-հիդրոտեխնիկ: ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆ—ՀՍՍՌ ժողովրդական արտիստ, Պետական օպերային թատրոնի գլխավոր ռեժիսյոր-դրամատուրգ: ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐԱՋՅԱՆ—Արվեստի վաստակավոր գործիչ, Պետական կոնսերվատորիայի դիրեկտոր, պրոֆեսոր: ԱՐՍԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ—պետհամալսարանի պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ: ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի կինոստուդիայի դիրեկտոր: ՍԱՄՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ—ՍՍՌՄ-ի ճարտարապետության Ակադեմիայի թղթակից անդամ և արվեստի վաստակավոր գործիչ: ՄԻՔԱՅԵԼ ԹՈՒՄԱՆՅԱՆ—Գիտությունների վաստակավոր գործիչ, Գյուղինստիտուտի պրոֆեսոր-դոկտոր: ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ—Արվեստի վաստակավոր գործիչ: ՌՈՒԲԵՆ ՅՈԼՅԱՆ—Գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, Բժշկական ինստիտուտի պրոֆեսոր: ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ: ԱՐՏԱՇԵՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ—Գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, Բժշկական ինստիտուտի պրոֆեսոր: ՍԻՐԱՍ ՈՍԿԱՆՅԱՆ—Հայաստանի Սովետական գրողների միության քարտուղար:

ԱՀԱՒՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Պատերազմն ինքնըստինքեան ահաւոր է եւ բացասական իւր էութեամբ: Որովհետեւ նա կապւած է բռնութեան, յափշտակութեան, աւերման, սովի եւ հիւանդութիւնների հետ. հարիւր հազարաւոր, այժմ կարող ենք ասել միլիոնաւոր, մարդկանց թանկագին կեանքերի ոչնչացման հետ: Ո՛վ պատերազմի մէջ չէ եղել, ո՛վ իւր աչքերով չէ տեսել տասնեակ եւ հարիւր հազարների ոչընչացումը մի օրւայ մէջ կամ օրերի ընթացքում, պարտւած ժողովրդի տեղահանութիւնը բռնի, երեխաների, մատղաշ պատանիների եւ աղջիկների մահացութիւնը ճանճերի նման, թափւած ճանապարհների եզրերին, դաշտերի վերայ, նրանց գալարումներն ու տառապանքները անողոք մահւան ճիրաններում, սովի, հիւանդութիւնների գործած արհաւիրքը, դժւար թէ նա կարողանա իրական գաղափար կազմել պատերազմի էութեան, նրա բերած թշւառութեան հետեւանքների մասին լիապէս:

Մտածեցէ՛ք, հազարաւոր մարդիկ այսօր կենդանի են, ո՞վ գիտէ ի՛նչ մտքերով եւ երազներով կապւած իրենց մերձաւորների՝ ծնողների, կանանց, զաւակների հետ, իրենց մասնաւոր եւ հանրային արժէք ունեցող ծրագիրների եւ նպատակների հետ... եւ մի քանի ժամերից կամ նոյնիսկ րոպէներից յետոյ այլեւս չկան: Իսկ տարիներ տեւող պատերազմից յետոյ, հարիւր հազարաւոր ծնողներ իրենց զաւակների կորուստն են ողբում, երիտասարդ կանայք իրենց ամուսինները, քոյրերն իրենց եղբայրները, հարիւր հազարաւոր մանուկներ էլ զրկւում «հայրիկ» կոչելու եւ նրանց գիրկը վազելու բաղդաւորութիւնից, տասնեակ եւ հարիւր հազարաւոր ընտանիքներ տնից, տեղից, հարստութիւնից եւ ապրելու միջոցներից զուրկ, սովի, աղքատութեան, նիւթական եւ բարոյական նեղութեան եւ վտանգների ենթարկւած:

Պատերազմի հետեւանքով կանգ է առնում գիտութիւնը, քաղաքակրթութիւնը, խաղաղ եւ երջանիկ նիւթական եւ բարոյական կեանքը, եւ ամէն ինչ շնչում, ապրում պատերազմի մոլոխին զոհ գտնելու մտահոգութեամբ:

Այսօր, տարաբաղդաբար, մարդկութիւնը պատերազմի մէջ է. հկօր, քաղաքակիրթ եւ յառաջադիմութեան ներկայացուցիչ ամենամեծ ազգերը. Անգլիացիք, Գերմանացիք, Իտալացիք, Ֆրանսացիք, ի վերջո նաեւ Ռուսերը Խորհրդային Միութեան միւս ազգերի հետ, կռի մէջ են: Դեռ չգիտենք, վաղը Ճափոնն ու Ամերիկան էլ պատերազմի մէջ չպիտի՞ մտնեն, բառի իրական եւ կատարեալ նշանակութեամբ համաշխարհային դարձնելու կայն: Իւրաքանչիւր ազգ իւր տեսակէտով արդարութիւնը համարում է իւր կողմը. Անգլիացիք ռամկավարական սկզբունքների եւ Եվրոպայի նուաճուած եւ փոքր ազգերի անկախութեան անունով, Գերմանացիք իրենց կրկուած հայրենիքի եւ փառքի վերականգնման, այժմ էլ որպէս թէ աշխարհը Բոլշեւիկմից ազատելու առաքելութեամբ, Իտալացիք իսկ Եթովպիայի կամ Ալբանիայի նուաճումը համարում են արդար: Սուտից եւ կեղծիքից բաժին ունին ամենքն էլ, մեծ կամ փոքր չափով: Գիտենք, որ խնդիրը իւր խորքում այդպես չէ, այլ առաւելութեամբ ունեցածը պահելու, շահի եւ նուաճողական, շուկաներ եւ հում նիւթերի աղբիւրներ ձեռք բերելու մտքերն են պատերազմի սկզբնական շարժառիթները եւ առաւել եւս շարունակութիւնը: Ազգերը երկու խմբի բաժնուած, վճռական որոշումներ են յայտնում, հակառակորդի կատարեալ ոչնչացմամբ միայն սուրը պատեանի մէջ դնել, եւ... հոսում է արիւնը, շարունակում ազգերի աւերը, ընդարձակում նորա ծաւալը համաշխարհային իմաստով:

Աշխարհի այս թոհ ու բոհի մէջ մենք էլ իբրեւ ազգ անմասն չենք: Գերմանիոյ յարձակմամբ խաղաղ Ռուսաստանի վերայ պատերազմի ալիքները հասան եւ մեր երկրին, իբրեւ մէկը Խորհրդային Միութեան անդամներից:

Ի՞նչ պիտի լինի մեր ժողովրդի վիճակը, չենք կարող մտահոգ չլինել այդ մասին: Այդ մտահոգութիւնը երկու կողմ ունի, Սփիւռքի եւ ապա բուն երկրի, աւելի ճիշտ Խորհրդային Միութեան հայութեան նկատմամբ: Մենք քաղաքագէտ չենք եւ քաղաքականութեամբ չէ, որ այստեղ կբաղուել կը կամենանք: Ի՞նչ արժեք ունի քաղաքականութեան տեսակէտով մեր մի բուռ ժողովուրդը, ցրուած տարբեր ազգերի եւ քաղաքականութեան հետեւող ազգերի մէջ: Եթէ քաղաքականութիւն պիտի ունենանք, քաղաքացիական պարտականութեանց ապնիւ կատարման քաղաքականութիւնն է, խոհեմ ընթացքը՝ համապատասխան հիւրընկալուած պետութեան քաղաքականութեան: Այս մեր Սփիւռքի Հայութեան համար:

Խնդիրն այլ է Գերմանիոյ եւ Ռուսաստանի մէջ ծագած պատերազմի նկատմամբ: Նախայարձակ կողմը նուաճողական եւ շահադիտական նպատակներով, Գերմանիան էր, մի բացարձակ անարդարութիւն: Ապա Խորհրդային Միութեան մի համեստ անդամն է նաեւ **Խորհրդային Հայաստանը, մեր ազգային գոյութեան հիմունքն ու արմատը:** Գերմանիան պատերազմի մէջ լինելով Խորհրդային Միութեան հետ, պատերազմի մէջ է եւ մեր թանկագին հայրենիքի հետ: Հասկանալի է, թէ մեր համակրութիւնը, քիչ է այդ ասել, մեր հոգին, սիրտը, ընդհանուր արդարութեան եւ ազգային շահերի տեսակէտով, ո՞ր կողմը պիտի լինի: Իբրեւ Քրիստոնեայ եւ մարդասէր դէմ ենք պատերազմին. բայց մի պատերազմ կայ, որ ոչ միայն ներելի, այլեւ սուրբ է, այդ հայրենիքի, ազգային ինքնապաշտպանութեան պատերազմն է:

Մեր երկիրը շարունակ քար ու քանդ է եղել օտար ազգերի արշաւանքների տակ. նախընթաց պատերազմի հետեւանքով էլ մեր ժողովրդի մի երրորդը ոչնչացաւ, իսկ հայրենիքի երկու երրորդը հայազուրկ դարձաւ, մեր ստեղծագործութեան թանկագին մնացորդների կորստեան հետ: Մեկ բաժին է մնացած մեր երկրի մի մասը միայն, հայրենի, ինքնավար կառավարութեամբ, ուր Հայ ժողովուրդը, հկօր Ռուսաստանի հովանաւորութեամբ, պաշտ-

պանուած, խաղաղութեան եւ ապահովութեան մէջ, հետամուտ էր նիւթական բարօրութեան եւ քաղաքակրթական յառաջդիմութեան: Չենք ասում, թէ քննադատելի կողմեր չունէր ամենեւին, յատկապէս, եկեղեցական կամ կրօնական խնդիրների մէջ: Բայց Հայ համալսարանի, գիտութեանց ճեմարանի, կոնսերւատորիայի, մասնագիտական, միջին եւ ժողովրդական դպրոցների, գրեթէ, առասպելական ծաւալումը, թանգարանների եւ մատենադարանների, թատրոնների եւ կինոների, եւ այլ քաղաքակրթական հաստատութիւնների հետզհետէ բարգաւաճումը, Հայ գրականութեան եւ լեզուի ուռճացումն ու տիրապետութիւնը կեանքի, պետական կառավարութեան մէջ, նաեւ նիւթականի զգալի կարգաւորումը, բերել էին մեզ սրտի հանգիստ եւ հաւատ, թէ հետզհետէ, եկեղեցական կեանքի նկատմամբ էլ բարեփոխութիւններ կը լինին, կ՝ամրանայ մեր ազգային գոյութեան հիմքը եւ պտղաբեր կը դառնա նիւթական եւ քաղաքակրթական տեսակէտներով մեր ապագան:

Միջանկեալ կերպով հարկ ենք համարում պարզել մի խնդիր եւս: Շատ է խօսւում եւ գրւում, անհասկացողների եւ հանգամանքներին անծանօթների համար հրապուրիչ, Հայաստանի անկախութեան եւ ապատութեան մասին: Հայաստանը ներկա դարում եւ փոխ-յարաբերութեան պայմաններում ոչ ապատ եւ ոչ անկախ կարող է լինել: Փոքրիկ ազգ ենք, երկիրը կտրուած ծովերից, շրջապատուած ոչ բարեկամ տարրերով. նա շնչահեղձ կը լինի եւ մատնուած խեղճութեան եւ աղքատութեան հարեւանների ճնշման տակ, եթէ կապուած չլինի մի մեծ պետութեան հետ, որպիսին Ռուսաստանն է: Պատմական պայմաններն էլ մեր բաղդը կապել են Պետրոս Մեծին եւ Իսրայէլ Օրիի օրերից սկսած Ռուս մեծ ժողովրդի եւ պետութեան հետ, երբեմն մեր ակնկալութիւնների մէջ յուսախաբ, բայց ընդհանուր առմամբ, համեմատաբար, դրական արդիւնքներով: Եւ այս վերջին անգամ բաղդը կապել է մեզ աւելի լաւ պայմաններում, ներքին ինքնավարութեամբ եւ բազմաթիւ տեսակներով բազմակողմանի յառաջդիմութեան եւ ապահովութեան համար:

Բայց ահա անսպասելի կերպով Գերմանիան իւր ուժերն ուղղում է խաղաղութեան տենչով լցուած ժողովրդի վերայ: Հերոսական է Ռուս ժողովրդի ինքնապաշտպանութիւնը, բայց զօրեղ է, կազմակերպուած եւ թշնամին: Ի՞նչ դիրք պիտի բռնէ Հայաստանի եւ Սովետական երկիրների Հայութիւնը, աւելորդ է հարցնել: Նորա «լինել չլինելու» խնդիրն է այդ: Ռուսաստանի պարտութիւնը ոչ միայն իւր պարտութիւնն է, այլև վտանգը իւր գոյութեան իբրեւ պետական կազմակերպութիւն, բայց նաեւ իբրեւ իւր պատմական եւ սրբազան հայրենիքի հետ կապուած ժողովուրդ: Նախընթաց պատերազմը ապացոյց բերաւ, թէ ներկա ժամանակում հնարաւոր է մի ժողովուրդ ոչնչացնել իւր հայրենիքում եւ մնացորդներին ցրել երկրից դուրս, եթէ նոյնիսկ, որեւէ յանցանք չունենայ իւր վրին փաթաթուած պատերազմի մէջ: Ի՞նչ գիտենք, թէ ժամանակը եւ պատերազմական առակցութիւնները (քոմպինեշընն) ի՞նչ անակնկալներ կը բերեն: Ամպերը կուտակուած են մեր գեղեցիկ եւ թանկագին հայրենիքի քսանամեա խաղաղութեամբ պայծառացած երկնքի վերայ, այդ ամպերը կարող են կարկտաբեր փոթորիկի փոխուել եւ մեր մատղաշ, ինքնավար հասարակապետութիւնը գլխիվայր կործանել: Ահա ինչո՞ւ մտահոգուած ենք մեր ժողովրդի վիճակով եւ մտահոգուած ամենածանր կերպով:

Ուստի եւ մեր սրտի եւ հոգու բոլոր էութեամբ աղօթող ենք ոչ միայն մեր թանկագին հայրենիքի անսասանութեան եւ պահպանութեան, այլ եւ համայն աշխարհի խաղաղութեան եւ այս կործանարար պատերազմի արդար վերջաւորութեան համար:

Թո՛ղ Տէրը բաւ համարէ մեր գլխին մինչեւ այժմ եկած փորձութիւնները:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

«Լրաբեր»—1941 թ., սեպտեմբեր 11, 1—2 էջ

ՀԵՌԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ «ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ»

Անչափ գոհ եմ, որ իմ կոչը ուղղված Ամերիկայի հայրենասեր հայությանը օգնելու հայրենական պատերազմի հաղթական ելքի համար լայն արձագանք գտավ: Այդպես էլ հավատացած էի:

Շատ ուրախ եմ, որ ստեղծել եք «Հաղթության կոմիտե», որի բացման հանդես-միտինգին ուղղում եմ իմ խոսքը ու սրտագին շնորհավորությունները:

Ահա չորրորդ ամիսն է, որ խորհուրդների մեծ Միությունը՝ գլուխ ունենալով ռուսական ակնիվ ժողովրդին, հերոսական կռիվ է մղում գերմանական աշխարհավեր ֆաշիզմի դեմ: Միության ժողովուրդները իրենց բոլոր անձնազոհությամբ ու նվիրվածությամբ պայքարում են ֆաշիստական ստրկացնող աշխարհակալության ու ռեակցիայի դեմ, ոչ միայն իրենց հայրենիքը, ազգային գոյությունը, իրենց կուլտուրան պաշտպանելու և փրկելու համար՝ այլ ամբողջ առաջավոր մարդկության ապագայի համար, ազատ ժողովուրդների գոյության համար, համամարդկային կուլտուրայի և հումանիստ իդեալների համար:

Եվ այս պատճառով՝ բովանդակ առաջավոր, քաղաքակիրթ մարդկությունը պարտավոր է օգնել ամեն նյութական և բարոյական միջոցներով Միության դյուցազնական պայքարի հաղթանակին, որովհետև այդ նաև իր պայքարն է, և նրա հաղթանակը՝ իր հաղթանակը:

Խորհրդային Հայաստանը՝ իրավահավասար անդամը մեծ Միության, իր ամբողջ էությամբ և անձնվիրությամբ կռվում է եղբայրական ժողովուրդների շարքում, խորապես գիտակցելով, որ ֆաշիզմի ջախջախման և մեծ Միության հաղթանակի մեջ է նաև իր նորապատ հայրենիքի հավերժությունը, իր կուլտուրայի զարգացումը, իր տնտեսության բարգավաճումը և իր իդեալների պսակումը:

Բովանդակ հայ երիտասարդությունը, մեր քաղաքի մարտիկները Կարմիր պանծալի Բանակի մեջ անանման հերոսություններ են գործում. ամեն օր ավելանում է սքանչելի հերոսների քանակը, որոնք մեր ժողովրդի պատմությունը իմաստավորում են և անմահացնում հանուն վեհ գաղափարների մղած պայքարով և հաղթանակով:

Հայ ժողովուրդը՝ թիկունքում, գյուղերում և քաղաքներում և աշխատանքի այլևայլ վայրերում զոհաբերում են իրենց ունեցածից ավելին, արտադրում են չխնայելով իրենց ուժերը միայն և միայն օգնելու համար մեր սրբազան պատերազմի հաղթանակին:

Արտասահմանի հայությունը՝ օրինակ առնելով և խրախուսվելով իրենց նվիրական հայրենիքի եղբայրներից ու քույրերից, ավելի պետք է ծավալեն ու խորացնեն իրենց ազգօգուտ աշխատանքը և նվիրաբերումները:

Հաղթության կոմիտեն պիտի ծավալե լայն պրոպագանդա կազմակերպելով հաղթության կոմիտեներ հայության բոլոր խավերում մեր սրբազան պայքարի էության և նպատակների բացատրման համար, այլև իրենց ջուրջը հա-

մախմբելով ու ղեկավարելու այս շարժումը անհրաժեշտ է անմիջական օգնություն ցուցաբերել մեր մարտիկներին դեղորայքով, տաք վգեստներով, խտացած սննդամթերքներով և այլն, և այլն:

Չափազանց կարևոր եմ համարում, որ իմ այս մտածումն ու փափագը արծարծեք Ամերիկայի ոչ-հայ մամուլում—ֆաշիզմի կողմից շղթայազերծված, քաղաքակրթությունները ոչնչացնող այս ահեղ պատերազմը իր ուսերի վրա է վերցնել բազմազգի Սովետական Միությունը, սակայն մեր դաշնակից հզոր պետությունները՝ Անգլիան և Միացյալ Նահանգները պետք է և պարտավոր են հանդես բերել նյութական և ռազմական միջոցների օգնության մաքսիմումը թե իրենց և թե համաշխարհային դեմոկրատիայի փրկության համար:

Սրտիս բոլոր ջերմությամբ օրհնում եմ «Հաղթության կոմիտեին», նրա նախագահ Չանկանյանին, քարտուղար Մարտիկյանին, բոլոր մասնակցողներին, իմ հայ եղբայրներին ու քույրերին, փափագում եմ Ձեր սրբազան գործին հաջողություն, ընդարձակում, և ներշնչում եմ բոլորիդ իմ պայքարող ժողովրդի և իմ անսահման հավատը Հայրենական պատերազմի վերջնական հաղթանակի նկատմամբ:

ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆ

1 հոկտեմբերի, 1941
Ս. Էջմիածին.

Մամուլի արխիվ, Ֆ 85, Ց 2, Գ 151, թ. 1—6:

ԿՈՉ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Սիրելի Հայրենակիցներ,

Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղակալ Տէր Տ. Գէորգ Արքեպս. Չէօրէքճեան Ամերիկահայութեան ուղղած էր հայրենասիրական կոչ մը, որպէս զի Հայ ժողովուրդի կամաւոր նուիրատուութեամբ կազմուի Սասունցի Դաւիթ հրասայլի Զօրասիւն մը Կարմիր Բանակի կողքին: Ճօսէֆ Ստալին հաւանած եւ իր երախտագիտութիւնը յայտնած է այս շարժումին համար: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ Միացեալ Նահանգաց մէջ սկսած է արդէն համազգային հանգանակութիւն մը:

Գալիֆորնիոյ Հայոց Առաջնորդարանն ալ՝ անսալով Էջմիածնի Կաթողիկոսարանի հրահանգներուն՝ ձեռնարկած է հանգանակութեան՝ Գալիֆորնիոյ Վիճակին մէջ, գործակցութեամբ հայ կազմակերպութիւններու:

Եւ ահա այս կոչով կը դիմենք Գալիֆորնիոյ Հայ ժողովրդին, որպէս զի առատաձեռնութեամբ մասնակցի այս հայրենասիրական եւ մարդասիրական շարժումին:

Համաշխարհային պատերազմի մէջ ենք այժմ եւ վայրկեանները յղի են անակնկալներով: Կ'ապրինք բացառիկ պայմաններու տակ: Պայմաններ՝ որ մեզմէ կը սպասեն բացառիկ զոհողութիւններ:

Մենք հոս Ամերիկահայերս, որպէս Ամերիկեան քաղաքացիներ, սիրով յանձներ ենք մեր կաւակները ԸՆՔԸԼ ՍԷՄԻՆ: Անոնք հերոսաբար կը կռուին ամէն ճակատի վրայ եւ յաճախ իրենց կեանքի գնով կը բարձրացնեն մեր ԱՍ-

ՏԵՂԱԶԱՐԴ ԴՐՕՇԱԿԻ պատիւը, կը պաշտպանեն մեր հայրենիքը եւ անոր անկման ապատութիւնը: Հպարտ ենք մենք մեր հերոս պաւակներով:

Իսկ բանակին ետեւ, թիկունքին մէջ դարձեալ մենք Հայերս, որպէս հարրապատ քաղաքացիները այս մեծ երկրին, նուիրուած ենք եւ պէտք է նուիրենք մեր ինչքը՝ մեր աշխատանքը՝ պետութեան, մեր արիւնը՝ Կարմիր Խաչին, եւ ի հարկին մեր կեանքը՝ մեր փառապանծ բանակի անմոռաց կորութեան եւ անոր փառապսակ յաղթանակին համար: Այս բոլորը կ'ընենք եւ պէտք է ընենք սիրով եւ յօժարութեամբ, առանց այլեւայլի:

Այս կարգին ունինք նաեւ ուրիշ նուիրական պարտականութիւն մը հանդէպ մեր պատմական հայրենիքին, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, որ պէտք է կատարենք ընդհանուր եւ անբաժան կերպով, առանց սեռի եւ դասակարգի, առանց կուսակցական եւ յարանուանական խտրութեան: Մենք կուսակցական հայ, յարանուանական հայ եւ դասակարգային հայ ըլլալէ առաջ պաւակներ ենք Հայկի, Արամի, Տիգրանի, Վարդանի, Վահանի եւ Ղեւոնդ Երէցներու, բարձր եւ հպարտ ճակատով, նման Արագածի եւ Արարատի անբիծ եւ ալեհեր գագաթներուն: Քալենք միասիրտ եւ միակամ, միշտ մեր աչքերը յառած Արագածի Անշէջ Կանթեղին եւ Մասիսի վեհափառ կատարին:

Հայ ժողովուրդ, հին, շատ հին ազգ ենք մենք: Հին՝ բայց ոչ երբէք հինցած, մշտայորդ եւ մշտանորոգ Արաքսի եւ Եփրատի ալիքներուն նման: Մեր հայրերու ԵՐԵՔ ՀԱԶԱՐ տարիներու պատմութիւնը եղած է պատմութիւնը Մարդկային Իրաւանց պաշտպանութեան եւ պատմութիւնը յարաճուն ազգային եւ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ մշակոյթի եւ քաղաքակրթութեան: Մեր հայրերու պայքարը քրիստոնէական եւ անկէ առաջ եղած է պայքար՝ ՀԱԻԱՏՔԻ, ՅՈՅՍԻ եւ ԼՈՅՍԻ:

Հին հեթանոս Հայոց ՎԻՇԱՊԱՔԱՂ ՎԱՀԱԳՆԸ եւ ՈՍԿԵԾԻՆ ԱՆԱՀԻՏԸ մարմնացումն են Զօրութեան եւ Զգաստութեան: Վահագնը Լուսոյ Աստուածն այն՝ «որ հուր հեր ունէր, ապա թէ բոց ունէր մօրուս, եւ աչկունքն էին արեգակունք»: Աստուածուհին Անահիտ՝ «Մայր ամենայն կգաստութեանց, կենսատու եւ խնամակալ կորութեան Աշխարհի Հայոց»:

Հապա անոր ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ:

Հայ ցեղի կենսունակութեան, քաջութեան, եղբայրսիրութեան, անմոռաց կամքին եւ յարաճուն հաւատքին մաքրամաքուր խորհրդանշանն է այն: Ծնունդ Տարնոյ Աշխարհին, սիգապանծ ՍԱՍՆԱՅ լեռներուն, Վանայ ծովու ալիքներէն յղացած, Սեւանայ կապոյտին մէջ խանձարուրուած, ՀԱՅ ՔԱՋԵՐՈՒ գերեզմաններուն մէջ անթեղուած եւ ՀԱՅ ՀՈԳԻՆԵՐՈՒ մէջ անմահացած, ՅՈՅՍԸՆ ու ՀԱՒԱՏՔՆ Է ԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԵԱՆ: Փառք Հայ ցեղի եւ Հայ ցաւի ծնունդ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻՆ, իր ԹՈՒՐ-ԿԵԾԱԿԻՒՆ, ՀՐԱՇՈՒՆՁ ՁԱԼԱԼՈՒՆ:

Նայինք այժմ հիացումով, անկեղծ սիրով եւ խոր հաւատքով, այսօր Խորհրդային Հայաստանի բոցածին Վահագներուն, Կարմիր Վահագներուն, նորահրաշ Սասունցի Դաւիթներուն: Ծնունդ Կարմիր Բանակի, Անխորտակ Միհրներ եւ Տորք-Անգեղներ Սովէտ Աշխարհին:

Այո, անոնք փառքն ու պսակն են մեր ցեղին: Վերածնեալ հայրենիքի, Խորհ. Հայաստանի անմահ ծնունդը, Նոր Արծիւներ, Վիշապաքաղ եւ Բաղէներ բոցաթեւ, խառնուած Կարմիր Բանակի եւ Միացեալ Ազգաց փառապանծ լէգէոնին՝ ահ ու մահ կուտան անգութ թշնամիին, նոր հրէշածին Մսրայ-Մելիքներու: Անոնք մեր նոր Միհրներն ու Սասմայ-Ծռերն են, ախոյեան ազգերու ապատութեան, որ վաղն իսկ պիտի պայծառացնեն մեր ճակատները իրենց Արեւածին Յաղթանակով:

Իսկ ի՞նչ կ՚ուզեն Հայ Սասմայ Ծռերը մեզմէ, Հայ գաղութէն:

Լսեցէք, Մայր Աթոռի ալեկարդ պապիկին ձայնն է այն: Հրաւէր սիրոյ եւ եղբայրութեան: Մայր Աթոռի ծերունապարդ հայրիկը, իբրեւ նոր Պարթեւ մը կամ Շնորհալի՝ ՄԻՈՒԹԵԱՆ կոչ կ՚ուղղէ բաժան-բաժան, ճղակտոր սփիւռքին, իր ցաւատանջ զաւակներուն:

Լսէ Հայ ժողովուրդ, լսէ ձայն մը կուգայ հեռուէն, բայց մօտ է ան քու սրտիդ, քու հոգիիդ: Ձայն մը, հերոս զաւակներուդ, անմուրաց գերեզմաններէն, ձայն մը ԱԼԵՓԱՌ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԷՆ:

Լսէ: Հայոց Հայրիկը մերկացեր է իր կրծքի գոհարապարդ խաչէն եւ անով նարօտ է կապեր ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԻ եւ ԽԱՆԴՈՒԹ ԽԱԹՈՒՆԻ, նոր հարս ու փեսին նորապսակ ճակատներուն:

Հայոց Հայրիկը թամբեր է Թոլոր-ԴԱՒԻԹԻ հրաշունչ ՁԱԼԱԼԻՆ, ՍՏԱԼԻՆ ՀԱՄԲՈՒՐԵՐ Է ԱՆՈՐ ՃԱԿԱՏԸ:

Տանք, այո տանք, գէթ ռումբ մը Դաւիթի ՀՐԱՍԱՅԼԻՆ, շեղբ մը ԹՈՒՐ-ԿԵԾԱԿԻՆ, պայտ մը՝ անոր ՀՐԱԹԻՌ ՁԱԼԱԼՈՒՆ: Եւ կամ ՎԻՐԱԿԱՊ ՄԸ ՍԻՐԱԲՈՐԲ՝ թրջուած եղբօր եւ քրոջ արցունքով:

Լսէ, ինչ կ՚ըսէ հրաւէրը Հայրիկին.—«ՄԻԱՑԻՐ, ՕԳՆԷ ՍԱՍՄԱՅ ԾՌԵ-ՐՈՒՆ...»: Օ՚ն ի գործ:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ ՀՐԱՍԱՅԼԻ ՁՕՐԱՍԻՒՆԻ
ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Նախագահ
ՄԱՄԲՐԷ ԵՊՍ. ԳԱԼՖԱՅԵԱՆ
Առաջնորդ Հայոց Գալիֆորնիոյ

Ատենադպիր — ՄԱՐԹԻՆ ՖՐԷՆՔԵԱՆ
Ատենապետ — Ա. Գ. ԵԱՁԸՃԵԱՆ

ՖՐԷԶՆՕ, Մայիս 4, 1943

ՀԻՄՔ—Ֆ 409, Ց 1, Գ 3578, Էջ 5, 6, 7

«ԿՈՎԿԱՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԴԱԼԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆ. ՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Օրերս Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետում Գերագույն Սովետի նախագահության նախագահ ընկ. Մ. Պապյանը ՍՍՌ Միության Գերագույն Սովետի նախագահության անունից հանձնեց «Կովկասի պաշտպանության համար» մեդալ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին, որը պարգևատրվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու և երկրի պաշտպանության ֆոնդի համար միջոցների հանգանակություն կազմակերպելու համար:

Ստանալով մեդալը, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը դիմեց ընկ. Պապյանին հետևյալ խոսքերով.

«Հայ հոգևորականը պիտի հավատարիմ լինի իր Հայրենիքին, իր ժողովրդին, իր պետությանը: Այս ուղիով ես գնացել եմ սկզբից և պիտի գնամ

ցման: Սովետական պետությունը գնահատելով իմ ճիշտ ուղին, արժանացրեց պարգևատրության: Ինձ համար թանկ է այս բարձր պարգևը:

Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում Հայ Եկեղեցին, հայ հոգևորականությունը և իմ հավատացյալ հոտը ոչինչ չեն խնայել ընդհանուր հաղթանակի համար: Հավատացած եղեք, որ այսուհետև ևս նրանք ոչինչ չեն խնայի երկրի վերաշինության ասպարիզում:

Ամբողջ սրտով ցանկանում եմ մեր պետությանը ավելի մեծ նվաճումներ և հաջողություններ»:

Մեդալը հանձնելու ժամանակ ներկա էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության քարտուղար ընկ. Հ. Գալստյանը և Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ ընկ. Ս. Հովհաննիսյանը:

(«Սովետ. Հայաստան», 5 հունիսի,
1945 թ. № 1127365)

ՀԻՄՔ—Ֆ 85, Ց 2, Գ 172, է 4:





ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Մեծ Հաղթանակի տոնակատարության այս օրերին հայ ժողովուրդը նույնպես սովետական և խաղաղասեր մյուս ժողովուրդների հետ տոնախմբում է երկրորդ համաշխարհային պատերազմում սովետական զորքերի տարած փառապանծ Հաղթանակի 40-ամյակը: Հայ ժողովուրդն իր բազմահազար հերոս զավակների արյամբ իրավունք նվաճեց իր պատմությունը զարդարել հաղթանակի փառապսակով: Այդ հերոսներից շատերը տուն դարձան և իրենց «սուրը փառքով դրեցին պատյան»: Նրանք իրենց ամենօրյա տքնաջան աշխատանքով ոչ միայն բուժեցին պատերազմի վերքերն ու վերացրին արհավիրքի հետքերը, այլև հարաճուն եռանդով կերտում են նորոգ ու հզոր հայրենիք: Թիկունքում թե ռազմի դաշտում հայ մարդն ապրեց պատերազմի արհավիրքը և թիկունքում թե ռազմադաշտում՝ իր լուման ներդրեց Հաղթանակի գործին:

Համաժողովրդական տոնի այս օրերին խմբագրությունը հարցարանով դիմեց հայ մշակույթի մի քանի գործիչների՝ արձագանքելու հայ ժողովրդի այդօրյա մտորումներին ու մտահոգություններին: Մեր հարցապրույցին մասնակցում են.

Ա. **Վարդգես Համազասպյան**—Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ, պատմական գիտությունների թեկնածու, բազմամյա մանկավարժ: Երբ պատերազմն սկսվեց, նա երեսուն տարեկան էր, և մնաց թիկունքում՝ իբրև լուսավորության և բարձրագույն կրթության ճակատի աշխատող:

Բ. **Աշոտ Աբրահամյան**—ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, հայտնի բանասեր և բազմամյա մանկավարժ: Երբ պատերազմն սկսվեց, նա 23 տարեկան էր: Ռազմաճակատ չուղարկվեց, որովհետև պետք էր կենդանի պահել կյանքի երակը նաև թիկունքում, դպրոցը պետք էր պահել, իսկ Հրազդանի շրջանը հայոց լեզվի և գրականության ուսուցչի կարիք շատ ուներ: Հաճախ մեկ ուսուցիչ ստիպված էր կատարել մի քանի ուսուցչի աշխատանք: Նրա ստորագրությունը կա հայ ժողովրդի կողմից ռազմաճակատի հայ մարտիկներին ուղղված նամակի տակ:

Գ. **Հովհաննես Մուրադյան**—Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի վարիչ: Երբ պատերազմն սկսվեց, նա 21

տարեկան էր: Նա պատերազմ չմեկնեց, այլ պատերազմը դիմավորեց լայնարձակ երկրի արևմտյան սահմանների վրա իբրև Սովետական բանակի զինվոր, որ կոչվել էր իր սովորական զինվորական ծառայության՝ 1939 թվականին: Պատերազմին մասնակցել է սկզբից մինչև հաղթական ավարտը՝ Չեխոսլովակյան հողում:

ՀԱՐՑ—Դուք ահեղ թշնամու դեմ պայքարում էիք իբրև Սովետական բանակի զինվոր, բայց հիշո՞ւմ էիք նաև, որ հայ եք, և այդ պատերազմով վճռվում էր նաև ձեր փոքրիկ հայրենիքի՝ Սովետական Հայաստանի բախտը:

Վ. Հ.—Պատերազմի առաջին օրից մինչև վերջին օրը մեր գիտակցության մեջ իշխում էր այն համոզումը, որ համաշխարհային երկրորդ պատերազմում վճռվում է նաև մեր փոքրիկ Հայաստանի բախտը, և մեր ազատության, անկախության հարցը կապված է Սովետական Միության հաղթանակի և հիտլերյան ֆաշիզմի ջախջախման ու հետադիմական ուժերի պարտության հետ:

Ա. Ա.—Սովետական բոլոր քաղաքացիները առաջին հերթին շահագրգռված էին երկրի ընդհանուր բախտով և աշխատում ու կռվում էին պարտքի բարձր գիտակցությամբ: Հայ ժողովուրդը քաջ գիտեր, որ հաղթանակով որոշվելու էր և իր ճակատագիրը՝ մեր երկրի մյուս ժողովուրդների հետ: Այդ գիտակցությամբ էլ ռազմաճակատներում բազմաթիվ հայ մարտիկներ հերոսացան իրենց սխրագործություններով:

Հ. Մ.—Պատերազմը դժվար էր: Ոչ ոք չի կարող պարծենալ, թե ինքը ծնվել է որպես զինվոր: Զինվոր դառնում են աստիճանաբար՝ մարտերի բոցերում թրծվելով, վարժվելով պատերազմի դաժանություններին, կյանքի անսովոր պայմաններին, որ լի է անակնկալներով ու զրկանքներով, ցավերով ու մահերով: Մեր սիրտն ատելությամբ լցվեց դեպի անարգ թշնամին, որը մեզ պարտադրել էր պատերազմը: Պատերազմում ես կռվում էի մեր երկրի տարբեր ազգությունների ներկայացուցիչների հետ՝ կողք-կողքի: Բնական է, որ նրանց միջավայրում ես չէի կարող մառանալ իմ ազգությունը, իմ հայ լինելը: Դեռ ավելին, ես առիթներ եմ ունեցել հպարտանալու իմ ազգությամբ, որովհետև մեր ժողովրդի կավակները ամենուրեք հանդես են բերել անսահման նվիրվածություն հայրենիքին: Ինչքան հաճելի էր, երբ անծանոթ կամ նոր միջավայրում մեզ՝ հայերիս վերաբերվում էին սիրով ու հարգանքով. դա հարգանք էր ու սեր՝ մարտերում հերոսացած հայ զինակիցների նկատմամբ:

ՀԱՐՑ—Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքական կառավարությանը հնարավորություն տվեց մարդկության առաջին ցեղասպանությունն իրականացնելով՝ վճռել Արևմտահայաստանի հարցը: Հայտնի է, որ Սովետական փառապանծ բանակի պարտության դեպքում նույն վտանգն էր սպառնում նաև Արևելյան Հայաստանին, որովհետև կըրկին Թուրքիան զինակից էր ֆաշիստական Գերմանիային: Այս մասին հիշողություններ ունե՞ք արդյոք պատերազմի օրերից: Ինչպե՞ս եք գնահատում այդ փաստն այսօր՝ ետդարձ հայացքով:

Վ. Հ.—Պատերազմի բոլոր տարիներին թիկունքում աշխատողները լավ գիտեին, որ Թուրքիան՝ լինելով հիտլերյան Գերմանիայի դաշնակիցը, կաշխատի օգտագործել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի Սովետական Հայաստանը նույնպես ամայացնի, ինչպես դա արեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտահայ-

յաստանում՝ ցեղասպանությամբ: Մեկ քաջ հայտնի էր, որ Թուրքիան ամեն րոպե սպասում էր հարմար առիթի, առաջին հերթին Ստալինգրադի անկմանը: Եվ երբ թշնամին Կովկասյան լեռնաշղթայում էր, մենք լուրջ պատրաստություններ էինք տեսնում դիմադրելու ոչ միայն ֆաշիստական հորդաներին, այլև Թուրքիային: Հայաստանի բոլոր շրջաններում և մասնավորապես Երևանի մատույցներում մեծ պաշտպանողական-կառուցողական աշխատանքներ կատարվեցին, աշխարհապորային միավորումներ ստեղծվեցին, հակատանկային խրամատներ փորվեցին, և ամեն մի խրամատ փորող հայացքն ուղղում էր Արարատին և կգում էր, որ վտանգը գալու էր Թուրքիայից: **Ժողովուրդը պատրաստ էր նոր Սարդարապատ ստեղծելու Թուրքիայի դեմ:**

Ա. Ա.—Այո, առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքական կառավարող շրջանները մեր ժողովրդի հանդեպ իրագործեցին պատմության մեջ աննախադեպ ցեղասպանությունը: Բայց պատերազմը հարմար քող էր ֆաշիստների թուրք նախահայրերի նախագծած հրեշավոր ծրագրի քողարկման համար: Այդ վայրենի սպանդը նախատեսված էր պատերազմից դեռ շատ առաջ: 70 տարի է անցել, բայց ժողովրդի սրտում դեռ թարմ է անմեղ զոհերի ահավոր կսկիծը: Դա ենթակա չէ մոռացման:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ էլ, անշուշտ, արյունակըզակ մարդասպանների հետնորդները կուզեին կրկին գործի դնել յաթաղանը, ջնջել վերածնված հայ ժողովրդին: Բայց սովետական ժողովուրդների փառապանծ հաղթանակը վիթխարի վրահ դարձավ և մեր ժողովրդի համար:

Հ. Մ.—Այսօր արդեն ոչ մի կասկած չի կարող լինել, որ գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը կանխեց 1915 թվականի ցեղասպանության հնարավոր կրկնությունը Արևելյան Հայաստանում: Դեռ պատերազմի ժամանակից հայտնի էր, որ Թուրքիան որպես Գերմանիայի դաշնակից, հարմար առիթի էր սպասում ներխուժելու Անդրկովկաս: Այդ ներխուժումը ճակատագրական պիտի լիներ հայ ժողովրդի համար, որը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ենթարկվեց մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությանը: Պատերազմի սկզբնական շրջանում, երբ ռազմաճակատը դեռևս հեռու էր մեր փոքրիկ հայրենիքից, թուրքական ներխուժման վտանգը գրեթե չէր գիտակցվում: Այդ վտանգի ահավոր հետևանքների գիտակցումը իր ողջ էությամբ հառնեց, երբ գերմանական զորքերը 1942 թ. աշնանը հասան Ստալինգրադին, Հյուսիսային Կովկասում՝ Գրոզնի քաղաքին, երբ Սև ծովի ափերով սողում էին դեպի Անդրկովկաս: Ստալինգրադի անկումը ապդանշան պիտի լիներ թուրքական ներխուժման համար: Ես կարծում եմ, որ ինչպես Ստալինգրադում, այնպես էլ Հյուսիսային Կովկասի և այլ ռազմաճակատներում մարտնչող հայ զինվորականները հենց այդ գիտակցությամբ էլ կռվում էին ֆաշիստական ոհմակների դեմ, համոզված լինելով, որ նենգ ու կատաղի թշնամու դեմ տարած հաղթանակով փրկում են նաև իրենց Հայաստանը:

ՀԱՐՑ—**Ինչպե՞ս ընդունեցիք սփյուռքահայության միջոցներով և Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ «Սասունցի Դավիթ» ազգային շարասյան ստեղծման լուրը:**

Վ. Հ.—Թիկունքի աշխատավորները, նաև անձամբ ես, մեծ ոգևորություն ապրեցինք, երբ կարդացինք Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի ուղերձը՝ ուղղված սփյուռքահայությանը՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելուն:

Այդ ուղերձի միջոցով մենք ծանոթացանք այն մեծ աշխատանքներին, որ կատարվում էին արտասահմանի հայության շրջանում հիտլերյան ֆաշիզմի կործանման գործում: Մենք ապգային մեծ հպարտությամբ էինք խոսում մեր եղբայրների և քույրերի մասին, որոնք Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Բուլղարիայի և այլ երկրների ժողովուրդների շարքերում կռվում էին ֆաշիզմի ժանտախտի դեմ: Այդ ուղերձը հիմք դարձավ, որ սփյուռքահայությունը օգնություն կազմակերպի Սովետական բանակին՝ հաղթանակը արագացնելու համար: Մենք ուրախ էինք, որ սփյուռքահայությունը ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկության և Սովետական Միության հետ պայքարում էր ֆաշիզմի դեմ՝ հանուն ժողովուրդների մշտական խաղաղության:

Ա. Ա.—«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման լուրը ընդունեցինք ուրախությամբ և պարծանքով: Ուրախանում և պարծենում էինք, որ սովետական ժողովուրդների ճակատագրական դժվարին պահին սփյուռքի մեր եղբայրները մեկ հետ են, խորապես ատում են ֆաշիստ մարդակերներին և շահագրգռված են նրանց պարտությամբ: Նրանք քաջ գիտեին, որ այդ աշխարհամարտում վճռվում է նաև իրենց Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի լինել-չլինելու հարցը: Ուստի և հաղթանակի համար մղվող ահեղ պայքարում մուծում էին նաև իրենց լուման:

Հ. Մ.—Գերմանական ֆաշիզմի ջախջախման ու Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի համար մեր ժողովուրդը տվեց ոչ միայն իր զավակների թանկ արյունը: Ամբողջ հայ ժողովուրդը՝ Հայրենիքում և Սփյուռքում, ոտքի կանգնեց սրբազան պատերազմի: Հարազատներից ստացված նամակներից իմացվում էր, որ չնայած պատերազմական ծանր պայմաններին, մեր ժողովուրդն իր անդուլ աշխատանքով, նյութական զոհողություններով ամեն կերպ աջակցում էր բանակին՝ թշնամու դեմ հաղթանակի հասնելու համար: Այս հայրենասիրական շարժումը ծավալվել էր ոչ միայն Մայր Հայրենիքում, այլև Սփյուռքում՝ բոլոր այն գաղթօջախներում, ուր հայեր էին ապրում: Հայտնի է, որ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ սփյուռքահայության միջոցներով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որով մեր սփյուռքահայ քույրերն ու եղբայրները անմիջական մասնակցություն ունեցան ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Նման նախաձեռնությունն ու նրա իրականացումը աննախադեպ էր ամբողջ պատերազմի ընթացքում: Կասկած չի կարող լինել, որ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման լուրն ու փաստը ապգային հպարտությամբ էր լցնում մեր ռազմիկների սրտերը և նրանց մղում նոր սխրանքների:

ՀԱՐՑ—**Խաղաղությունը ժամանակակից մարդկության մեծագույն հրամայականն է: Ինչքանո՞վ է դա անհրաժեշտ մանավանդ մեր ժողովրդին (Ապրիլին ոգեկոչեցինք Մեծ եղեռնի զոհերի արդար հիշատակի 70-ամյակը):**

Վ. Հ.—Հայ ժողովուրդը համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին

մեկ անգամ ևս համոզվեց, թե որքան թանկ է մարդկության համար և մասնավորապես հայ ժողովրդի համար խաղաղությունը, որովհետև միայն խաղաղության, ստեղծարար աշխատանքի շնորհիվ հայ ժողովուրդը կարողացավ տիտանական քայլերով առաջընթաց ապրել, բարգավաճել ու ճանաչում բերել իր ստեղծագործ աշխատանքին: Խաղաղության միջոցով միայն կարողացավ ստեղծել Հայրենիքի և Սփյուռքի միասնությունը, սփյուռքահայության գոյատևումը և նրա համախմբումը Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջ:

Ա. Ա.—Հայրենական պատերազմի հաղթանակը մեր երկրի ժողովուրդներին բերեց խաղաղություն՝ իր բոլոր ցանկալի հետևանքներով: Երկիրը լարված ստեղծագործական աշխատանքով կարճ ժամանակում բուժեց իր վերքերը և ապա անցավ մեծ առաջընթացի: Առասպելական ծավալում ստացավ շինարարությունը, հզոր թափով զարգացան տնտեսությունը, գիտությունը, մշակույթը:

Սովետական բազմազգ ժողովուրդների մեծ ընտանիքում խաղաղ պայմաններում վիթխարի առաջընթաց ունեցավ նաև հայ ժողովուրդը: Ոչ ոք չի կարող ժխտել, որ հայ մարդը երբեք չի ունեցել այնպիսի բարեկեցիկ կյանք, ինչպիսին նա ունի այժմ: Խաղաղությունը մեծ գործոն է: Նրանից է կախված մարդու ապահովությունը: Եվ ահա թե ինչու մեր ժողովուրդն այնքան թանկ է գնահատում դա և ընթանում է հանուն խաղաղության պահպանման մարտընչողների առաջավոր շարքերում:

Հ. Մ.—Այսօր նշում ենք ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի փառապանծ 40-ամյակը, որը ձեռք բերվեց սովետական ժողովրդի հերոսական պայքարով, բայց և նրա անլուր տառապանքների ու 20 միլիոն զոհերի գնով: Այս քառասուն տարիների ընթացքում աշխարհն անճանաչելիորեն փոխվել է: Շենացել ու բարգավաճել է մեր երկիրը: Խաղաղ-ստեղծագործ այս տարիների ընթացքում անճանաչելիորեն փոխվել է նաև մեր սիրելի Հայաստանը, նրա գյուղերն ու քաղաքները:

Բայց աշխարհն այսօր կրկին անհանգիստ է: Մարդկության գլխին կախված է պատերազմի վտանգը, այս անգամ՝ հյուլեական պատերազմի վտանգը, որի բռնկման դեպքում վերջ կդրվի կյանքին երկիր մոլորակի վրա: Նրանք, ովքեր տեսել ու իրենց կաշվի վրա զգացել են անցյալ պատերազմը, շատ լավ պատկերացնում են, թե ինչ կբերի նա ժողովուրդներին՝ իր այսօրվա ռազմական մեքենաներով և վենքի մահաշունչ տեսակներով: Ահա թե ինչու այսօր համայն մարդկության մեծագույն նպատակը խաղաղության պահպանումն է: Միայն ու միայն խաղաղության պահպանմամբ և խաղաղ պայմաններում է հնարավոր հասնել առաջադիմության, ժողովուրդների ստեղծագործ ուժերի ծաղկման և նրանց նյութական, հոգևոր և մտավոր պահանջմունքների բավարարման: Այն առավել պետք է մեզ՝ մեր աշխատասեր ու ստեղծագործ ժողովրդին, որը 1915 թ. ցեղասպանության ճիրաններից փրկված, ապրում է իր վերածնունդը:



ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՑ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԷՔՍՊՐՈՄՏ

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես խուժեցիք վայրագ,

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես ոռնացիք վայրագ,

Բայց մենք հավերժ՝ ենք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես կկորչեք վայրագ:

1941 թ.



ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

ԽԱՉԸ

Գյուղակի ծայրին, տխուր, առանձին,
Հին շիրմատունը ննջո՞ւմ է լռին.—

Այս ճամփո՛վ մորը բերին թաղեցին,
Նո՛ւյն ճամփով որդուն տանում են կռիվ...

Մամռոտած մի խաչ նայում է ճամփին,
Եվ կարծես լալի՞ս՝ անձրևով թացված.

Կարծես մա՞յրն է իր միակ կավակին
Ե՞տ կանչում՝ ոսկրոտ ձեռքերը պարված:

1942
Նադենբերգ

Մեծ թվով հայ մտավորականներ մասնակցեցին Հայրենական պատերազմին և իրենց ոգորումներով, երբեմն նույնիսկ արյամբ պսակեցին իրենց ժողովրդի մարտական փառքը: Այդ մտավորականներից էր նաև բանաստեղծ և բազմավաստակ հայագետ դոկտ. պրոֆ. Ասատուր Մնացականյանը: Այս երկու բանաստեղծությունները գերության տխուր օրերի արձագանքներ են՝ բանաստեղծի պայծառ հիշատակը պանծացնող:

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏ

Մնաք բարով, Հայաստան, Իսահակյան ու Մասիս,
Զանգու, ջինջ ու կարկաչուն, վեհ Արագած ու Սևան,
Մնաք բարով՝ Արարատ, կանաչ ափեր Արաքսի,
Եվ դու, անո՜ւշ, իմ անո՜ւշ, անո՜ւշ Երևան:

Երևանյան տոթ ու կով, երևանյան արեգակ,
Մրգեր, մրգեր մեղրածոր, երեկոներ ու լուսին,
Ես քշվում եմ դեպ հեռուն՝ ձեր կարոտն իմ կրծքի տակ,
Երապելով անընդհատ, ամեն րոպե ձեր մասին:

Օ՜, այդ կարոտն անսահման և հարաճուն, և հզոր,
Անշուշտ ինձ ետ կբերի դեպ ձեր գիրկը դյութական,
Եվ ձեր բույրը շնչելով, պուրակներում ամեն օր,
Կթարմանամ որպես տունկ՝ թույլ ու տկար, հյութաքամ:

Եվ վարսերն իմ, որ այն ժամ ճերմակ կլինեն,
Կսևանան վերստին, կառնեն սաթի գույն,
Կմանկանամ ես նորից, «բոստան» խաղ կանեմ
Փոշիներում փողոցի կամ վառ մեր այգում...

Մնաք բարով Հայաստան, Իսահակյան ու Մասիս,
Զանգու՝ ջինջ ու կարկաչուն, վեհ Արագած ու Սևան,
Իմ հայրենի Ոսկեվազ, վմրուխտ ափեր Քասախի,
Եվ դու անո՜ւշ, իմ անո՜ւշ, անո՜ւշ Երևան:

25.06.42
Բեսարաբիա (գնացքում)

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Եթե կաս արդեն, դո՛ւ, ռումբ թշնամու
Եվ պիտի ընկնես իմ հայրենիքում,
Թող քեզ ուղեկցի ընթացքը քամու,
Բերի նետելու իմ վշտոտ հոգում:

Որ՝ չընկնես այնտեղ, ուր ապրում են արդ
Հարապատներս՝ որբացածի պես,
Ուր ննջում է իմ մանկիկը հանդարտ,
Ուր թողել եմ իմ խնդությունը ես:

Ի՛մ սրտում պայթիր, որպեսզի հանկարծ,
Չպայթես քիվին՝ ձեռագրրատան.
Եվ ո՛չ մի, ո՛չ մի, ո՛չ մի դաժան կայծ,
Չհուպի անդորրն այդ վեհ սրբության:

Բեր ինձ ավերման քո բոցերը վառ,
Թող բվիկ-բվիկ մտնեմ մահու երթ,
Միայն թե ապրեն մեր նախնյաց պայծառ
Հիշատակները մագաղաթաթերթ.

Միայն թե ապրի մանկիկս անվտանգ,
Ու չմարի ծուխն իմ հայրենի տան...

20.03.43
Գալաֆատ





ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՅՍԵՐԸ*

Երեկո է. շրջում եմ ես
Երևանի փողոցներում,
Երևանում՝ կյանք ու հանդես,
Նորի՛ց լույսեր, նորի՛ց գարուն.
Ու հորդում են կարոտ ու խինդ
Դառն օրերի մթնում՝ սանձած.
— Ողջո՛ւյն, լույսեր մեր անձկալի,
Հարազատնե՛ր վերադարձած...

Ձեր շողերով հազարաչյա
Ողողվել են սրտերն ասես.
Բայց իմ սիրտը մթնեց մի պահ,
Տխրեց, մի մութ փողոցի պես.
Հեռու ու լուռ մի հիշատակ
Ձարթնեց՝ ծանոթ ձեր շողերից.
Իմ դեմ ելավ պատկեր մի թանկ,
Որ էլ չկա, որ կորցրինք...

... Մի տղայի գիտեի ես,
Թուխ ու գվարթ մի տղայի.
Հոգում՝ հազար երազ ու երգ,
Կրծքում ավյունը ջահելի.
Իր ձեռքով էր վառել նա ձեզ,
Փշրել ժայռե կամքը լեռան,
Բանտել ջրի խռովքը վես
Ու ձեզ բերել էր Երևան:

Ու սիրում էր ձեզ սրտագին
Մի սիրահար պատանու պես.
Ու երբ մի օր ոսոխը բիրտ,
Որպես գիշեր, պարուրեց մեզ,
Երբ մարեցիք, ու մութ իջավ
Երևանի փողոցներում,
Նա ձեզ համար կռի՛վ գնաց.
Նա ձեզ համար մեռա՛վ կռվում:

Մեռավ՝ սիրած Երևանի
Ու ձեր կարոտն իր սրտի մեջ.
Իր բազկո՛վ էր ձեզ կյանք տվել,
Իր արյունո՛վ պահեց անշեջ.
Եվ դո՛ւք, լույսե՛ր երախտագետ,
Որ վառվում եք հիմա էլի,
Ձեր շողերով անմար պահեք
Հուշը՝ ջահել այն տղայի:

Եվ դու անցո՛ղդ, անցնե՛ս երբ այս
Լուսաողող փողոցներով,
Բարի խոսքո՛վ հիշիր նրան,
Այն տղայի՛ն հիշիր սիրով,
Որ իր այրվող սիրտն է դրել
Ասես՝ պայծառ այս լույսերում,
Որ լույսերը հավե՛րժ վառվեն
Երևանի փողոցներում..

1944 թ.

* Գրված լուսաքողարկման վերացման առիթով:



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԸ

Մեր սուրը փառքով դրեցինք պատյան,—
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան,
Երգեր են հորդում վվարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաչ,
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,
Մի մարդ սեղան է բացել տան առաջ,
Լցրել թասերը ոսկեփայլ գինով:

Եվ անցորդներին կանչում է, խնդրում,—
Եղբայրներ, որդուս կենացը խմե՛նք.
Հերոս է որդիս, հաղթեց թշնամուն,
Ձեր որդիների կենացն էլ խմենք:

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եվ վարկում նորից գավաթներն իրար:
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ.—
Է՛ս էլ իմ որդուս հանգստյան համար:

Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ.
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում գինին սուրբ հացի վրա:

1945 թ., 9-ը մայիսի



Է. ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԵՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԵԼ ԵՆՔ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Սկսած քրիստոնեության ծագման և վերածնության դարերից, համայն մարդկության լուսավոր գագաթները իրենց վարդապետությունների հիմքում միշտ դրել են մարդասիրությունը, բարին, գեղեցկությունը, խաղաղությունը: «Աստուծո արքայությունը ուտելիք և ըմպելիք չէ, այլ արդարություն և խաղաղություն և խնդություն Սուրբ Հոգով», ասված է Նոր Կտակարանում:

Խաղաղ ու ստեղծարար աշխատանքը մարդկային երջանկության անկյունաքարն է: Խաղաղ ապրելու և երկնելու, արարելու համար մարդը պիտի սեփական անկյուն, հանգրվան ունենա: Այդ հանգրվանը Մայր հողը է, Հայրենիքը, որտեղ ծնվել է և ծլել է մարդ արարածը: Ի՞նչ է Հայրենիքը: Այդ հարցին հանճարեղ Լև Տոլստոյն այսպիսի պատասխան է տվել, «Հայրենիքը դա ամբողջ ժողովուրդն է, որը տվյալ տարածքում իրականացնում է իր պատմական առաջընթացը: Դա ժողովրդի անցյալն է, նրա լեզուն, նրա բնավորությունը, դա պատմության մեջ նրա կողմից կատարվող հեղափոխությունների, նրա պատմական թռիչքների, հանգույցների նպատակն է»:

Առանց Հայրենիքի մարդը, ինչպես ձուկը՝ առանց ջրի: Նախախնամությամբ սահմանված է և հանճարների կողմից բպում անգամ հաստատված, որ միայն լույսն ու գիտությունը, միայն բարի, խաղաղ հարաբերությունները տարբեր ժողովուրդների և ազգերի միջև իրական հնարավորություններ են ստեղծում նրանց բարգավաճման և վերապլաց առաջընթացի համար: Ու չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ չարությունը, եսը, շահամոլությունը, փառասիրությունը, ստորությունը կուգակցում են մարդկային կյանքի ընթացքին, որոնց պոռթկման բարձրագույն դրսևորումը, վինված ընդհարումներն են, պատերազմները: Պատերազմել են նախնադարյան տոհմերն իրար դեմ, ստրուկները ստրուկների դեմ, գյուղացիները ֆեոդալների դեմ և ֆեոդալական պետությունները միմյանց դեմ: Նոր քանակ և նոր որակ ստացան պատերազմները նոր ժամանակաշրջանում: Պատերազմներին միշտ ուղեկցել են մարդկային անհամար զոհեր և նյութական արժեքների վիթխարի կորուստներ: Բնորոշ է, որ սկսած 17-րդ դարից՝ պատերազմներում զոհերի թիվը հարաճուն կերպով ավելացել է: 1600—1699 թթ. տեղի ունեցած պատերազմներում զոհվածների թիվը կազմել է 3,3 միլիոն մարդ, 1700—1800 թթ. 5,3 միլիոն, 1810—1815 թթ. (Նապոլեոնյան պատերազմներ),—3,6 միլիոն, 1815—1914 թթ. 2,2 միլ., 1914—1918 թթ. 10 միլիոն, 1919—1938 թթ. 1,3 միլ. և 1939—1945 թթ. 50 միլիոն: Այսպիսով ոչ ստույգ տվյալներով 1700—1945 թթ. տեղի ունեցած պատերազմներում միայն մարտի դաշտում զոհվածների թիվը կազմում է մոտ 72,5 միլիոն մարդ:

Բնորոշ է նաև այն, որ որպես օրենք պատերազմների ժամանակ կողմերը ձգտում են, որքան հնարավոր է պատերազմի մեջ ալե-

լի համայնապարփակ ներգրավել մարդկային մտքի, տքնության և բանականության արդյունք հանդիսացող գիտության բոլոր նվաճումները: Շահագործող և ուրիշ ժողովուրդներին նվաճելու, ճնշելու տենդով մոլեգնած իշխողները հաճախակի են դիմում վենքի ուժի՝ ուրիշներին ճնշելու և տիրելու համար. նման դեպքերում անպայմանորեն վտանգի ենթարկված ժողովուրդները ոտքի են կանգնում՝ պաշտպանելու իրենց հողը, իրենց տունը և հարազատների կյանքն ու պատիվը:

Հայ ժողովրդին բնավ խորթ չեն նման արդարացի պատերազմներն իր բազում թշնամիների դեմ:

1941 թ. երկարատև ու բազմակողմանիորեն պատրաստվելուց հետո ֆաշիստական Գերմանիան և իր դաշնակիցները անակնկալ հարձակում նախաձեռնեցին Սովետական Միության դեմ՝ նպատակ ունենալով տիրել մեր երկրին, ջլատել նրա կազմը, բնաջնջել և ստրկացնել բնակչությանը: Նրանք արդեն որոշել էին այն վարչական բաժանումները, որոնք պետք է իրականացնեին վենքի ուժով և գաղութացնեին: Մինչ այդ Հիտլերն իր դաժան միջնադարյան բռնապետությունն էր հաստատել Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում, Նորվեգիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Հարավ Արաբիայում և այլուր:

Սովետական Միությունը կանգնեց մեծ փորձության առաջ: Վտանգը ուժեղ էր, լի ամենապարհուրեղ հետևանքներով: Թշնամին ուներ գերազանցություն իր կազմակերպվածությամբ և տեխնիկական հագեցվածությամբ:

Սովետական կառավարությունը թե կենտրոնում և թե տեղերում իր երկրի մարդկային ու նյութական բոլոր հնարավորությունները ի գործ դրեց հանուն երկրի պաշտպանության:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը մարտի մեկնելիս

Ամենից առաջ բոլոր քաղաքացիներին հարկավոր էր ներշնչել այն միտքը, որ նրանք արագորեն պետք է վերափոխեն իրենց հայացքները, մտածելակերպը, ապրելակերպը, հրաժարվեն խաղաղ տարիներին հատուկ մտայնություններից և իրենց ողջ գործելակերպում ելնեն պատերազմական իրադարձությունից, Հայրենիքի պաշտպանության շահերից:

Ամբողջ Սովետական ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմ հայտարարեց ֆաշիստական Գերմանիային: Սրբազան պատերազմ էր դա, քանզի մեր ժողովուրդն այդ կոհողություններն անում էր հանուն իր սուրբ օջախի՝ իր կնոջ, իր երեխաների, իր

ծնողների ու հարազատների կյանքն ու պատիվը պաշտպանելու համար:

Եվ այսպես, 1941 թվականի հունիսի 22-ից մինչև 1945 թ. մայիսի 9-ը, մոտ 1417 օր, գիշեր ու ցերեկ, ցամաքում, ծովում, ծովի տակ, օդում երբեք չդադարեց հրացաններից, ավտոմատ վենքերից, հրանոթներից, տանկերից, օդանավերից արձակվող գնդակների, արկերի, ռումբերի հեղեղը: Քանի-քանի գյուղեր, քաղաքներ, դպրոցներ, վեհաշուք թանգարաններ (այդ թվում Լենինգրադի պատմական ոսկեզօծ պալատներ) հիվանդանոցներ, կամուրջներ, ճարտարապետական հավվագյուտ կառույցներ, աննման գրադարաններ հողմացրիվ արվեցին, քանի-քանի միլիոն տղամարդիկ դեռևս ծաղկուն տարիքում հրաժեշտ տվեցին կյանքին, քանի-քանի միլիոն մայրեր ցայսօր արցունք են թափում կորցրած զավակների համար, որոնց մի մասը անգամ չգիտի նրանց շիրիմների տեղը:

Ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմում բոլոր երկրների տված զոհերի թիվը հասնում է 50 միլիոնի, իսկ Սովետական Միությունը՝ 20 միլիոն: Այս թվերը շատ բան են ասում:

Հայրենական մեծ պատերազմի պատմությունը շատ բազմակողմանի է ու բարդ: Այն լի է ողբերգական, ծայրահեղ դժվարին պահերով, որոնք կապված են պատերազմի սկզբնական շրջանի մեր անհաջողությունների ու նահանջների հետ: Ծանր, դժնդակ մի շրջան էր այդ, երբ երկրի Եվրոպական շրջանները, Մերձբալթյան երկրամասերը, Ուկրիանան, Բելոռուսիան, Հյուսիսային Կովկասը, Ռուսական մի շարք մարզեր, ընդհուպ մինչև Վոլգայի ափերն ու Կովկասյան լեռները, մնացին ֆաշիստական հորդաների կրունկի տակ: Բայց Հայրենական մեծ պատերազմի պատմությունը լի է նաև մեծ հաղթանակների հետ կապված բերկրալից պահերով, երբ Սովետական զինված ուժերը հուժկու հարվածներ հասցնելով թշնամուն, դուրս էին քշում նրան, ոչ միայն մեր Հայրենի երկրի սահմաններից, այլ նաև Եվրոպական շատ երկրներից: Այդ պատերազմի պատմությունը լի է համաշխարհային պատմական մեծ նշանակություն ունեցող փառահեղ դրվագներով: Ընդունված է, որ պատմության մեջ տեղի ունեցած պատերազմների պատմությունը հիշելու ժամանակ այն կապվում է վճռական նշանակություն ունեցող որևէ ճակատամարտի հետ: Հայրենական մեծ պատերազմում մենք սովորաբար հիշատակում ենք, որ թշնամու առաջին լուրջ պարտությունը հասցրել են Մոսկվայի մատույցներում 1941 թ. դեկտեմբերին և 1942 թ.

Սովետական զինվորները «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան առաջ

հունվարին: Անշուշտ մինչև այդ մեծ ճակատամարտը, արյունահեղ գործողություններ էին ծավալվել Լենինգրադի, Բրեստի, Կիևի, Օդեսայի, Սմոլենսկի պաշտպանության համար, բայց Մոսկվայի տակ գերմանացիների պարտությունն այնքան շոշափելի էր, որ մեկընդմիշտ հոդս ցնդեց Գերմանական վենքի անհաղթելիության առասպելը: Մոսկվայի մատույցներում մղված մեծ ճակատամարտին հաջորդեցին հռչակավոր Ստալինգրադյան (1942 թ. աշնանը—1943 թ. սկզբներին), Օրյոլ-Կուրսկի (1943 թ. ամռանը), Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ղրիմի ազատագրումը (1943—1944 թթ.), պատերազմական գործողությունների փոխադրումը մեր սահմաններից դուրս (1944—1945 թթ.): Հայրենիքը ազատագրելուց հետո, Սովետական Միության զորքերը անհապաղ ձեռնամուխ եղան իրենց ազատագրական առաքելության իրականացմանը: Սովետական Միության հաղթական ու քաջարի բանակները մարտերով հասան Եվրոպական բազմաթիվ երկրների մայրաքաղաքները՝ Հելսինգֆորս, Վարշավա, Բուխարեստ, Սոֆիա, Բելգրադ, Բուդապեշտ, Վիեննա, Պրագա, Բրատիսլավա և վերջապես հաղթանակի դրոշ ծածանեցին Բեռլինում, Ռայխստագի շենքի վրա:

Աշխարհում շատերն էին հակված կարծելու, որ Հիտլերին կհաջողվի հաղթել Սովետական Միությանը, և այն, ինչ տեղի ունեցավ, շատերը հրաշք համարեցին: Հրաշքն իրոք հրաշք էր, եթե մի պահ ռազմաճակատի գծին նայենք, 1942 թ. նոյեմբերին, երբ թշնամին Վոլգայի ափերին էր ու Մոսկվան, և նայենք նույն քարտեզին, 1945 թ. ապրիլին, երբ Կարմիր բանակը մարտեր էր մղում Բեռլինի փողոցներում: Բայց այստեղ հրաշք չկար:

Նախախնամությամբ որոշված էր, որ չարը, հետադեմը, բիրտը, բռնապետությունը, ուրիշներին տառապանքներ պատճառողները դատապարտված են կործանման: Ապդումն ունի իր հակազդումը: Ֆաշիզմի հավակնությունները՝ կեղեքել մեր երկրի ժողովուրդներին, ոտքի հանեց ողջ սովետական մարդկանց, մասսայական հերոսություն ճակատում և թիկունքում, անձնազոհություն, անհողդողդ կամք, վառ հայրենասիրություն, ահա ինչը հրաշքի վերածեց մեր արդար գործը: Միանգամից հորիզոնի վրա հայտնվեցին տաղանդավոր զորավարների մի ողջ սերունդ, Ժուկով, Վասիլևսկի, Կոնև, Բաղրամյան, Իսակով, Բաբաջանյան, Ռոկոսովսկի, Տոլբուխին, Մալինովսկի և շատ ուրիշներ, որոնք իրենց խելքով, կամքով, հմտություններով կառավարում էին տասնյակ միլիոններից կազմված մեր զորքերի գործողությունները:

Բայց մենք հակված ենք հաղթանակն ապահովող նախապայմանների շարքում առաջնակարգ նշանակություն տալ մեր երկրում ապրող բոլոր ժողովուրդների միասնությանը, եղբայրությանը, բարեկամությանը, որոնց հիմնական ուժն անշուշտ ռուս մեծ ու հերոսական ազգն էր:

Սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում պատերազմի տարիներին մի առանձին ուժգնությամբ փայլեց հայ ժողովրդի հոգեկան և ֆիզիկական կարողությունը, նրա տաղանդը, հնարագիտությունը և սուրբ պարտքի զգացումը Հայրենիքի հանդեպ:

Ու երբ այդպես ենք ասում, մենք սոսկ հայտնաբերություն չենք անում, այլ հիմնվում ենք անառարկելի փաստերի ու իրական գործերի վրա:

Սովետական Հայաստանում և Սովետական Միության մյուս հանրապետություններում ու քաղաքներում ապրող վենքի ընդունակ բոլոր հայերը ի վեն ելան: Եթե դրանց բոլորին ի մի համախմբեին, ապա դա մի մեծ բանակ կլիներ, որն իր քանակով կգերազանցեր Նապոլեոն Բոնապարտի 1812 թ. այն բանակին, որով նա անցել է Նեման գետը, Ռուսաստանի վրա հարձակվելու համար: Հատկանշական է, որ հայերը Սովետական զինված ուժերի համակարգում իրենց դրսևորում էին ռազմական այնքան բարդ կյանքի բոլոր ոլորտներում: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկրի պաշտպանության հետ կապված բոլոր օղակներում հայ մարդն իր պատվավոր տեղն է գրավել: Շարքային, քաջ հետևակային, հեծյալ, տանկի վրա, հրետանավոր, կապավոր, ռադիոկապավոր, օդաչու, ծովային, զինվորական ճարտարապետ, զինվորական բժիշկ, վենքի բոլոր տեսակի վարպետներ, քաջ պարտիզաններ և այլն և այլն: Սակայն գլխավորը թերևս այդ չէր: Գլխավորն այն էր, որ շնորհիվ իրենց գրագիտության և անձնական քաջության, շնորհիվ, ինչպես ընդունված է ասել, կազմակերպչական կարողությունների, հազարավոր հայ զինվորականներ Սովետական զինված ուժերում նշանակվեցին ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների հրամանատարներ և այլ ղեկավար աշխատողներ: Կան մի քանի տասնյակ հայ գնդապետներ և գեներալներ, որոնք ղեկավարել են հարյուր հազարավոր մարտիկների և նրանց մարտի տարել: Հայ զինվորականները դրսևորել են իրենց նաև բարձրագույն օղակներում, և դրանց շարքում առաջին հերթին պետք է հիշատակել ծովակալ, աշխարհահռչակ գիտնական Հովհաննես Իսակովին, մարշալ Հովհաննես Բաղրամյանին, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Հ. Բաբաջանյա-

նին, օդային զորքերի մարշալ Խանփերյանցին, ականավոր հրետանավոր Պարսեղյանին, Վեքիլյանին: Հռչակավոր ֆիզիոլոգ, ակադեմիկոս Լևոն Օրբելին հագել էր բժշկական ծառայության գեներալ-գնդապետի համազգեստ և հոգում իր վիրավոր զինվորների բուժման գործի կազմակերպումը: Տաղանդավոր ինժեներ Յոլյանը ղեկավարում էր ամենաժամանակակից և ամենահզոր հրետանային գործարանի աշխատանքները: Հոյակապ կոնստրուկտոր Արտեմ Միկոյանը նորնոր օդանավեր էր ստեղծում բանակի համար: Անաստաս Միկոյանը գտնվում էր պետության և բանակի ղեկավարման ամենավերին օղակում. նա պետական պաշտպանության կոմիտեի անդամ էր և ղեկավարում էր ամբողջ բանակի մատակարարման գործը: Հովհաննես Թևոսյանը՝ մի արտակարգ ընդունակ մասնագետ, ղեկավարում էր երկրի սև մետաղամշակման նախապատրաստությունը և այլ կարևոր բնագավառներ:

Մենք միայն մի փոքր մասն ենք թվարկում, ցույց տալու և հպարտանալու, որ հայերը պատերազմի սոսկ մասնակիցներ չեն եղել, այլ ակտիվ, ստեղծագործող, գյուտարար, նաև ղեկավար մասնակիցներ:

Սակայն մենք դեռ չնշեցինք ամենաբնորոշող և կարևորագույն գործոններից, ուշադրության խիստ արժանի երևույթներից մեկը, որով բնորոշվում է հայ ժողովրդի՝ հաղթանակում ունեցած ներդրումը:

Հայ մտավորականները լավ գիտեն, որ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հերոս հոգևորական Ներսես Աշտարակեցուն հաջողվել էր մեծ դժվարությամբ մի քանի մարտական ջոկատներ ստեղծել հայ կամավորներից, որոնք գեներալ Պասկևիչի բանակում քաջաբար կռվել են պարսիկների դեմ, մասնակցել Երևանի բերդի գրավմանը: Նրանցից ոմանք արժանացել են մարտական պարգևների: Այդ կամավորները մի տեսակ մարմնավորում էին հայ և ռուս ժողովուրդների մարտական համագործակցությունը: 1877—1878 թթ. ռուս-տաճկական պատերազմին, հայորդի տաղանդավոր զորավար Լոռիս-Մելիքովի բանակում ևս կային հայ կամավորներ, որոնք ռուս քաջարի զինվորների հետ կողք-կողքի մարտնչում էին թուրքական հրոսակախմբերի դեմ: 1914—1917 թթ. ռուսական Կովկասյան բանակի մարտակարգերում քաջաբար կռվում էին հայկական կամավորական զորամասերը, որոնցից մեկի գլուխ կանգնած էր ազգային հերոս Անդրանիկը:

1918—1920 թթ. թուրքերի արշավանքներին հակահարված տալու համար ստեղծվել էին Հայկական դիվիզիաներ (2-ը), ապա հայկական կորպուս, գեներալ Նազարբեկյանի հրամանատարությամբ: Հայտնի են այդ կորպուսի մաքառումները Երզնկայից մինչև Ալեքսանդրապոլ թուրքերի դեմ մղած կռիվներում: Առանձնապես հայրենասիրությամբ են հիշվում Հայկական զորամասերի քաջագործությունները Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում, որտեղ աչքի ընկան զորավարներ Անդրանիկի և Փիրումյանի գնդերը: Այս փաստերը ցույց են տալիս, որ հայ ժողովուրդն ընդունակ է և ի վիճակի ինքնուրույն զորամիավորումներ ստեղծելու:

Հայ ժողովրդի այդ մարտական ավանդությունները մի առանձին փայլով դրսևորվեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Մեր պատմության մեջ առաջին անգամ միանգամից Սովետական Հայաստանի տարածքի վրա կազմակերպվեցին հինգ հայկական դիվիզիաներ, որոնցից յուրաքանչյուրի անձնակազմը հասնում էր մոտ 15000 մարդու: Դա մեծ պատիվ է, որ հայ ժողովուրդը իր զավակներից կազմեց 5 դիվիզիա (ամեն մի դիվիզիայում չորս գունդ և 7 առանձին զորամասեր), որտեղ ամբողջ սպայակազմը հայեր էին (միայն հայկական դիվիզիաներում մոտ 7000 հայ սպաներ և ռազմական մասնագետներ կային), իսկ դա շատ մեծ բան էր: Բայց գլխավորը թերևս դիվիզիաների ստեղծումը և ուսուցման կազմակերպումը չէր, այլ այն, որ այդ բոլոր դիվիզիաները փայլուն կերպով արդարացրել են իրենց գոյությունը մարտի դաշտում: Ղրիմի թերակղզում ֆաշիստական հորդաների դեմ մարտնչեց Հայկական 320-րդ դիվիզիան՝ քաջ գնդապետ Սիմոն Զաքյանի հրամանատարությամբ: Զաքյանը հերոսի մահով ընկավ մարտի դաշտում: Նրա աճյունը հանգչում է Երևանում: Սև ծովի ափերի պաշտպանմանը հերոսաբար մասնակցել են Հայկական 408-րդ դիվիզիաի գնդերը: Գոռ մարտերի դաշտերում իրեն մի առանձին փառքով պսակեց Հայկական 76-րդ դիվիզիան, որի պատվավոր կոչումներն ու պարգևները վկայում են այդ մասին: Էլ ավելի փառահեղ են եղել Հայկական 409-րդ և 89-րդ դիվիզիաների մարտական ուղիները: 409-րդ հայկական դիվիզիան կազմավորվել է Ստեփանավանում և Լենինականում: Նրա զորամասերը սկզբում պաշտպանում էին Սովետական Միության պետական սահմանները, ապա մարտնչել են գերմանաֆաշիստական զորքերի դեմ Հյուսիսային Կովկասում (ծայրից ծայր), ամբողջ Ուկրաինայում, նրա արևելյան սահմաններից մինչև արևմտյան սահմանները, ապա Մոլդավիայում, Ռումինիայում, Հունգարիայում, Ավստրիայում և Չեխոսլովակիայում: Դիվիզիան արժանացավ Կիրովոգրադյան և Բրատիսլավյան պատվա-

վոր կոչումների, Բոգդան Խմելնիցկու շքանշանի, նրա բոլոր գնդերը ևս ստացան պատվավոր կոչումներ, հավարավոր մարտիկներ պարգևատրվեցին Կառավարական բարձր պարգևներով: Եվ մի՞թե մեծ պատիվ չէ, որ հայկական դիվիզիան թշնամու դեմ մաքառել է Եվրոպական հինգ պետությունների մայրաքաղաքներում:

Բոլորին հայտնի է, թե որպիսի փառքով է իրեն պսակել Հայկական 89-րդ դիվիզիան, որը մարտնչել է Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Լեհաստանում և մասնակցել է Բեռլինի գրոհներին: Այդ դիվիզիային շնորհվել է «Թամանյան» պատվավոր կոչում և երեք շքանշաններ: Հավարավոր սպաներ և զինվորներ արժանացել են կառավարական բարձր պարգևների:

Ստացվում է, որ չնայած վենքի տակ կանչված հայ մարդկանց ճնշող մեծամասնությունը ծառայում էր երկրի զինված ուժերի բոլոր զորամասերում, հայ ժողովուրդը կարողացել է ստեղծել նաև շատ հայկական, ազգային զորամասեր, որոնք Սովետական բանակի հարյուրավոր դիվիզիաների շարքերում պայքարել են ընդհանուր թշնամու դեմ: Սա հայ ժողովրդի խոշոր և շատ շոշափելի ներդրումներից մեկն է մեծ Հայրենականում:

Այն մասին, թե հայ ժողովրդի զավակները ի՞նչ քաջագործություններ են կատարել ռազմի դաշտերում, բավական է հիշեցնել, որ ավելի քան 70000 հայ մարտիկներ իրենց անձնական սխրանքների համար պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով, իսկ 103 հոգի արժանացել են բարձրագույն պարգևի՝ Սովետական Միության հերոսի կոչման: Զորքերի ղեկավարման բարդ գործում ցուցաբերած կարողությունների համար պատերազմի տարիներին և նրանից հետո ավելի քան 100 հայ զինվորականներ արժանացել են գեներալի կոչման:

Հատկանշական է, որ պատերազմից հետո խաղաղ տարիներին մարշալ Բաղրամյանը եղել է ոչ միայն պաշտպանության մինիստրի տեղակալ, այլ նաև երկրի ամենաբարձր ռազմական հաստատության՝ Գերագույն շտաբի ակադեմիայի ղեկավար, մի պաշտոն, որ սովորաբար վստահվում է երկրում մեծ հեղինակություն վայելող, տեսականորեն և գործնականորեն շատ լավ պատրաստված ղեկավարի: Զրահատանկային զորքերի ակադեմիայի պետը երկար տարիներ եղել է մարշալ Բաբաջանյանը: Այդ երկու ակադեմիաներում էլ իրենց ուսուցումն անցնում են լավագույն սպաներն ու գեներալները: Մինչև պատերազմը մի որոշ ժամանակ Սովետական Միության ռազմածովային ակադեմիայի պետը եղել է Հովհաննես Իսակովը: Ստացվում է, որ ռազմական բարձրագույն ուսումնական երեք կարևորագույն հաստատությունների ղեկավարման գործում մեծ վաստակ ունեն հայ զորավարները:

Մենք չենք խոսի հայ գրողների և բոլոր մտավորականների ակտիվ մասնակցության մասին պատերազմին: Գրողների մեծ մասը հագել էր զինվորական համազգեստ և ինչպես ռուս և մյուս ժողովուրդների գրողները, հայ գրողները ևս եղել են ռազմաճակատներում և իրենց ստեղծագործություններով, խոսքով, գործով մարտի են կոչել մարտիկներին: Ավ. Իսահակյան, Հով. Շիրազ, Ստ. Զորյան, Ն. Զարյան, Հրաչյա Քոչար, Վ. Անանյան, Հմ. Սիրաս, Գ. Բորյան, Հր. Հովհաննիսյան, Ս. Խանզադյան և շատ ու շատ հայ գրողներ իրենց ստեղծագործություններով գովերգել են մեր ժողովրդի անցյալի ու ներկայի մարտական լավագույն ավանդույթները և ոգևորել հայ մարտիկներին իրենց սուրբ գործում:

Մի զարմանալի նախաձեռնություն, ստեղծագործական միտք և աշխատանքային սրխրագործություն ցուցաբերեցին թիկունքում մնացած հայ աշխատավորները, կանայք, ծերերը, երեխաները: Հայաստանը ռազմաճակատ էր ուղարկում տաք հագուստներ, գուլպաներ, ձեռնոցներ, սպիտակեղեն, գլխարկներ, գոտիներ, տասնյակ հավարավոր կապոցներ սննդամթերք, չոր միրգ:

Կարճ ժամանակամիջոցում Երևանի գործարաններում ստեղծվեցին այնպիսի բաժիններ, որոնք ռազմաճակատին խիստ անհրաժեշտ իրեր և տեխնիկական սարքեր էին մատակարարում:

Իրենք, սովետական մարդիկ, ինչպես ամենուրեք, Ռուսաստանում, նույնպես և Հայաստանում շատ ժամանակ վարելով զրկանքներով լի կյանք, ամեն ինչ առաջին հերթին ուղարկում էին ռազմաճակատ, քաջ գիտակցելով, որ այնտեղ, գոռ մարտերի դաշտերում որոշվում է Հայրենիքի բախտը:

Երբ կարդում ես պատերազմի տարիների փաստաթղթեր, որոնցում նկարագրված են հայ կնոջ, պատանու աշխատանքային հերոսությունները, մի պահ չես հավատում, թե որտեղից սնունդ առան այդքան կամք, անձնազոհություն, վեհ զգացումներ:

Մենք այստեղ չենք կարող չնշել այն պատմական լուրջ իրողությունը, որը կապված է սփյուռքի հայության մասնակցության հետ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում:

Պատերազմի տարիներին Սովետական Միության դաշնակիցներ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի բանակներում հավարավոր հայ զինվորներ քաջաբար կռվել են ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցներ

Իտալիայի ու Ճապոնիայի դեմ: Ֆրանսիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Բալկանյան երկրներում, Հարավ Սլովակիայում և այլ երկրներում ծավալված ընդհատակյա դիմադրական շարժումներում համարյա ամենուրեք կարելի է հանդիպել բազմաթիվ հայ անունների:

Հարյուրավոր հայ գերիներ ֆաշիստական մահու ճամբարներից իրական մահն աչքերի առջև ունենալով փախել և միացել են յուրայիններին՝ շարունակելու պայքարը ֆաշիզմի դեմ:

Մի առանձին ուշադրության է արժանի Սուրբ Էջմիածնի նախաձեռնությունը պատերազմի տարիներին: Հայ Եկեղեցին և նրա առաջավոր հոգևորականները Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի գլխավորությամբ ցույց տվեցին, որ նրանք իրենց ժողովրդի հետ են և նրա ծանր պահերին միշտ նեցուկ են նրան:

Ճիշտ է նկատում Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Վազգեն Առաջինը, որ «Հանուն Հայրենական պատերազմի Հաղթանակի սփյուռքի հայությունը ևս մի մարդու նման կանգնած մնաց Մայր Հայրենիքի իր եղբայրների կողքին ու իր պարտքը կատարեց, խորհրդային ռազմական ուժերին նվիրաբերելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունները»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր քարոզներում, թե այստեղ, թե արտասահմանում բազմիցս այն իմաստուն միտքն է արտահայտել, որ խաղաղության և Հայրենիքի անդորրի պաշտպանությունը վեր է ամեն տեսակի այլ վարդապետություններից, որ Աստծու կողմից դատապարտված է այն քայլը, որ հանուն նեղ, սահմանափակ շրջանակների եսասիրական թույնով ներծծված մարդկանց շահերի մարդկությունը նետվի մեծագույն աղետի հորձանուտը:

Հայերն ամենուրեք էին, որտեղ նրանց կարիքը զգացվում էր ֆաշիզմի դեմ պայքարելու համար:

1945 թ. Մայիսի 9-ին Բեռլինում, Սովետական կառավարության անունից փառաբանված զորավար մարշալ Գեորգի Ժուկովը պարտված Գերմանիայի ներկայացուցիչներին թելադրեց անվերապահ կապիտուլյացիայի պայմանները: Գերմանիան պարտված էր իր պատճառած ահավոր հանցագործությունների և մարդկությանը պատճառած անլուր տառապանքների, զրկանքների համար: Ողջ աշխարհի ժողովուրդները ցնծության մեջ էին: Արդարությունը հաղթեց չարությանը: Հաղթանակեց մարդկային բանականությունը:

Չանցած մի քանի ամիս մեր դաշնակիցների համագործակցությամբ խստորեն պատժվեց նաև ռազմատենչ Ճապոնիան:

Համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցան վիթխարի քաղաքական և հոգևոր փոփոխություններ: Աշխարհում նոր պետություններ ստեղծվեցին, ճնշված շատ ժողովուրդներ անկախություն, ազատություն ձեռք բերեցին:

Սովետական հզոր պետությունը, նրա բոլոր ժողովուրդները օրինական հպարտությամբ են հիշում, որ այդ պատմական վիթխարի նշանակություն ունեցող հաղթանակը առաջին հերթին ձեռք է բերվել իրենց աշխատանքով, տքնությամբ, քրտինքով, արյունով, միլիոնավոր զոհերի գնով:

Հայ ժողովուրդը ևս օրինական հպարտությամբ է համակված, որ ինքը կողքից դիտողի դերում չի եղել, այլ համապարփակ ձևով իր հոգևոր և նյութական ներդրումն է կատարել Մեծ Հաղթանակի կերտման պատվավոր գործում:

40 տարի անց, մեր մոլորակի հորիզոններում կրկին չարագուշակ ամպեր են կուտակվում: Կարծես թե հրապարակի վրա Ադոլֆ Հիտլերի ստվերներ են նշմարվում, կարծես թե արյան համար ծարավի նոր հրեշների ձայներ են լսվում: Բանականությունից զուրկ անհատներ երազում են մարդկային մտքի նոր նվաճումները՝ ջերմամիջուկային ուժը օգտագործել չար նպատակների համար: Սակայն պետք է հուսալ և հավատալ, որ համայն աշխարհի բոլոր լուսավոր մարդիկ գերմարդկային ջանքերով, անկախ նրանց ազգային ու դասային պատկանելությունից, ի մի կհամախմբվեն հանուն սրբազան գաղափարի իրականացման, հանուն խաղաղության պահպանման:



Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀԻՆ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Միջին դարերում հայ-ռուսական պատմական և մշակութային կապերի նշանակալից երևույթներից մեկը եղավ Բյուզանդիայից Հին Ռուսիա ներթափանցած Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը: Ռուսիայում նրան կոչում էին «Գրիգոր Սուրբ նահատակ, եպիսկոպոս Մեծ Հայքի» կամ «Գրիգոր Հայաստանցի»: Դրա հետ մեկտեղ ռուսական Եկեղեցին հունական Եկեղեցուց ընդօրինակել էր բացասական վերաբերմունք հայ դավանանքի նկատմամբ, թեև Հին Ռուսիայի և Հայաստանի միջև տեղի չէր ունեցել պատերազմական և քաղաքական որևէ բախում: Ընդհակառակն, թուրք-սելջուկների, թաթար-մոնղոլների և օտարերկրյա այլ հափշտակիչների ներխուժման հետևանքով իրենց հայրենիքից արտագաղթած հայերը կենսագործունեության համար միշտ բարենպաստ պայմաններ, հյուրասեր ընդունելություն էին գտնում Հին Ռուսիայում, հոգատարություն՝ ռուս իշխանությունների կողմից:

Հին Ռուսիայում նույնպես, ինչպես ամենուրեք, հնարավոր էր սովորույթների փոխառումը. դրա համար անհրաժեշտ էր համապատասխան հող, որ համապատասխանի ընդօրինակող ժողովրդի հասարակական պահանջմունքներին: Ստորև մենք կանգ կառնենք այն պատճառների վրա, որոնցով պայմանավորված էր մի կողմից Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Ռուս Եկեղեցում, իսկ մյուս կողմից, այդ Եկեղեցու բացասական վերաբերմունքը Հայ Եկեղեցու նկատմամբ: Ընդսմին, առաջ անցնելով, նշենք, որ այդ երևույթներից թե՛ մեկը, թե՛ մյուսը, անփոփոխ չէր մնում, այլ ապրում էր յուրատեսակ շրջափոխություն. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը երբեմն պարզապես հիշատակվում էր իբրև բազում սրբերից մեկը, երբեմն առանձնացվում էր իբրև հատուկ սրբերի թվում, մերթ նրան համարում էին սուսկ հերետիկոսությունների դեմ պայքարող, մերթ՝ հայ ժողովրդին ի մի համախմբող գործիչ: Իսկ Հայ Եկեղեցու նկատմամբ կեցվածքը տատանվում էր Ռուս Եկեղեցու բացասական վերաբերմունքից, անհանդուրժողականությունից մինչև հակասությունների հետևեհետե հարթումը, իսկ XVI դարից սկսած՝ հասավ բարեկամական փոխհարաբերությունների: Նման վերափոխման պատճառը հանդիսացան ռուս ժողովրդի պատմական կենսապայմանները, Ռուսիայում հայկական բնակավայրերի ստեղծումը, հայերի գործուն մասնակցությունը ռուսական պետության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին, պարսկա-թուրքական բարբարոս լծից իրենց հայրենիքի ազատագրման գործում հայերի կողմնորոշումը դեպի Ռուսաստան:

*
* *

Հին Ռուսիայի հետ ինչ-որ չափով առընչվող առավել վաղ տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի մասին՝ Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածնի (Багрянородный) (913—959 թթ.) «Ժողովուրդների մասին» երկում բերված այն տեղեկությունն է, ըստ որի «վարյագներից դեպի հույները տանող» ճանապարհին, «յոթերորդ սահանքաշեմից հետո (Դնեպր գետի՝ Ղ. Ա.) Սուրբ

Գրիգոր կոչված կղզին է»[1]: Իր ծանոթագրության մեջ Գ. Լասկինը նշում է, որ Կոստանդին Ծիրանածինը նկատի է ունեցել Խորտիցա կղզին, որից հետո շարունակում է. «Տարօրինակ է թվում, սակայն կասկած չկա, որ կղզին կոչել են ի պատիվ Հայաստանի լուսավորչի, որն, ըստ առասպելի, հարավային Ռուսաստանի վրայով անցել է Նոր Հռոմ»[2]:

Սակայն է՛լ ավելի ուշագրավ է Կոստանդին Ծիրանածնի արած լրացումը. «Այդ կղզում աքաղաղներ ու հավեր են մատաղ անում, քանի որ այնտեղ կա մի վիթխարի կաղնի: Մատաղ անողները նետեր են տընկում, ուրիշները դնում են հաց, միս և այն, ինչ յուրաքանչյուրն ունի ըստ իր սովորույթի: Նրանք վիճակ են հանում, թե արդյոք մորթեն-ուտե՞ն հավերը, թե՞ կենդանի ապատ արձակեն նրանց»:

Կոստանդին Ծիրանածնի հաղորդածից չի երևում, թե ով և երբ է Խորտիցա կղզին կոչել Գրիգոր Լուսավորչի անունով, սակայն կարելի է ենթադրել, թե դա արել են հույները, հայ սուրբի՝ Վասիլի I-ի կողմից սահմանված պաշտամունքի պահին[3]: Բացառված չեն նաև այլ վարկածներ. օրինակ, Բյուզանդիայի բանակում ծառայող հայ քաղկեդոնականների կամ հայ միաբնակների մասնակցությունն այդ գործին: Նրանք ծանոթ լինելով Գրիգոր Լուսավորչի Խորտիցա կղզի այցելման վերաբերյալ առասպելին, նրա անունով են կոչել կղզին: Ենթադրվում է նաև դրա հնարավոր կապը Կիևի հնադարյան անվան հետ՝ «Սամբատաս» կամ «Սամվատաս», որը, ինչպես կարծում է Ֆ. Կ. Բրունին, կապված է եղել այդ ամրոցի ամրացմանը հայ իշխան Սմբատ Բագրատունու մասնակցության հետ՝ Բյուզանդիայի կայսր Հայ Լևոն V-ի օրոք (813—820 թթ.)[4]: Ինչ վերաբերվում է մատաղին, ապա Ագաթանգեղոսի վկայությամբ հայերի մոտ հեթանոսական հնագույն ժամանակներից ընդունված է եղել կենդանիների մատաղը՝ հողի բերրիությունը, անասունների մթերատվությունը և այլն ապահովելու նպատակով, ի նշանավորումն գործի հաջողության, մարդուն սպառնացող վտանգի երջանիկ ավարտի, թշնամու նկատմամբ տարած հաղթանակի, մատաղ արած կենդանու արյունը խմում էին ի հաստատումն եղբայրության, հավատարմության ու բարեկամության[5]: Մատաղի արարողությունը Հայ Եկեղեցին ընդունել է Գրիգոր Լուսավորչի օրոք, որը, ինչպես գրում է Ներսես Շնորհալի կաթողիկոսը, ժողովրդին պատվիրել է, որպեսզի հեթանոսական կուռքերի փոխարեն մատաղը արվի միայն Աստծուն և աղ ցանվի անլեկու անասունների մսին[6]: Այս սովորույթը պահպանվել է նաև մինչև մեր օրերը, ընդ որում մատաղ են արվում նաև ոչխարներ, աքաղաղներ՝ առավելապես սև գույնի: Վկայակոչելով հնադարյան հայ հեղինակների աշխատությունները, հայագետ Մ. Բարդիկյանը պնդում է, որ մատաղի սովորույթը Թրակիա են բերել Բյուզանդիայի կայսր Մավրիկոսի (582—602) կողմից այնտեղ գաղթեցրած հայերը[7]: Իր հերթին բուլղարացի գիտնական Պ. Ս. Դույչևը հաղորդում է արևելյան Բուլղարիայի գյուղերում տղամարդկանց տոնի օրը (հունվարի 20-ին՝ փետրվարի 2-ին) աքաղաղներ (որոշ տեղերում միայն սև գույնի աքաղաղներ) մատաղ անելու սովորույթի մասին, որը, ըստ մի շարք աղբյուրների տվյալների, տարածված է եղել նաև արևելյան սլավոնների մոտ[8]: Այսպես, երևան է գալիս Կոստանդին Ծիրանածնի նկարագրած Գրիգոր Լուսավորչի կղզու մատաղի եթե ոչ անմիջական, ապա անուղղակի կապը Հայ Եկեղեցու լուսավորչի սահմանած մատաղի արարողության հետ:

988 թվականին քրիստոնեության ընդունումից հետո, Կիևյան Ռուսիայի ժամանակաշրջանում (XI—XII դդ.) Գրիգոր Լուսավորչի (և Հռիփսիմյան կույսերի) անվան հանդիպում ենք հին սլավոնական գրի մեկ հասած առաջին հուշարձանում՝ «Օստրոմիրյան Ավետարանի» ռուսական խմբագրությունում: Այն արտագրել էր Գրիգոր սարկա-

[1] Сочинения Константина Багрянородного «О фемах» и «О народах», с пред. Гаврилла Ласкина. М., 1890, с. 73.

[2] Անդ, ծանոթագրություն:

[3] Ֆ. Կ. Բրունին գտնում է, որ «Խորտիցա կղզուն սուրբ Գրիգոր Հայաստանցու անունը կարող են շնորհած լինել իրենք բյուզանդացիները ոչ միայն այն կարևոր դերի պատճառով, որ հայերը խաղացել են նրանց մայրաքաղաքում, այլև այն հատուկ հարգանքի շնորհիվ, որ այնտեղ տածել են Գրիգոր Լուսավորչի նկատմամբ»:
(Черноморье. Сб. исследований по истории, географии южной России. *Ф. Бруни*, ч. II, Одесса, 1880, с. 289).

[4] *Տե՛ս Ф. К. Бруни.* О разных названиях Киева в прежнее время.—В кн.: Черноморье, ч. II, с. 297—298.

[5] **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, Վենետիկ, 1835, էջ 74:

[6] Ներսես Շնորհալու ուղերձը Մայր տաճարին: Էջմիածին, 1865 թ., էջ 352—362:

[7] Տես՝ **Մ. Բարդիկյան,** Հայկական մատաղը Թրակիայում, «Էջմիածին», 1958 թ., մայիս, էջ 58:

[8] *П. С. Дуйчев.* К вопросу о языческих жертвоприношениях в Древней Руси.—В кн.: Культурное наследие Древней Руси. М., 1976, с. 31—34.

վագը, մեծ մասամբ բուլղարերեն բնագրից՝ Նովգորոդյան մարկապետ Օստրոմիրի համար (որտեղից և ստացել է իր անվանումը): Այնտեղ, տոմարում, սեպտեմբերի 26-ի համար ասված է. «Հովհաննն Աստվածաբանի և նրա հետ՝ Հռիփսիմե կույսի ու նրա խմբի «Հոգեգալուստի» «Հովհաննի ավետարանի» ընթերցման նշումով»[9], իսկ սեպտեմբերի 30-ին՝ «Հայաստանում սուրբ Գրիգորի և Մատթեոսի ավետարանը XXIV համար 42—47»[10]: Մի այլ հնադարյան թարգմանական ռուսական հուշարձանում՝ «1092 թվականի հրեշտակապետի Ավետարանում» սեպտեմբերի 30-ի տոմարով գրված է. «Մեծն Հայքի սուրբ Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյան կույսերի հիշատակը մի քանի խոսքով սեպտեմբերի 30-ի տոմարով նշված է նաև հնագույն եկեղեցա-սլավոներեն թարգմանված 1095—1097 թթ. պատկանող ճաշոցում: «Մեծն Հայքի սուրբ նահատակ Գրիգորի և Գայանեի ու Հռիփսիմեի», որից հետո գալիս են շարականով՝ նույն ձայնի ինը երգից կազմված շարականներ, որոնց ստեղծումը վերագրում են ժամերգու Հովսեփին (IX դարի II կես), կամ (կես դար ավելի վաղ ապրած) Ֆեոֆանին[12]:

Ճիշտ է, պահպանված մագաղաթյա XI—XII դարերի հուշարձանում կանոնագրով գրված Տոնական Հայսմավուրքում անհասկանալի պատճառով Գրիգոր Լուսավորչի անունը չի հիշատակված: Սակայն ելնելով ոչ միայն վերը վկայակոչված փաստերից, այլև այն բանից, որ հունական ու բուլղարական բնագրերում, որոնցից արված են ռուսերեն թարգմանությունները, սեպտեմբերի 30-ին, որպես կանոն, նշված էր հայ սուրբի հիշատակը, մենք իրավունք ունենք եզրակացնելու նրա բավական լայն հռչակի մասին Կիևյան Ռուսիայում: Այդ մասին է վկայում նրա անվան հիշատակումը ռուսական հնագույն Լավրենտևյան տարեգրությունում, ուր «6754 տարում», հիշատակվում է Չեռնիգովյան իշխան Միխայիլ Վսեվոլոդովիչի ուղևորությունը Բատիյ խանի մոտ և նրա սպանությունը թաթարների կողմից, ինչպես նաև այն մասին, որ Վսեվոլոդի որդի Յարոսլավ իշխանը վախճանվել է գերության մեջ «սեպտեմբեր ամսի 30 սուրբ Գրիգորի հիշատակի օրը»[13]:

Թե ինչո՞ւ հեղինակը չի պարզաբանում, թե ո՞ր Գրիգորի մասին է խոսքը (իսկ այդ անունը, ինչպես հայտնի է, կրել են քրիստոնեական Եկեղեցու աչքի ընկնող գործիչներից շատերը), հարկ է բացատրել այն բանով, որ տարեգիրը վստահ էր, որ իր ընթերցողները իրավեկ են, որ խոսքը Գրիգոր Լուսավորչի մասին է:

* *
*

Ռուս ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի մի այլ կենտրոնն էր Վլադիմիրա-Սուզդալյան Ռուսիան և Մեծն Նովգորոդը, որի նշանակությունը խիստ աճեց Բատիյի արշավանքի հետևանքով Կիևի անկումից և մոնղոլա-թաթարական լծի հաստատումից հետո: Հենց այստեղ՝ Նովգորոդում, մի շարք պատճառներով, որոնց մասին մենք կասենք ստորև, ստեղծվել էր Գրիգոր Լուսավորչի հատուկ պաշտամունքը: 1198 թվականին կառուցված և XII դ. վերջին XIII դարի սկզբին նախշանկարված Սպաս-Ներեդից հռչակավոր տաճարի կենտրոնական խորանի «Հայրապետական շարքի» աջ կողմում պատկերված էր Գրիգոր Լուսավորչի դիմանկարը: Պատկերված է փիլոնակիր կերպարանք, վերևից՝ խաչակիր եմիփորոնով, որի խաչերը, ի տարբերություն կողքին գտնվող այլ սուրբերի եմիփորոնների խաչերի, պատկերված են կենտրոնից հետևիհետե ընդլայնվող հավասարակողմ ճյուղավորմամբ (V—VII դարերում Հայաստանում լայնորեն տարածված տիպի խաչ): Սուրբը գլխաբաց է, աջ ձեռքով նա երկու մատով օրհնում է, իսկ ձախ ձեռքում՝ գիրք է: Պատկերի երկու կողմից՝ մակագրություն «Ario(c) Григори» («Սուրբ Գրիգոր»)[14]: Զգեստասրահի հյուսիսային կողմում «սուրբ կանանց» թվում պատկերված է նաև Հռիփսիմեն՝ «Կույս Հռիփսիմե» մակագրությամբ:

---

[9] Остромирово Евангелие 1056—1057 г. с приложением греческого текста Евангелий. Изд. А. Востоковым. СПб., 1854, с. 226.

[10] Там же.

[11] ОР ГБЛ, Музейное собрание, Ф. 178, № 1666.

[12] Служебные Минеи за сентябрь, октябрь, ноябрь. Труд ординар. акад. И. В. Ягича. Памятники древнерусского языка, т. I, СПб., 1886, с. 227.

[13] ПСРЛ, т. I, М., 1962, с. 471.

[14] См.: *Толстой И., Кондаков Н.,* Русские древности в памятниках искусства, вып. VI. Памятники Владимира, Новгорода и Пскова. СПб., 1899, с. 135. *Успенский А. И.,* Фрески церкви Спаса на Нередице. М., 1910, с. 5, 6, 8 и 24; *Халпахчьян О. Х,* Армяно-русские культурные отношения и отражения в архитектуре. Ереван, 1957, с. 161; *Каковкин А. Я.* Образ Григория Армянского в некоторых памятниках древнерусского искусства.—И, 1976, № 2 (73), с. 166—167.

Սպաս Ներեդիցի տաճարը ավերել են գերմանական զավթիչները 1942 թ.:

Սակայն Սպաս-Ներեդիցայի որմնանկարը Գրիգոր Լուսավորչի միակ նկարը չէր Նովգորոդյան ռուսական եկեղեցիներում: 1361 թվականին կառուցված Թեոդորոս Զորավարի եկեղեցու հյուսիսային սյան վրա շրջանաձև մեդալիոնում վետեղված է հայ սուրբի

Ս. Գրիգոր Լուսավորչի դիմանկարը Սպաս-Ներեդիցի տաճարի որմնանկարների շարքում (ԺԲ դար)

կիսապատկերը: Նրա հագին սովորական փիլոն և եմիփորոն է, ձեռքով նա կըրծքին է սեղմել մի գիրք: Բացատրական մակագրություն չկա: Որմնանկարի պատճենում, որը 1920 թ. կատարել է նկարիչ Ա. Ա. Լվովը, և պահվում է Լենինգրադի Ռուսական թանգարանի ֆոնդերում, նշված է. «Հայքի լուսավորիչ Գրիգոր»: Ինչպես նշում է Ա. Յ. Կակովկինը, այդ բնորոշման ճշտությունը հաստատում են տվյալ պատկերի և Կոստանդնուպոլսի Պամմակարիստի ամենաերանելի Աստվածամոր եկեղեցու մատուռում (Ֆեթիե Ջամի մզկիթ) Լուսավորչի խճանկար պատկերի (XIV դ.) նմանությունը՝ միատեսակ արտաքին նշանները (դեմքի սառնությունը, մազերի սանրվածքը, երկտակված սեպաձև մորուքը) և սրբապատկերագիտական հատկությունները (այդ նկարի խաչերի ձևի նմանությունը): Սուրբի համանման պատկերը տեսնում ենք նաև Սեբաստիայի (Փոյուգիա) եկեղեցում, որը նախնական տվյալներով պատկանում է X դարին»[15]: Գրիգոր Լուսավորչի ևս մի պատկերը գտնվել է Նովգորոդից 10 վերստի վրա, Վոլխով գետի աջ ափին գտնվող Խուտինսկի վանքի Լուսավորչի անունը կրող եկեղեցու որմնախորշի որմնանկարում[16]:

Ուշագրավ է հայ սուրբի անունով եկեղեցու կառուցման բուն իսկ փաստը այդ հեռչակավոր վանքում, որ ինքնին հանդիսանում է Նովգորոդում Գրիգոր Լուսավորչի հատուկ պաշտամունքի վկայությունը:

Նովգորոդյան «6953 ամի» (1445 թ.) երրորդ տարեգրությունում Եվփեմիոս արքեպիսկոպոսի կողմից գրված է «Մեծն Հայքի Սուրբ Գրիգորի» եկեղեցու կառուցման մասին[17]: «7043 ամի (1535 թ.)» նույն տարեգրությունում հաղորդվում է, որ «հունիսի 15-ի օրը» օրհնվել է «Մեծն Հայքի Գրիգորի անվան» եկեղեցին[18]: Կարելի է կարծել, թե խոսքը արքեպիսկոպոս Եվփեմիոսի կառուցած եկեղեցու մասին է, որի շինարարությունը տևել է բավում տասնամյակներ և միայն 90 տարի անցնելուց հետո օրհնվել է[19]: Սակայն Նովգորոդյան 1539 թ. ժողովածուին առնչվող Վոսկրեսենսկի և Նովգերուսալիմսկի ընդօրինակության մեջ ռուսական տարեգրության հատվածում այդ իրադարձությունների մանրամասն շարադրումից պարզվում է, որ դա եղել է հետևյալ կերպ, սկզբում՝ 1445 թ. կառուցվել է կլորաձև ոչ մեծ եկեղեցի, իսկ 1535 թ. ապրիլի 11-ին հիմնադրվել է մի այլ եկեղեցի, որն օրհնվել է 1536 օգոստոսի 9-ին և իրենից ներկայացրել է եռաշարք աշտարակաձև մի շենք[20]: Այդ եկեղեցու նկարագրությունը պահպանվել է XVII դ. ճանապարհորդ Ադամ Օլեարիի ալբոմում և «Խուտինյան դպիր Տարասիի տեսիլքը» սրբապատկերում, որը պահվում է Նովգորոդի թանգարանում:

Այն հարցին պատասխան տալուց առաջ, թե ինչով է բացատրվում Գրիգոր Լուսավորչի անվան եկեղեցիների կառուցումը Խուտինյան վանքում, հետաքրքիր է դիմել Նովգորոդյան բնագիր գրականության վաղ երկերից մեկին՝ Նովգորոդցի Դոբրինյա Յադ-

---

[15] *Каковкин А. Я.*, Образ Григория Армянского..., с. 107—108.

[16] Там же, с. 107—108.

[17] ПСРЛ, т. III, СПб, 1841, с. 240.

[18] Նույն տեղը, էջ 249:

[19] Ի դեպ, նույն սխալն են թույլ տվել հայ-ռուսական պատմական ու կուլտուրական կապերի մի շարք հետազոտողներ:

[20] ПСРЛ, т. VI, СПб, 1853, с. 269. Խուտինյան վանքում երկու եկեղեցիների տարաժամկետ շինարարության մասին առաջինը նշել է Ղալփոխչյանը: (Армяно-русские культурные отношения..., с. 15).

ռեյկովիչի (Անդրեյկովիչի) «Ուխտագնաց» գրքին, որի հեղինակը հետո դարձել է այդ քաղաքի արքեպիսկոպոսը: Դեռ աշխարհական եղած ժամանակ նա 1199 թվականին ճանապարհորդություն է կատարել Կոստանդնուպոլիս (ռուսներն այդ քաղաքը կոչում էին Ցարգրադ)[21], այնտեղ հասել է 1200 թ. մայիսին և, ըստ երևույթին, այնտեղ մնացել մինչև խաչակիրների կողմից քաղաքի գրավումը (1204 թ. ապրիլի 12—13):

Դոբրինյա Յադրեյկովիչը ուշադրություն է դարձնում Սուրբ Սոֆիայի տաճարին, նրանում պահված կարևոր իրերին և դրանց հետ կապված ավանդություններին: Նկարագրելով տաճարի ներսի հարավային, արևմտյան, հյուսիսային կողմերում գտնվող վերնասրահները, նա գրում է. «...իսկ ոչ հեռու՝ Սուրբ Ավերկիոսի և **Մեծն Հայքի Գրիգորի** և Սիլվեստրոսի սրբապատկերները, նույն տեղում դրված են Կիոսի, Հովհաննեսի գլուխները, Սուրբ Սոֆիայի մյուս սուրբերի բալում մասունքները»[22]:

Դոբրինյա Յադրեյկովիչը Նովգորոդ վերադառնալուց հետո վարդապետ ձեռնադրվեց Խուտինսկի վանքում, անունը դարձրեց Անտոնի, 1211 թ. ընտրվեց Նովգորոդի արքեպիսկոպոս և որոշ ընդմիջումներով այդ պաշտոնում մնաց մինչև իր մահը՝ 1221 թ. սեպտեմբերի 8-ը: Ըստ ռուսական աղբյուրների իր ճանապարհորդությունից Դոբրինյա Յադրեյկովիչը բերել է «Աստծո դագաղը», այսինքն՝ «Աստծո դագաղի» չափը՝ դամբարանաձև կառուցված արկղ կամ սեղան, նրա վրա սրբական պաստառակալ դնելու համար[23], ինչպես նաև մի քանի այլ քրիստոնեական «սրբություններ»: Ա. Ի. Յացեմիրսկին «Արքեպիսկոպոս Անտոնիի Ցարգրադ կատարած ուխտագնացության նոր տվյալներ» հոդվածում նշել է, որ այդ հուշարձանի XV դարին պատկանող իր գրած ընդօրինակման մեջ հաղորդվում է, որ Անտոնին Ցարգրադում ստացել է որոշ սրբերի մասունքների մի մասը[24]: Խ. Մ. Լոպարևը «Ուխտագնաց գրքի» տեքստի ծանոթագրություններում նշում է, որ Դոբրինյա Յադրեյկովիչը Նովգորոդ է բերել Ս. Վլաս Սեբաստացու մասունքի մի մասը, Ս. Հովհաննես Աստվածաբանի գլխատակի քարի մի մասը[25] և Թեոդորոս Զորավարի շուրջառի մի մասը (որում գտնվում էր Գրիգոր Լուսավորչի կիսանկարը):

Սակայն առավել հետաքրքրություն է ներկայացնում ռուս հայտնի գիտնական Ֆ. Բրունի կարծիքն այն մասին, որ Նովգորոդի գլխավոր եկեղեցում՝ Ս. Սոֆիայի տաճարում, XIII դարի սկզբում արդեն **պահվում էր Գրիգոր Լուսավորչի մասունքի մի մասը,** որը Ցարգրադից բերել էր Դոբրինյա Յադրեյկովիչը: Ու թեև «Ուխտագնաց գրքի» մեկ հասած տեքստերից ոչ մեկում նման գրավոր նշում չկա[26], սակայն դատելով որոշ տվյալներից, բացառված չէ այդ հավանականությունը:

Նախ, հայտնի է, որ հունական տաճարներում սրբերի պատկերները հաճախ ծառայել են որպես նրանց վերաբերվող սրբությունների նշան (խորհրդանիշ): Այդպես է եղել Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի և մյուս եկեղեցիներում, ուր շատ սրբերի, այդ թվում նաև Գրիգոր Լուսավորչի որմնանկարները կետեղված էին նրանց մասունքների թաղման վայրերում: Հիշենք Ն. Ակինյանի վկայակոչած ավանդությունը՝ իտալական եկեղեցիներում, մասնավորապես Նարդոյ և Ապուլիա քաղաքներում, որոնցում գտնվում է Գրիգոր Լուսավորչի պատկերը, գտնվում են նաև նրա մասունքները[27]:

Երկրորդ՝ Նովգորոդում ևս ընդունված է եղել այն սովորույթը, որով եկեղեցի են կառուցել այն սրբի անունով, որի սրբություններն ունեցել են: Այսպես, 1407 թ. Նովգորոդ քաղաքի Սոֆիայի թաղամասում կառուցվել է եկեղեցի Ս. Վլասի անունով, որի մասունքների մի մասը Ցարգրադից բերել էր Դոբրինյա Յադրեյկովիչը: Այդ մասին է խոսում նաև XIV դարի կեսերում կառուցված Թեոդորոս Զորավարի եկեղեցին, որի շուրջառի մի մասը Նովգորոդ էր բերել նույնպես Դոբրինյա Յադրեյկովիչը: Հետևապես, Գրիգոր Լու-

---

[21] Անտոնիի մասին մանրամասն հաղորդվում է „Новгородская первая летопись старшего и младшего изводов" աղբյուրում (М.-Л., 1950) Մենք օգտվում ենք Պ. Սավվաիտովի կազմած ամփոփիչ տեղեկանքից: Տես՝ Путешествие новгородского архиепископа Антония в Царьград в конце XII столетия. С предисловием и примечаниями Павла Савваитова. СПб., 1872 (այսուհետև՝ Савваитов П.)

[22] *Савваитов П.*, с. 81 (ընդգծումը մերն է, Ղ. Ա.):

[23] *Տե՛ս* Новгородскую летопись под 1211 годом: «...и перевезе с собою гроб Господень». (ПСРЛ, т. XV, М.—Л., 1950, с. 250).

[24] ПОРЯС, т. IV, 1899, вып. I, с. 243.

[25] Православный палестинский сборник, т. XIII, вып. 3, 1899, с. XCV.

[26] «Ուխտագնաց գիրքը» մեզ հասել է XVI—XVIII դդ. ձեռագրերով, իսկ, հետևապես, հին գրականության մյուս հուշարձանների նման, չունի կայուն տեքստ, ընդօրինակվելիս ենթարկվել է ուղղումների, կրճատումների և այլն:

[27] **Ակինյան Ն.**, Հնագրագիտական հետազոտություններ, հատ 5, Վիեննա, 1955, էջ 27: Նշենք, որ Ապուլիա քաղաքից գտնվել է Գրիգոր Լուսավորչի կիսապատկերը:

սավորչի պատկերը Նովգորոդյան եկեղեցիներում և նրա անունով եկեղեցիների կառուցումը կարող են հիմք ծառայել ենթադրելու, որ Դոբրինյա Յադրեյկովիչը մյուս սրբերի թվում բերել է հայ սուրբի մասունքների մի մասը:

Նովգորոդի հետ է կապված Գրիգոր Լուսավորչի սրբապատկերների պատրաստումն ու տարածումը: Ինչպես դեռ Ա. Դ. Երիցովն է նշել «Սրբանկարչական բնագրերում», Նովգորոդյան XVI դարի վերջերի խմբագրությամբ, Պալեխի և Վլադիմիրի XVIII դարի սկզբի խմբագրությամբ (ավելի վաղ աղբյուրների հուշարձաններում) պահպանվել են նկարիչներին տրվող հրահանգները՝ Գրիգոր Լուսավորչին պատկերելու նորմաների մասին: Նրանցում ասվում է. «...արտաքինով շիկահեր է, ինչպես Բարսեղ Կեսարացին, մորուքը Բարսեղից ավելի բաց գույնի է, ալեխառն, շուրջառը եպիսկոպոսի է, եմիփորոնի ստորին մասը՝ կապտա-կանաչագույն է, ծխագույն, փորուրարը՝ բաց ոսկեգույն է, դեմքը մաղերով է ծածկված, ինքը՝ նիհար ու սև է»: Ա. Դ. Երիցովը դրան ավելացնում է. «Մեզ հայտնի չի այդ դիմանկարի սկզբնաղբյուրը, սակայն եթե նկարիչը կատարեր տվյալ հրահանգները, ապա հայ լուսավորիչ Գրիգորի կերպարը պետք է նկարեր արևելյան ոճով, դրանով իսկ ամենևին չմեղանչելով ո՛չ հայ ազգային ավանդույթների, ո՛չ էլ պատմական ճշմարտության պահանջների դեմ: Դա առավել ևս կարևոր է, քանի որ չնայած հայերի մոտ հնուց սրբապատկերագրության առկայությանը, ո՛չ նրանց, ո՛չ էլ հարևան վրացիների մոտ սրբապատկերների բնագրեր չեն եղել, կամ եթե եղել են, ապա դրանք առայժմ չեն հայտնաբերվել[28]: Սակայն ո՛չ Ա. Դ. Երիցովին, ո՛չ էլ հայ-ռուսական պատմական ու մշակութային կապերի հաջորդ հետազոտողներին չէր հաջողվել գտնել Գրիգոր Լուսավորչի սրբանկարները, և անհայտ է մնացել՝ նկարվե՞լ են արդյոք դրանք ռուս նկարիչների կողմից, թե չէ: Միայն վերջին տասնամյակում որոնումները հաջողությամբ պսակվեցին, գտնվել են հայ սուրբի մի քանի սրբապատկեր, ճիշտ է, դրանք վերաբերվում են XVI—XVII դարերին՝ նրա պատկերը տոնացույցում[29], ինչպես նաև մանրապատկերները՝ ժամերգության գրքերում: Սակայն դրանց մասին հետո:

Գրիգոր Լուսավորչի հատուկ պաշտամունքը Նովգորոդում իր արտահայտությունն է գտել նաև այնտեղ ստեղծված գրավոր հիշատակարաններում: Սոֆիայի ժողովածուի ձեռագրերի՝ Դ. Ի. Աբրամովիչի կազմած նկարագրության մեջ[30], հայ սուրբի հիշատակը նշվել է № 1 Յուղաբերից Ավետարանում, որը գրված է XII—XIII դարերի կանոնագրերով, տոնացույց-տոմարում սեպտեմբերի 30-ին (էջ 7). նույնը՝ № 2, № 3, № 5 Յուղաբեր Ավետարաններում, գրված XIV դ. կեսերի կանոնագրերով (էջ 15, 24, 33). նույնը № 7 և № 8 Յուղաբեր Ավետարաններում, կիսականոնական գրով XIV դարի վերջին—XV դարի սկզբին (էջ 42, 57): Այնուհետև, XV—XVIII դդ. այդ ոճի ձեռագրերի նկարագրության մեջ Դ. Ի. Աբրամովիչը սահմանափակվում է միայն սլավոնական և ռուս սրբերի հիշատակի նշումով, սակայն շատ ձեռագրերում սեպտեմբերի 30-ին նշված է «Մեծն Հայքի եպիսկոպոս սուրբ Գրիգորի» հիշատակը:

Գրիգոր Լուսավորչի (ինչպես նաև Հռիփսիմյան կույսերի) վարքի համառոտ, սակայն ավելի հաճախ մանրամասն նկարագրությունը տրվում է Սոֆիայի գրադարանի ձեռագրում և Հայսմավուրքում, Վ. Ի. Լենինի անվան գրադարանի Ձեռագրերի բաժնում, Մոսկվայում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Լենինգրադի գրադարանում, Պետական պատմական թանգարանում, Մոսկվա:

Հին ռուսական ձեռագրերի նկարագրության բացակայության պատճառով մենք թվարկեցինք XIII—XIV դարերի հուշագրերի միայն մի փոքր մասը, որոնցում նշվում է Գրիգոր Լուսավորչի հիշատակը և տրվում է նրա վարքը: Սակայն նույնիսկ ամենևին էլ ոչ լրիվ այդ տվյալների հիման վրա մենք իրավունք ունենք եզրակացնելու, որ հայ սուրբի վարքը լայնորեն ներկայացված է եղել նովգորոդյան գրականության մեջ: Ավելի ուշ XVI դարի առաջին կեսին արքեպիսկոպոս Մակարիոսը Նովգորոդում իր կազմած Մեծ Հայսմավուրքի առաջին (Սոֆիայի) խմբագրության մեջ մանրամասն տվել է «Հայաստանցի Գրիգորի» վարքը, որն այն պահից ի վեր մտավ ռուս դպիրների ընթերցանության ոլորտը:

Իսկ ի՞նչն է Նովգորոդում Գրիգոր Լուսավորչի առանձնահատուկ պաշտամունքի պատճառը: Ինչպես մենք ցույց տվեցինք մեր աշխատությունում, «Գրիգոր Հայաստանցու

[28] *Ерицов А. Д.*, Первоначальное знакомство с северо-восточной Русью до воцарения дома Романовых.—Кавказский вестник, Тифлис, 1901, № 12, с. 50.

[29] Ամեն ամիս ըստ ամսաթվերի մեծարվող սրբերի սրբանկարը (անձնական տոնացույց): Գրիգոր Լուսավորչի պատկերը անձնական տոնացույցում գտնվում էր սեպտեմբեր ամսում:

[30] *Абрамович Д. И.*, Софийская библиотека, вып. II, СПб., 1907. Հետագայում տեքստում բերվող վկայակոչումներում ցույց կտրվի էջը:

պաշտամունքը, Հայ հավատը և Հայ հերետիկոսությունը Նովգորոդում»[31] այն առաջացել էր Ռուսիայում առաջին մասսայական հերետիկոսությամբ, որն ստացել էր ստրիգոլնիկի անվանումը: Այն ծնունդ էր առել XII դ. վերջին—XIII դ. սկզբին, բացարձակ հանդես էր եկել XIV դ. կեսերին, այնուհետև, 1375 թվականին նրա ղեկավարների մահապատժից հետո, շարունակվել է XV դ. երկրորդ կեսի—XVI դարի սկզբի հերետիկոսների նոր շարժումով Նովգորոդում և Մոսկվայում: Առանց մանրամասնությունների մեջ մտնելու, նշենք, որ ռուս հերձվածողները կրել են հայ պավլիկյանների ուսմունքի որոշակի ազդեցությունը (ուստի և ըստ երևույթին, այս պատճառով Ռուսիայում հերետիկոսություններն անվանել են «Հայկական գայթակղություն»: Հունական Եկեղեցու նման, որը հայ պավլիկյանների դեմ պայքարելու նպատակով դիմել է Գրիգոր Լուսավորչի հեղինակությանը, նովգորոդյան եկեղեցին ռուս հերետիկոսների վրա գաղափարական ազդեցության, նույն նպատակով իր մոտ սահմանել է հայ սուրբի պաշտամունքը: Այս եզրակացությունը իր հաստատումն է գտնում և Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի բնույթում՝ Մոսկովյան Ռուսիայում XIV—XV դարերում, որը XVI դարի կեսերից փոխարինվել է որպես Հայաստանի քրիստոնեացման ականավոր գործչի նոր պաշտամունքով:

*
* *

Մոսկովյան պետության կազմավորման արդեն առաջին իսկ պահից Գրիգոր Լուսավորչի անունը սկսեց լայն հռչակ վայելել այնտեղ: Ռուս մեծ իշխան Վասիլի II Վասիլևիչի ժամանակին (1426—1462) վերաբերվող պաշտոնական փաստաթղթում՝ Ռուս Եկեղեցու բարձրագույն հոգևոր պետերի կողմից Գալիցկի և Ուգլիչի իշխան Յուրի Դմիտրիևիչին հասցեագրված 1447 թ. դեկտեմբերի 29-ի Ուղերձում խիստ նշանակալից կոնտեքստում հիշվում է նաև հայ սուրբը: Յուրի Դմիտրևիչին համոզելու համար, որ մեղսական է նրա երկպառակությունը Վասիլի II-ի հետ, Ուղերձի հեղինակները վկայակոչում են աստվածաշնչական Դավթին, Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորին, որոնք տուժել են այն պատճառով, որ «գոռոզացել են», այսինքն խախտել են Աստծո սահմանած օրենքը: Նույնն է «Հայ թագավոր Տրդատը, որը Մեծ Գրիգորին Խոր Վիրապ էր գցել, վարպետ էր դարձվել և երկու տարի գտնվել էր այդ կերպարում ու կերակրվել էր տականքներով, սակայն իր քրոջ աղաչանքով ներվել էր Մեծ Գրիգորի կողմից, կղջացել էր, ապաշխարել, մկրտվել (քրիստոնեություն էր ընդունել) ինքը ապա և մկրտել իր ողջ թագավորությունը[32]:

Գրիգոր Լուսավորչին դիմելու բուն իսկ փաստը վկայում է այն մասին, որ Մոսկովյան Ռուսիայում կյանքն ու գործունեությունը բավական լավ գիտեն: Դրա հետ մեկտեղ Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի, ինչպես նաև Դավթի ու Նաբուգոդոնոսորի օրինակները, հաստատելով Ուղերձի հեղինակների՝ «Աստծո պատժի» անխուսափելիության վերաբերյալ միտքը, հայ սուրբին ներկայացնում է որպես Աստծո կողմից հատուկ նշված անձ: Ի տարբերություն Կիևյան ու Նովգորոդյան Ռուսիայի, այստեղ Գրիգոր Լուսավորիչը ներկայացված է իր գլխավոր կենսագործունեությամբ՝ որպես հարազատ՝ Հայաստան երկրի միասնության ջատագով:

Վասիլի II-ի վավակ Իվան III-ի իշխանության օրոք (1462—1505), երբ XV դարի 80-ական թվականներին Նովգորոդում, իսկ այնուհետև Մոսկվայում երևան եկավ «ջհուդական»—«жидовствующие» հերետիկոսությունը, որն իր ուսմունքի շատ դրույթներով նման էր պավլիկյանությանը, Ռուս Եկեղեցին, հերձվածի դեմ պայքարելու համար վերստին դիմեց Գրիգոր Լուսավորչի հեղինակությանը:

Մոսկովյան Կրեմլի 1508 թվականին որմնանկարված Ավետյաց տաճարում ի թիվս հերետիկոսական շարժումների դեմ պայքարած քաջամարտիկների, նկարված է նաև Գրիգոր Լուսավորիչը:

Որմնանկարում Գրիգոր Լուսավորիչը կանգնած է, լրիվ երեսադեմ: Նկարի վերևի մակագրությունը պահպանվել է ոչ լրիվ՝ Մե(ծըն) Հա(յքի) (եպիսկոպոս):

Վասիլի III-ի վավակ Իվան IV ահեղի թագավորության օրոք (1538—1547) Կազանի թագավորության նվաճման և քաղաքի շրջապատման ժամանակ հայերի նրան ցույց տված օգնությունը[33] պատճառ դարձավ, որ

[31] *Ստ՛ս* сб. Русская и армянская средневековые литературы, Л., 1982, с. 255—332.

[32] Акты исторические, собранные и изданные Археологической комиссией АН, т. I. СПб., 1841, с. 82.

[31] ПСРЛ, – XIX (Казанский летописец), СПб., 1903; «Казанская история». М.—Л., 1954:
Իվան IV-ի Կազան կատարած արշավանքի վերաբերյալ պատմության տարեգիր հեղինակը, հաղորդելով քաղաքի շրջապատման ժամանակ հայերի վարքի մասին, ոչ մի խոսք չի ասում նրանց «այլադավանության» մասին, այլ, ընդհակառակը, նշում է նրանց հերոսությունն ու նվիրվածությունը ռուսներին: 1552 թ. սեպտեմբերի 30-ին Կազանի գրավումից

վերստին առաջնային դառնա հայկական եկեղեցին մարմնավորող սուրբի՝ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը:

Ի հիշատակ Կապանի թագավորության նվաճման, Իվան IV-ը 1554 թ. հրամայեց կառուցել Կրեմլից դուրս, Ֆրոլովյան (Սպասսկի) գլխավոր դարպասի մոտ Պոկրովի տաճարը, որպես կենտրոնական աշտարակը շրջապատող ութ աշտարակավոր վրանաձև քարաշեն տաճար-կոթող: Տաճարի ներսում



Մոսկվայի Պոկրովսկու տաճարի Գրիգոր Հայի եկեղեցու արտաքին տեսքը (1557 թ.)

կար ինը եկեղեցի, որոնցից մեկը նվիրված էր «Մեծն Հայքի եպիսկոպոս Գրիգորին»[34]:

Գրիգոր Հայաստանցու եկեղեցու չափերը ներսից՝ $6^1/_2 \times 3^3/_4$ մետր: Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյան կույսերի սրբապատկերները, ինչպես և ողջ եկեղեցու նախնական կահավորանքը, չեն պահպանվել, ըստ երևույթին այրվել են հրդեհի ժամանակ: Այժմյան եկեղեցում մենք մուտքի դիմացի պատին հայ սուրբի մեծադիր սրբապատկերն է՝ 1,5 մետր չափով, որը նկարված է XVIII դարում:

Հայաստանցի Գրիգորի եկեղեցին, ըստ երևույթին, հատկացված էր ռուս ուղղափառ համայնքին, և ոչ թե Մոսկվայում բնակվող միաբնակ հայերին[35]: Այն հանգամանքը, որ Իվան IV Ահեղը հատուկ նշեց հայ սուրբին և նրա անունով կոչեց տաճարի եկեղեցիներից մեկը, չի կարելի բացատրել միայն այն բանով, որ նրա հիշատակի օրը՝ սեպտեմբերի 30-ը, համընկել էր թաթարների հետ ունեցած վճռական մարտի օրվան, որը հաղթանակ էր բերել ռուսներին: Տաճարի եկեղեցիների հետագա բոլոր վերանվանումների ժամանակ, Հայաստանցի Գրիգորի եկեղեցին դարեր շարունակ մնացել է ռուս ժողովրդի սրբություններից մեկի՝ Պոկրովյան ու Վասիլի Երանելու տաճարի տանիքի տակ:

Գրիգոր Լուսավորչի հատուկ պաշտամունքը Մոսկովյան պետությունում արտահայտվում է այն բանով, որ բոլոր հայտնավուրքներում և նման տիպի այլ ժողովածուներում մտցվել էին նրա վարքը համառոտ կամ ընդարձակ խմբագրությամբ: Մենք չենք թվարկում դրանք և ցույց չենք տալիս դրանց պահման վայրերը՝ մեր հոդվածը չծանրաբեռնելու նպատակով: Ավելի կարևոր է մի այլ բան, որ բացի վարքագրական բնույթի երկերից, որոնք նշում էին տիեզերական և ռուսական եկեղեցիների կողմից կանոնացված սրբերին, Գրիգոր Լուսավորչի վերաբերյալ տվյալները մտել էին նաև զուտ պատմական երկերի՝ Տարեգրությունների և Ժամանակագրությունների մեջ, որոնք ստեղծելիս կատարվել է առավել էական նյութերի խստիվ ընտրություն՝ ըստ դրանք կազմողների քաղաքական տենդենցների: Այսպես, XV դարի վերջին կազմած Մազուրինյան տարեգրության մեջ[36], [5790] (282 թ.) գրված է. «Սույն թվականին հոգեվոր սուրբ նախավկա Գրիգոր Մեծ հայը, Դիոկղիտյան թագավորությունում, Կիրոսի՝ պարսից թագավորի ազգական, ծագումով պարթևացի Անատոլիի կավակ, ձերբակալված էր հայոց թագավոր Տրդատի կողմից և նետված էր Խոր Վիրապ, որը լի էր օձերով ու գազաններով, և այնտեղ եղավ 15 տարի, կերակրվում էր որբ և այրի կնոջ կողմից: Վիրապից հանվել էր ի տես ժողովրդի, շատերին քրիստոնյա էր մկրտել և խաղաղ հանգել Աստծո մոտ»[37]:

Գրիգոր Լուսավորչի և նրա գործունեության մասին ավելի մանրամասն պատմվել է «Ռուսական ժամանակագրության» մեջ՝

հետո Իվան IV-ը «գթասրտության» շնորհ արեց հայերին, թույլ տվեց նրանց բնակություն հաստատել Մոսկվայում, որտեղ նրանց տեղ հատկացվեց Սպիտակ քաղաքում, հատուկ արտոնություններ շնորհելով նրանց (ПСРЛ, т. XIX, с. 130, „Казанская история", с. 134—165).

[34] *Տե՛ս Канитохин А.* Покровский собор. М., 1980, с. 2.

[35] Ռուս-հայկական կապերի թեմայով գրող որոշ հեղինակների աշխատություններում կարելի է հանդիպել այն կարծիքին, թե տվյալ եկեղեցին կառուցվել էր հայ լուսավորչականների համար:

[36] См.: *Я. С. Лурье.* Общерусская летопись XIV—XV вв., Л., 1946, с. 177—182, 187—202.

[37] ПСРЛ, т. XXXI, М., 1968, с. 19—20.

արևմտառուսական խմբագրությամբ: Այն 1442 թվականին կազմել է Պախոմի Սերբը (Լագոֆետը)[38]:

Տվյալներ կան այն մասին, որ Սմոլենսկի՝ Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի օրոք (1645—1676) կառուցված վերափոխման Մայր տաճարի սրբությունների թվում եղել է նաև Գրիգոր Լուսավորչի սրբանկարը: [Տաճարի մեջտեղում՝ նրա կենտրոնում գտնվող չորս աշտարակներին կետեղված էին առաջինի (սրբապատկերաշարի աջ կողմի) աշտարակի վրա տաճարի գլխավոր տեսարժանը՝ Սմոլենսկի Ուղևոր (Одигитрии) Աստվածամոր սրբապատկերը, որն, ըստ ավանդության, սմոլենսկացիներին է նվիրել Վլադիմիր Մոնոմախը. դեպի հյուսիս շրջադարձի վրա՝ Նեոկեսարիացի Գրիգորի սրբապատկերը, աջակողմյան դասի դիմաց՝ Իոհանն Ողորմածի սրբապատկերը, շրջադարձում՝ «Մեծն Հայքի եպիսկոպոս Գրիգորի սրբապատկերները]: Գրիգոր Լուսավորչի սրբապատկերի դիրքը և նրա շրջապատը թույլ են տալիս եզրակացնելու, որ նա համարվել է առավել պաշտելի քրիստոնեական սրբերից մեկը[39]:

Սակայն Գրիգոր Լուսավորչի մեկ հասած. նույնիսկ սակավաթիվ սրբապատկերները ակնհայտ վկայում են, որ եթե ոչ բնակչության մեջ, ապա Ռուս Եկեղեցում նրանք տարածված էին: Նրանցից ամենահինը պատկանում է XVI դարավերջին—XVII դարասկզբին, նրա չափը 18,5×8,3 սանտիմետր է և այն պահվում է Մոսկվայի Կրեմլի թանգարանների նկարների ֆոնդում[40]: Լուսավորչի մինչև ծնկները և երեսադեմ սրբապատկերը սրբաապատկերագրական նույն տիպի է, ինչպես և Ավետյաց տաճարի որմնապատկերում: Վերևից երկտող սևատառ ավելված մակագրություն է. վերևի տողը անընթեռնելի է, ներքևի տողում «Григорий Армини»:

Գրիգոր Լուսավորչի մի այլ սրբապատկեր. որը մեզ սիրալիր կերպով զուգ տվեց Օ. Ա. Բեյոբրովան, պահվում է Լենինգրադի Պետական Ռուսական թանգարանում[41]. նա այնտեղ է բերվել ակադ. Ն. Պ. Լիխաչովի հավաքածուից և հրապարակվել է 1906 թվականին[42]: Սրբապատկերը ենթադրաբար պատկանում է XVII դարին, նրանում Գրիգոր Լուսավորիչը պատկերված է հասակով մեկ, 16 կլեմմաներում գրված վարքով, որոնցում տրված են հայ սուրբի կյանքի առանձին դիպվածները:

Ս. Գրիգոր Լուսավորչի սրբապատկերը Մոսկվայի Պոկրովսկու տաճարի Գրիգոր Հայի անունը կրող եկեղեցում (ԺԸ դար)

Ինչպես նշվեց, Գրիգոր Լուսավորչի նկարը եղել է նաև սրբապատկեր-տոնացույցներում, դրանցից է XVI դարավերջին—XVII դարասկզբին պատկանող սրբապատկերը, որը պահվում է Լենինգրադի Պետական Ռուսական թանգարանում[43], այն նկարագրված է «Մոսկվայի միահավատական Նիկողոսի վանքի XVII դարի անձնական տոնացույցում» սեպտեմբերի 30-ի օրը: Նկատենք, որ

[38] ПСРЛ, т. XXII, ч. II, ПТг, 1914, с. 86—87.

[39] Краткое историческое описание Смоленского Кафедрального собора. Смоленск, 1894, с. 21. Նկարագրության մեջ, ցավոք սրտի, չեն նշված սրբապատկերի նկարման ժամանակը և վայրը, մեզ չի հաջողվել պարզել նաև նրա գտնման վայրը ներկայումս:

[40] № 549/соб.

[41] ГРМ, ДРЖ № 779.

[42] *Лихачев Н. П.*, Материалы для истории русского иконописания. Атлас снимков, ч. II, СПб., 1906, табл. CC XVII, № 494.

[43] ГРМ, ПМ, № 6770.

թանգարանների պահարաններում և այլ հիմնարկներում գտնվող սրբապատկեր-տոնացույցներն դեռևս արվեստագետների և պատմաբանների հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել, ուստի և բացառված չեն նոր գյուտերը:

Մոսկվյան Ռուսիայում Գրիգոր Լուսավորչի ժողովրդականության ապացույցն են հանդիսանում ոչ միայն Նովգորոդյան XVII դ. «Սրբանկարչական բնագրերը», այլև հայ սուրբի նկարման պարտադիր նորմաների պատկանող նոր ձեռնարկները:





ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Մոտենում է ռուս ժողովրդի քրիստոնեացման հազարամյակը: Դա Քրիստոսի Ավետարանի նոր հաղթանակն էր համաշխարհային պատմության մեջ: Կարծում ենք մեր ընթերցողներին կհետաքրքրեն այդ պատմական կարևոր իրադարձության մանրամասնությունները: Ուստի թարգմանաբար (որոշ կրճատումներով) արտատպում ենք Ռուսական Պատրիարքարանի «Ժուռնալ Մոսկովսկոյ Պատրիարխիի» («Հանդես Մոսկվայի Պատրիարքարանի») պաշտոնաթերթի 1984 թ. 10 և 11-րդ համարներում լույս տեսած Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետի հոդվածը:

ՌՈՒՍԻՈ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսիո Մկրտությունը կամ Ռուսիայի կողմից քրիստոնեության ընդունումը աչքի ընկնող իրադարձություն էր ոչ միայն մեր Եկեղեցու, այլև մեր ժողովրդի պատմության մեջ: Այն կարևոր հետևանքներ ունեցավ մեր երկրի համար: Ռուսիո մկրտությունը ավարտին հասցրեց առաջին դարում սկսված և սլավոնական լուսավորիչներ Կիրիլի և Մեթոդիոսի ջանքերով ամրապնդված՝ մեր պետության տարածքում քրիստոնեության կայմավորման գործընթացը: Ռուս Ուղղափառ Եկեղեցու համար Ռուսիայի մկրտությունը նրա պաշտոնական գոյության սկիզբը եղավ:

Քրիստոնեությունը հոգևոր հիմք ստեղծեց Հին Ռուսական պետության միասնության համար: Ռուս Ուղղափառ Եկեղեցու ծառայությունը այդ ժամանակաշրջանում նշանակալից էր: Այն հսկայական ազդեցություն ունեցավ իշխանների միջև երկպառակությունների վերացման, իշխանությունները միասնական պետության մեջ միավորելու և նրա ամրապնդման, եվրոպական շատ պետությունների և առաջին հերթին Բյուզանդիայի ու Բուլղարիայի հետ Կիևյան Ռուսիայի կապերի ամրապնդման ու ընդլայնման վրա: Քրիստոնեության ընդունումից հետո Ռուսիայում ընդունվեցին այն ժամանակ Արևելքում գոյություն ունեցող եկեղեցական կազմակերպման ձևերը: Ռուսական պետությունը որդեգրեց Բյուզանդիայի պետական կազմակերպման ամենաբարձր ձևերը: Ռուսիան մտավ եվրոպական պետությունների ընտանիքը:

Քրիստոնեությունը վերափոխեց հին ռուսական հեթանոսական ընտանիքը քրիստոնեական բարոյականության սկզբունքներով: Այն իր պայծառ մարդասիրական կնիքը դրեց հին ռուսական քաղաքացիական օրենքների վրա՝ մեղմելով հեթանոսական բարքերը: Քրիստոնեությունը ոչ միայն արագացրեց տոհմական կարգերի վերացման գործընթացը, այլև նպաստեց ավատատիրական կարգերի զարգացման ընթացքին: Եթե խոսենք մեր երկրի մշակութային կյանքի վրա Ռուսիայի մկրտության ազդեցության մասին, ապա պետք է նշենք, որ այն արտացոլվեց այդ կյանքի բոլոր կողմերի վրա: Ամենից առաջ այն նպաստեց մեր Հայրենիքում լուսավորության տարածմանը: Ամենուրեք ծագող վանքերը (վանականությունը ուղղափառ կյանքի անկապտելի մասն է կազմում) դառնում էին ոչ միայն ուղղափառ հավատացյալների հոգևոր սնունդի կենտրոններ, այլ նաև գրի ու լուսավորության կենտրոններ:

Քրիստոնեության ընդունումից հետո Կիևյան Ռուսիայի կյանքի վրա էին ազդում բյուզանդական գրականությունը, քաղաքական միտքը, բնագիտական հայացքները և առաջին հերթին ուղղափառ դավանաբանությունը: 988 թվին քրիստոնեության ընդունման կապակցությամբ Ռուս Ուղղափառ Եկեղեցին կարիք ունեցավ հունարենից թարգ-

մանվող՝ եկեղեցաարարողական և եկեղեցալուսավորական գրքերի: Քրիստոնեությունը խթանեց Ռուսիայում սեփական գրի ու գրականության զարգացումը, որի օրինակ է Կիևի միտրոպոլիտ ավագ քահանա Իլարիոնի խորապես հայրենասիրական «Խոսք օրենքի և բարետրության մասին» երկը: Այն ժամանակ առատորեն ստեղծվում էր հին ռուսական մատենագրությունը: Դա հնարավորություն տվեց մեծ իշխան Յարոսլավ Իմաստունին (+1054) Սոֆիայի տաճարին կից ստեղծելու Ռուսիայում առաջին գրադարանը: 11-րդ դարում Կիևի և Նովգորոդի վանքերում գրվում էին համապետական նշանակություն ունեցող տարեգրություններ:

Մի քանի հարյուրամյակի ընթացքում Ռուսիայում ստեղծվեց բարձր մշակույթ, որը ծագեց ու ամրացավ հեթանոսական ժառանգության դեմ մղված պայքարում: Քրիստոնեությունը սլավոնական ժողովուրդներին հարստացրեց գիտական ու փիլիսոփայական նոր հասկացություններով, որոնք մինչ այդ նրանց հայտնի չէին: Արագացավ հին գրական ռուսերենի զարգացումը, որը, գրականագետների դիտողության համաձայն, «11-րդ դարի կեսերին իր արտահայտչական ու պատկերավորման հարստությամբ կգալիորեն գերազանցեց այն ժամանակվա եվրոպական աշխարհի շատ լեզուների»:

Քրիստոնեությունը համակողմանի ազդեցություն թողեց մեր նախնիների մշակութային կյանքի վրա՝ լուսավորության ու գրականության, նկարչության ու ճարտարապետության, պետական օրենքների ու քաղաքականության վրա և այլն: Քրիստոնեությունը սահմանեց մեր երկրի միջնադարյան մշակույթի հիմքը և դրանով սլավոնական քաղաքակիրթ աշխարհը և Կիևյան Ռուսիան կապեց Արևելքի ու Արևմուտքի քրիստոնյա ժողովուրդների քաղաքակիրթ շրջաններին: Քրիստոնեության մուտքի հետ Բյուզանդիայից Ռուսիա ներթափանցած մշակույթը շարունակեց զարգանալ սեփական ստեղծագործության հողի վրա: Դա նպաստեց Կիևյան Ռուսիայի պատմական ինքնորոշմանն ու համաշխարհային պատմական ընթացքի մեջ նրա կողմից իր տեղի բացահայտմանը:

ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԻՈ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

11-րդ դարի հին ռուսական մատենագրությունը վկայում է, որ սուրբ առաքելանման մեծ իշխան Վլադիմիրի օրոք Ռուսիայի մկրտությունը երբեք չի կարելի համարել մեր երկրում քրիստոնեության քարոզչության սկիզբը: Եկեղեցական ավանդությունը, ճիշտ է, ավելի ուշ ծագում ունեցող ավանդությունը, Կտակարանի ավետումը վերագրում է առաջին դարին, Անդրեաս առաքյալին: Ավելի լայն տարածում քրիստոնեությունն ստացավ սլավոնական լուսավորիչներ Կիրիլի և Մեթոդիոսի ռուսական առաքելության շնորհիվ: Սուրբ եղբայրների կողմից Աստվածաշնչի և արարողական գրքերի թարգմանությունը սլավոներենի նպաստեց Ռուսիայում քրիստոնեության զգալի տարածմանը: Գրավոր հուշարձանները վկայում են կիևյան իշխաններ Դիրի և Ասկոլդի օրոք՝ Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքի ժամանակներում (9-րդ դարի երկրորդ կես), և հատկապես Ռուսաստանի սուրբ բարեպաշտ իշխանուհի Օլգայի օրոք (955—969) Ռուսիայում քրիստոնեական տաճարների գոյության մասին: Վլադիմիր իշխանի օրոք քրիստոնեությունը համընդհանուր տարածում գտավ և դարձավ պետական կրոն:

Ռուսիայի մկրտության մասին մեզ պատմում են 11-րդ դարի տարբեր գրական հուշարձաններ: Դրանց թվին առաջին հերթին պատկանում է սուրբ հայր Նեստորի Տարեգրությունը, կամ այլ անվանումով՝ Սկզբնական տարեգրությունը: Ներկայումս չկա մի այնպիսի ձեռագիր, որտեղ Տարեգրությունը պահպանված լիներ այն տեսքով, ինչ տեսքով ելել էր հին ժամանակագրի գրչի տակից: Նրա ամենահին ընդօրինակությունները վերագրվում են 14-րդ դարին: Բոլոր հայտնի օրինակներում այն ձուլվում է նրա շարունակողների պատմության հետ, որոնք դեպքերի նկարագրությունը հասցնում են մինչև 16-րդ դար:

Արդեն 13-րդ դարի սկզբին Կիև-Պեչորյան վանքում գոյություն ուներ ավանդություն, որի համաձայն Կիևյան Տարեգրության հեղինակն է Կիև-Պեչորյան վանքի վանական Նեստորը: Նեստոր տարեգրի մասին Ակինդին վանահորը (1224—1231) ուղղված իր թղթում հիշատակում է նույն Կիև-Պեչորյան վանքի վանական Պոլիկարպը:

Կիև-Պեչորյան Մայրավանքում են գտնվում Նեստոր Տարեգրի մասունքները: Սրբի աճյունի կենսաբանական ուսումնասիրության հիման վրա եզրակացվել է, որ «թույլ զարգացած մկաններ ունենալով, այդ մարդը մեծ բեռնվածություն է կրել աջ ձեռքի դաստակի վրա, որ հիմք է տալիս ընդունելու, որ նա շատ գրելու առիթ է ունեցել» («Ռոդնիկի» հանդես, 1982, № 4, էջ 30): Այդ հայտնագործությունը հաստատում է Կիև-Պեչորյան վանքի հին ավանդությունն այն մասին, որ սուրբ հայր Նեստորը ռուս տարեգիր էր:

Ներկայումս Սկզբնական տարեգրությունը զանազան պատմական նյութերի հավաքածու կամ ժողովածու է: Նրա մեջ միավորված են

ամեն տարվա համար առանձին համառոտ գրառումներ, առանձին դեպքերի մասին ընդարձակ պատմություններ՝ գրված տարբեր հեղինակների կողմից, դիվանագիտական փաստաթղթեր, հոգևոր անձանց խրատաբանություններ: Տարեգրական հավաքածուի հիմքում որպես նրա գլխավոր բաղկացուցիչ մասեր ընկած են. 1) «Անցած տարիների պատմությունը», որ հասնում է մինչև 1054 թիվը, 2) «Ասք Ռուսիո մկրտության մասին», որը կետեղված է Տարեգրության 986—988 թթ. մեջ և կազմված է 12-րդ դարի սկզբին, և 3) Կիև-Պեչորյան Տարեգրությունը, որտեղ նկարագրված են 11-րդ և 12-րդ դարերի դեպքերը, մինչև 1110 թիվը ներառյալ:

«Անցած տարիների պատմությունը» կապակցված, ամբողջական շարադրանք է՝ վերջ տարեգրություններին հատուկ հնարներից: Այն սկսվում է ջրհեղեղից հետո Նոյ նահապետի որդիների կողմից աշխարհի բաժանման նկարագրությամբ՝ յուրաքանչյուրին հասած երկրների թվարկումով, աշտարակաշինությունից հետո ժողովուրդների տարաբնակեցման, Դանուբի հովտում սլավոնների հաստատման, արևելյան սլավոնների և Ռուսիայի տարածքում նրանց բնակեցման, Անդրեաս Նախակոչ առաքյալի շրջագայությունների, Կիևի հիմնադրման և այլ դեպքերի նկարագրությամբ: «Պատմությունը» կազմված է բյուզանդական ժամանակագիրների օրինակով, որոնք սովորաբար իրենց պատմելիքն սկսում են Հին Կտակարանի պատմություններից: Սկզբում «Պատմությունն» անընդմեջ շարադրանք է, առանց ժամանակագրական նշումների: Ժամանակագրական նշումներն սկսվում են միայն 852 թվականից: Գրական հուշարձանի այդ մասում ժամանակագրական տվյալներ կան նաև նախքան 852 թվականը, բայց դրանք պատմության հեղինակինը չեն, այլ մեխանիկորեն ներմուծված են հետագա ձեռքով: «Պատմության» մեջ նշում կա նրա ստեղծման ժամանակի վերաբերյալ: Նրա որոշ դիտողություններից կարելի է եզրակացնել, որ այն կազմվել է մինչև Յարոսլավի մահը, այսինքն՝ մինչև 1054 թվականը: Նրա սկզբնական հեղինակը կիևցի տարեգիր է եղել:

Սուրբ առաքելանման իշխան Վլադիմիրի օրոք «Ռուսիո մկրտության մասին ասքը» բաժանված է երեք տարվա՝ 986, 987 և 988: Այն նույնպես տարեգրության բնույթ չունի: Շարադրանքն աչքի է ընկնում բանավիճային եղանակով, և հավանաբար սկզբնական տարեգրի գործը չէ, այլ հավաքածու է ներմուծվել նրա կազմողի կողմից: Այնտեղ ակնարկություն է պահպանվել նրա կազմության ժամանակի մասին՝ 12-րդ դարի սկիզբ (1099 թվականից հետո, երբ խաչակիրները գրավել էին Երուսաղեմը): «Ռուսիո Մկրտության մասին ասքի» և սուրբ իշխան Վլադիմիրի քրիստոնեական գործունեության պատմության համար հիմնական աղբյուր է ծառայել սուրբ իշխան Վլադիմիրի հնագույն Վարքը՝ դեռևս չմարած ժողովրդական ավանդության հետ միասին:

Բացի Սկզբնական տարեգրությունից կան նաև 11-րդ դարից մի քանի հին գրական հուշարձաններ Վլադիմիրի մկրտության և մեր երկրի քրիստոնեացման մասին: Դրանցից առաջինը «Խոսք Օրենքի և բարետրության մասին» երկն է, որ պատկանում է Կիևի միտրոպոլիտ Իլարիոնի գրչին (նրա ստեղծագործությունն ընկնում է 1037—1050 թվերի միջև) և մեզ է հասել 14—15-րդ դարերի ընդօրինակություններով:

Միտրոպոլիտ Իլարիոնից հետո Իակով վանականը գրել է «Գովք Ռուսիայի իշխան Վլադիմիրին»: Նրա պատմական վկայությունը բավական կարևոր նշանակություն ունի: Նա Իպպասլավ իշխանի ժամանակակիցն էր և գրում էր մոտավորապես 1070 թվականին:

Իակով վանականին է վերագրվում նաև «Սուրբ Վլադիմիրի վարքը»:

«Վարքը» բաղկացած է երեք մասից: Առաջին մասում պատմվում է Վլադիմիրի մկրտության և նրա կողմից կիևցիների մկրտության մասին: Այստեղ խոսվում է հավատների ուսումնասիրության նպատակով Բուլղարիա ուղարկված պատվիրակության, Կորսունի վրա Վլադիմիրի արշավանքի, այդ քաղաքում նրա մկրտության և կիևցիների մկրտության մասին: Երկրորդ մասում պատմվում է Վլադիմիրի կողմից Կիևում հանուն Աստվածածնի Ծննդյան Տաճարորդական եկեղեցու կառուցման, իշխանի առաքինությունների, Բերեստովում նրա մահվան և Տաճարորդական եկեղեցում թաղվելու մասին: Երրորդ մասը պարունակում է Վլադիմիր իշխանի գովքը:

«Վարքը» Տարեգրության հետ համեմատելիս տեսնում ենք, որ այն համընկնում է Մկրտության պատմության հետ, միայն թե ավելի համառոտ տեսքով է տրված: Միաժամանակ «Վարքի» հեղինակը օգտվել է մեկ անհայտ ինչ-որ աղբյուրից, որից քաղել է Տարեգրության մեջ բացակայող որոշ փաստական տվյալներ և մի քանի թվականներ: «Վարքի» որոշ թվականներ չեն համապատասխանում Տարեգրության թվերին: «Վարքը» չի նշում Վլադիմիրի մկրտության տարին:

Հին ռուսական մատենագրության հուշարձանների թվին է պատկանում նաև «Ասք

սուրբ Բորիսի և Գլեբի նահատակության մասին» երկը՝ գրված մինչև 1072 թվականը, սուրբ հայր Նեստորի կողմից:

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՎԱՏԻՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴԱՐՁԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Նախքան Ռուսիայի ընդհանուր մկրտության մասին խոսելը անհրաժեշտ է անդրադառնալ Վլադիմիր իշխանի դարձին առ Քրիստոս: Ընդհանուր մկրտության ժամանակին մոտ ապրած ռուս հեղինակները բերում են իրական պատմական նյութը, որ բացատրում է Ռուսիայում տեղի ունեցած պատմական հեղաշրջման պատճառները:

Միտրոպոլիտ Իլարիոնը «Խոսք Օրենքի և Բարեգթության մասին» երկում, որ արտասանել է Տասանորդական եկեղեցում Վլադիմիր իշխանի դագաղի առաջ Յարոսլավ Իմաստուն իշխանի և նրա կին նորվեգուհի Իրինայի ներկայությամբ, Վլադիմիրի հոգու մեջ եղած շրջադարձը բացատրում է նրա հոգեկան տաղանդով և Սուրբ Հոգու բարեշնորհ լուսավորումով: Նա ցնցված է Վլադիմիր իշխանի խոր և խորհրդավոր դարձով՝ Քրիստոսի հավատի հալածչից նրա բոցաշունչ առաքյալին:

Միտրոպոլիտ Իլարիոնը ասում է. «Նրա (Վլադիմիր իշխանի) վրա իջավ Վերին այցելությունը, նրա վրա հանգավ Բարերար Աստծո ողորմած աչքը, և նրա սրտում պայծառացավ իմաստությունը: Նա հասկացավ կռապաշտական մոլորության ունայնությունը և որոնեց Միակ Աստծուն, երևելյաց և աներևույթից ստեղծողին: Իսկ հատկապես նա միշտ լսել էր ուղղափառ, քրիստոսասեր և հաստատահավատ Հունաց երկրի մասին, թե ինչպես այնտեղ պաշտում են Միակ Աստծուն Երրորդության մեջ և երկրպագում են նրան: Ինչպես այնտեղ կորություն, հրաշք ու նշաններ են կատարվում, ինչպես այնտեղ եկեղեցիները լի են մարդկանցով, ինչպես այդ հավատացյալների քաղաքներում ու շեներում բոլորը ջերմեռանդ աղոթում են, բոլորը Աստծո առաջ են: Լսելով այս ամենը, նա հոգով վառվեց և սրտով ցանկացավ քրիստոնյա դառնալ և ամբողջ երկիրը քրիստոնեության դարձնել»:

Վլադիմիր իշխանի դարձի հոգևոր շարժառիթների մասին վկայություն է տալիս Իակով վանականը «Գովք Վլադիմիրին» երկի մեջ: Նա ասում է, որ Վլադիմիրը լսել էր իր տատ Օլգայի մասին, թե ինչպես նա գնացել էր Ցարգրադ և այնտեղ Սուրբ Մկրտություն ընդունել: Այդ փաստի ազդեցությամբ «Վլադիմիրի սիրտը վառվեց Սուրբ Հոգով, ցանկանալով Սուրբ Մկրտության: Եվ Աստված տեսնելով նրա սրտի ցանկությունը, կանխատեսելով նրա բարությունը, ընկալեց նրան երկնից իր ողորմությամբ ու առատությամբ և լուսավորեց ռուսաց երկրի իշխան Վլադիմիրի սիրտը՝ ընդունելու Սուրբ Մկրտությունը»:

Սուրբ հայր Նեստորը ավելի է շեշտում Վլադիմիր իշխանի մկրտության հոգեկիր ժառանգորդականությունը: «Սուրբ Բորիսի և Գլեբի նահատակության ասքի» մեջ նա Վլադիմիր իշխանի դարձը փոխադրում է խորհրդավորի ոլորտը. «Ասում են այն տարիներին մի իշխան կար,—գրում է Նեստոր Տարեգիրը,—որ տիրում էր ողջ ռուսական երկրին, անվամբ Վլադիմիր: Արդար ու ողորմած մարդ էր աղքատների ու որբերի և այրիների հանդեպ, և հավատով էլ հելլեն... Այս Վլադիմիրին Աստվածային տեսիլ եղավ քրիստոնյա դառնալու»:

Սուրբ իշխան Վլադիմիրին ժամանակով մոտ եղած ռուս հեղինակները նրա՝ քրիստոնեության դարձի պատճառները տեսնում էին նրա կրոնական հավատի ճգնաժամի մեջ: Ֆիլարետ սրբազանը (Գումիլյովսկին, 19-րդ դար) իր «Եկեղեցական պատմության» մեջ այսպես է ներկայացնում Վլադիմիր իշխանի հոգեկան ճգնաժամը. «Ահավոր եղբայրասպանությունը, յուրայինների և այլոց արյան գնով ձեռք բերած հաղթանակները, նսեմ հեշտասիրությունը չէին կարող չծանրաբեռնել նույնիսկ հեթանոսի խիղճը: Վլադիմիրը փորձում էր հոգին թեթևացնել նրանով, որ Դնեպրի և Վոլխովի ափերին կուռքեր էր կանգնեցնում, զարդարում դրանք ոսկով ու արծաթով, պարարտ զոհեր էր մատուցում դրանց: Ավելին, նույնիսկ երկու քրիստոնյայի արյուն էր հեղել կուռքերի զոհասեղանին: Բայց այդ ամենը, ինչպես նա զգում էր, հանգիստ չէր բերում նրա հոգուն, հոգին լույս էր փնտրում ու խաղաղություն»:

Վլադիմիր իշխանի տարեգրական Վարքի մեջ ընդգծվում է նրա անսահման ցանկասիրությունը, որով գերազանցում էր Սողոմոնին: Հիշատակում է և այն մասին, որ նա բռնանում էր նրա մոտ ուժով բերված կանանց ու աղջիկների ողջախոհության վրա: Հեթանոս Վլադիմիրի այդ արատը հայտնի էր նաև Ռուսիայի սահմաններից դուրս: Այսպես, Վլադիմիրին ժամանակակից լեհ տարեգիր Տիտմար Մերսեբուրգցին նրան «անչափելի ու դաժան ջնացող» է անվանում: Սուրբ հայր Նեստորը ապաշխարող Վլադիմիրի բերանն է դնում այսպիսի խոսքեր. «Գայլանի նման եղա, բալում չարիք գործեցի պղծությամբ և անասունի պես ապրեցի»:

Վլադիմիրի որդի Սվյատոպոլկը ծնվել է այն հույն գերի միանձնուհուց, որը նրա եղբայր Յարոպոլկի կինն էր արդեն այն ժամանակ, երբ սա քրիստոնյա էր: Տարեգիրը

980 թվականի տակ գրում է. «Վոլոդիմերը պառկեց եղբոր կնոջ՝ հելլենուհու հետ և սա հղացավ, և նրանից ծնվեց Սվյատոպոլկը: Բայց մեղսավոր արմատից չար պտուղ է լինում, մանավանդ որ նրա մայրը միանձնուհի էր եղել: Իսկ երկրորդ՝ Վոլոդիմերը պառկել էր նրա հետ ոչ ըստ ամուսնության (այսինքն՝ նրա հետ ամուսնացած չէր), այլ շնալով: Հայրն էլ նրան չէր սիրում, քանզի երկու հորից էր՝ Յարոպոլկից և Վոլոդիմերից»:

Ո՞վ գիտե, Վլադիմիրի գերած այդ հույն վանական քույրը չնպաստե՞ց արդյոք նրա դարձին: Պատմական շատ օրինակներ հաստատում են քրիստոնյա կանանց ազդեցությունը իրենց հեթանոս ամուսինների վրա: Պրոֆեսոր Ե. Ե. Գոլուբինսկին այսպիսի ընդհանրացում է անում. «Կանանց ընդհանրապես կարևոր դեր է հատկացվում Եվրոպայում քրիստոնեության տարածման գործում. ֆրանկների թագավոր Խլոդվիգի դարձը վերագրվում է նրա կին բուրգունդցի Կլոտիլդին, անգլոսաքսերի թագավոր Էդիլբերգինը՝ նրա կին՝ ֆրանկյան իշխանադուստր Բերտային, Վլադիմիրին ժամանակակից հունգարացի թագավորներ Գեյզայի և Ստեֆանի դարձը վերագրվում է նրանց կանանց՝ լեհերի թագավորի քույր Ադելհայդին և Գիվլային: Վլադիմիրի չեխ կանանց, ովքեր էլ որ նրանք լինեին, անշուշտ հայտնի էր Լեհաստանում Դոմբրովկայի վարքագծի և հաջողությունների մասին, այդ պատճառով էլ նրանց համար բնական էր նրան հետևելը»: Պրոֆեսոր Ե. Ե. Գոլուբինսկին նկատի ունի լեհերի թագավոր Մեչեսլավի մկրտությունը նրա կին Դոմբրովկայի՝ չեխ թագավոր Բոլեսլավի դստեր ազդեցությամբ: Հիշատակելով հեթանոս Վլադիմիրի երկու չեխ կանանց մասին, Գոլուբինսկին դատում է այսպես. «Հնարավոր է, որ այդ երկու չեխուհիներից մեկը նույնիսկ իշխանական ծագում ուներ, և Դոմբրովկայի մերձավոր ազգականուհին էր: Եթե իշխանադուստրը կնության էր տրվել հեթանոս Մեչեսլավին, ապա կարող էր տրվել և Վլադիմիրին: Այս վերջին դեպքում կրտսեր իշխանադուստրը բնականաբար իր կոչումը պիտի տեսներ այն բանի մեջ, ինչ հաջողվել էր ավագ իշխանադուստրը (Դոմբրովկային)»:

Բացի ամուսնական ազդեցություններից Վլադիմիրի վրա կարող էր ազդեցություն թողնել և նրա կապը սկանդինավյան ազգականների և եվրոպական մյուս (վարյագական) արքունիքների հետ: Այս օտարերկրյա արքունիքների հետ ունեցած կապը Վլադիմիրն օգտագործում էր բարեշրջությունների և Կիևյան պետության կալվավորման նպատակով: Այդ կապերի և ազդեցությունների թերևս մշուշապատ, բայց գուցե իր տեսակի մեջ միակ արտացոլումն է իսլանդերեն լեզվով սկանդինավյան սագաներից մեկը Օլավ Տրիգգվեսոնի մասին: Օլավը Նորվեգիայի կոնունգ (այսինքն թագավոր) Տրիգգվեի որդին էր: Տրիգգվեի կին Աստրիդը, պալատական հեղաշրջման ժամանակ փրկվելու համար փախչում է Գարդարիկիա (այսինքն՝ տառացիորեն՝ գորոդների, գարդերի, ռուսերեն՝ «քաղաքների երկիրը»՝ սագաների մեջ ռուսական երկրի հյուսիսային շրջանի սովորական անվանումը): Գարդարիկիայում կոնունգ Վալդեմարի մոտ ապրում է Աստրիդի եղբայր Սիգուրդը: Օլավը մեծանում է Վալդեմարի արքունիքում որպես սիրված որդեգիր՝ Վալդեմարի կին Ադոգիայի՝ «կոնունգի ամենախելացի կնոջ» խնամքի տակ:

Օլավը ուղևորվում է հույների մոտ: Այնտեղ նա դաստիարակվում է քրիստոնեական հավատով և մկրտություն ընդունում: Մկրտությունից հետո Օլավը Պավել եպիսկոպոսին հրավիրում է իր հետ Գարդարիկիա գնալ: Եպիսկոպոսը համաձայնում է, բայց խնդրում է Օլավին առաջինը գնալ և կոնունգ Վալդեմարին համոզել, որ նա թույլատրի Գարդարիկիայում քրիստոնեություն տարածել: Մկրտություն ստացած Օլավը, վերադառնալով Վալդեմարի մոտ, սկսում է նրան և նրա կնոջը համոզել քրիստոնեություն ընդունելու:

Բոլոր այս փաստերը պատմությանը չեն հակասում: Նորվեգիայի թագավոր Օլավ Տրիգգվեսոնը (993—995) այն տարիներին մկրտություն էր ընդունել և օտար երկրներում իր երկար ճամփորդություններից վերադառնալով, մկրտել էր և իր ժողովուրդը: Չի կարելի ժխտել, որ Գարդարիկիայում, այսինքն՝ Ռուսիայում եղած ժամանակ նա իրոք կարող էր լինել Վլադիմիր իշխանի վրա նրա կանանցից մեկի միջոցով ազդած անհատական քարոզիչներից մեկը:

Այսպիսով, ռուսական աղբյուրների մեծամասնության վկայությամբ Վլադիմիր իշխանի դարձը քրիստոնեության տեղի է ունեցել ներքին և արտաքին շատ պատճառներով:

Ինչ վերաբերում է Վլադիմիր իշխանի և Ռուսիայի մկրտության մասին Տարեգրության պատմածին, ապա եկեղեցու պատմաբանները գտնում են, որ այն, թեև պատմական հավաստի նյութ է պարունակում, սակայն տարեգրության բնույթ չունի: Այնտեղ վետեղված պատմությունը հավատների ընտրության և Կիևից տարբեր երկրներ ուղարկված դեսպանությունների մասին հեղինակի հորինածը չէ:

Դեսպանությունների ուղևորումը Կիև հաստատվում է պատմական տվյալներով տարբեր կրոնների ներկայացուցիչների կողմից,

ինչպես նաև ռուսների ծանոթությունը մահմեդականությանը, հուդայականությանը և արևելյան ու արևմտյան քրիստոնեությանը՝ իրենց տեղերում միանգամայն իրական ու հավաստի փաստ է:

Բայց շարադրման ձևը բանավիճային բնույթ ունի և ավելի ուշ հեղինակի է պատկանում և ոչ թե սկզբնական տարեգրին:

Ռուսական աղբյուրները հերքում են Տարեգրի նշումը Վլադիմիր իշխանի՝ Կորսունում մկրտվելու մասին:

Մասնավորապես Իակով վանականը «Վլադիմիր իշխանի գովքի» վերջում ասում է. «Սուրբ Մկրտությունից հետո երանելի իշխան Վլադիմիրը ապրեց 28 տարի: Մկրտության հաջորդ տարին գնաց սահանքները: Երրորդ տարում Կորսուն քաղաքն առավ: ...Հինգերորդ տարում Պերեյասլավը պաշարեց: Իններորդ տարում երանելի և քրիստոսասեր իշխան Վլադիմիրը իր անունից Սուրբ Աստվածածնի եկեղեցուն տասանորդ ընծայեց»:

Ինքը տարեգրությունը հիմք է տալիս կասկածելու պատմածի ճշգրտությանը: Տարեգրության հեղինակը, այդ պատմությունը ներմուծելով Տարեգրության բնագրի մեջ, չի թաքցնում, որ ռուսական միջավայրում իշխանի և ժողովրդի մկրտության մասին բազմապան ավանդություններ կան: Կորսունում Վլադիմիր իշխանի անձնական մկրտության մասին հաղորդելիս Տարեգրության մեջ մըտցրված պատմության հեղինակը ավելացնում է. «Ոմանք՝ ճշմարիտը չիմացողներն ասում են, որ նա մկրտվել է Կիևում: Ուրիշները կարծում են՝ Վասիլևում: Ուրիշներն էլ այլ կերպ են ասում»: Վասիլևը կամ Վասիլկովը Վլադիմիրի անձնական կեցավայրն էր Կիևից 35 կմ հեռու: Որ Վլադիմիրն անձամբ մկրտվել էր իր ժողովրդից առաջ և գրեթե երեք տարի նախքան Կորսունի պատերազմը, հայտնի էր 11-րդ դարի ռուս հեղինակներին:

Կիևի իշխանը Սուրբ Մկրտությունն ընդունել էր Կորսունի նվաճումից առաջ, հետևաբար, Ռուսիայի ընդհանուր մկրտությունից առաջ: Տարեգրության մեջ չի հիշատակվում Վլադիմիր իշխանի մկրտության թվականը: Բայց Իակով վանականի (Վլադիմիրի գովքում) և սուրբ հայր Նեստորի (Բորիսի և Գլեբի վարքում) վկայությամբ Վլադիմիրը մկրտվել է 987 թվին: Իակով վանականն ասում է, որ Վլադիմիրը վախճանվել է 1015 թվին, մկրտությունից հետո ապրելով 28 տարի, հետևաբար, նա մկրտվել է ոչ ավելի վաղ, քան 987 թվականը: Իսկ սուրբ հայր Նեստորը Վլադիմիրի մկրտության տարին նշում է 6495 թվականը աշխարհի ստեղծման օրից, այսինքն՝ 987 թվականը Քրիստոսի ծնունդից հետո:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(МАЙ 1985 г.)

1. Послание Католикоса всех армян Вазгена I главе Русской Православной Церкви Патриарху Пимену об организации встречи глав и представителей религиозных общин в СССР по случаю 40-летия Великой Победы, 4 сентября 1984 г. (стр. 3—4).

2. Ответ главы Русской Православной Церкви Его Святейшества Патриарха Пимена на послание Католикоса всех армян Вазгена I от 4 сентября 1984 г., 19 марта 1985 г. (стр. 5—6).

3. **Корреспондент**—Совещание глав и представителей церковных и религиозных общин в г. Москве и Загорске, посвященное 40-летию славной победы в Великой Отечественной войне, 17—19 апреля 1985 г. (стр. 7—13).

4. Приветственное слово Католикоса всех армян Вазгена I, направленное съезду духовенства восточной епархии США, 2 мая 1985 г. (стр. 14).

5. Приветственное слово Католикоса всех армян Вазгена I, направленное делегатскому собранию восточной епархии США, 2 мая 1985 г. (стр. 15).

6. **Редакционная**—Радость победы (стр. 16—17).

7. Патриотическая деятельность первопрестольного Эчмиадзина в годы Отечественной войны (издание материалов и документов)—(стр. 18—34).

8. Беседа с представителями армянской интеллигенции по поводу 40-летия Великой Победы (стр. 35—39).

9. Отклики дней войны. Некоторые работы армянских писателей, написанные в годы войны (стр. 40—45).

10. **Э. Казарян**—Мы победили во имя мира —(стр. 46—52).

11. **Г. В. Айвазян**—Культ Григория Просветителя в Древней Руси (исследование)—(стр. 53—62).

12. Статья митрополита Киевского и Галицкого Филарета под заглавием «Происхождение Русской Церкви» (перепечатанная из 10—11 номеров I часть журнала «Журнал Московской Патриархии» за 1984 год)—(стр. 63—68).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(MAY 1985)

1. The message of His Holiness the Catholicos of All Armenians to His Holiness Pimen, the chief of the Russian Orthodox Church, to organize a meeting of the chiefs and representatives of U.S.S R.'s religious communities, on the occasion of the great victory's fortieth anniversary, 4-th September 1984 (pages 3—4).

2. The answer of His Holiness Patriarch Pimen to the Catholicos of All Armenians, 19-th March 1985 (pages 5—6).

3. Conference in Moscow and Zagorsk of the chiefs and representatives of U.S.S.R,'s church and religious communities, devoted to the 40-th anniversary of the glorious victory of the Second World war, 17-19-th April 1985 (pages 7—13).

4. The word of greeting of Catholicos Vasken I, addressed to the conference of clergymen to the eastern diocese of the United States, 2-nd May 1985 (page 14).

5. The word of greeting of Catholicos Vasken I, addresed to the assembly of delegates of the eastern diocese of the United States, 2-nd May 1985 (page 15).

6. **Editorial**—The joy of the victory (pages 16—17).

7. The patriotic activity of the Mother See of Holy Etchmiadzin during the years of the Second World war (publication of documents and texts)—(pages 18—34).

8. Interview of the „Etchmiadzin" journal's correspondent with the representatives of the Armenian intelligentsia on the occasion of the great victory's 40-th anniversary (pages 35—39).

9. Echoes from the days of war. Some works of the Armenian poets written during the years of the war (pages 40—45).

10. **E. Ghazarian**—We have conquered in the name of peace (pages 46—52).

11. **Gh. V. Ayvazian**—The worshipping of St. Gregory the Illuminator in Ancient Russia (study)—(pages 53—62).

12. **Metropolitan Filaret**—„The origin of the Russian Church" (reprinted from the issues of Nos. 10—11 of 1984 „Journal Moscowskoy Patriarkhy" official organ, part I)—(pages 63—68).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MAI 1985)

1. Message du 4 septembre 1984 de Sa Sainteté Vasken Ier adressé à Sa Sainteté le Patriarche Pimen, chef de l'Eglise orthodoxe russe, pour organiser une conférence des chefs et des représentants des Eglises et des communautés religieuses de l'U.R.S.S. à l'occasion du 40e anniversaire de la grande victoire remportée sur le fascisme en 1945 (pages 3—4).

2. Lettre-réponse du 19 mars 1985 de Sa Sainteté le Patriarche Pimen adressée à Sa Sainteté Vasken Ier (pages 5—6).

3. La conférence des chefs et des représentants des Eglises et des communautés religieuses de l'U.R.S.S. tenue du 17 au 19 avril 1985 à Moscou et à Zagorsk et consacrée au 40e anniversaire de la grande victoire (pages 7—13).

4. Message de Sa Sainteté adressé le 2 mai 1985 au Congrès des ecclésiastiques du diocèse des Arméniens des Etats Unis (région orientale) — (page 14).

5. Message de Sa Sainteté adressé le 2 mai 1985 à l'Assemblée des délégués du diocèse des Arméniens des Etats Unis (région orientale) — (page 15).

6. **Editorial:** "La joie de la victoire" (pages 16—17).

7. Activités patriotiques du Saint-Siège d'Etchmiadzine au cours de la Deuxième Guerre Mondiale (publication des textes et des documents) — (pages 18—34).

8. Interview du correspondant de la revue "Etchmiadzine" avec les représentants de l'intelligentsia arménienne à l'occasion du 40e anniversaire de la grande victoire (pages 35—39).

9. Echos des années de guerre. Quelques poèmes inédits des poètes arméniens écrits au cours de la Deuxième Guerre Mondiale (pages 40—45).

10. **E. Ghazarian** —"Nous avons remporté la victoire au nom de la paix" (pages 46—52).

11. **Ch. V. Alvazian** —"Le culte de Saint Grégoire l'Illuminateur dans l'ancienne Russie" (étude) — (pages 53—62).

12 **Métropolite Filaret** —"Origine de l'Eglise russe" (traduction de la première partie de l'article paru en 1984, No. 10—11, dans la revue „Journal Moskovskoi Patriarkhii", organe officiel du Patriarcat de Moscou) — (pages 63—68).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղերձը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին՝ Մեծ հաղթանակի քառասունամյակի առթիվ ՍՍՀՄ Եկեղեցիների և կրոնական համայնքների պետերի և ներկայացուցիչների հանդիպում կազմակերպելու մասին 3

Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի պատասխանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղերձին՝ Մեծ հաղթանակի քառասունամյակի առթիվ 5

ԹՂԹԱԿԻՑ—ՍՍՀՄ եկեղեցական և կրոնական հարանվանությունների պետերի և ներկայացուցիչների համաժողով՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի փառապանծ հաղթանակի 40-ամյակին 7

Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Հայրապետի ողջույնի խօսքը ուղղեալ Միացեալ Նահանգաց արևելեան թեմի հոգևորականաց համագումարին 14

Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի խօսքը ուղղեալ Միացեալ Նահանգաց արևելեան թեմի պատգամաւորական ժողովին 15

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հաղթանակի բերկրանքը 16

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեությունը Հայրենական պատերազմի տարիներին 18

Հարցապրույց հայ մտավորականության ներկայացուցիչների հետ Մեծ հաղթանակի 40-յակի առիթով 35

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՑ

Հովհաննես Շիրազ—Էքսպրոմտ 40

Գևորգ Էմին—Խաչը 41

Ասատուր Մնացականյան—Հրաժեշտ 42

Ցանկություն 43

Սիլվա Կապուտիկյան—Երևանի լույսերը 44

Ավետիք Իսահակյան—Մեծ հաղթանակի օրը 45

Է. ՂԱԶԱՐՅԱՆ—Մենք հաղթանակել ենք հանուն խաղաղության 46

Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ—Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Հին Ռուսիայում . . . 53

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՖԻԼԱՐԵՏ—Ռուս Եկեղեցու ծագումը 63

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 69

«Etchmiadzin» official journal of Holy Etchmiadzin 70

«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 71

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26.03.1985 թ.: Ստորագրված է տպագրության 7.05.1985 թ.: Տպագրական 4,5 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 240:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1985 թ.